


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Եղիշե Բուրանյան

ԻՄ ԱՆՅՅԱԼԻ ՀՈՒՇԵՐԻՑ.
ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ

ԵՐԵՎԱՆ 2013



Եղիշե Բուրանյան



**РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
ИНСТИТУТ ИСТОРИИ**

Егише Буранян

**МОИ ВОСПОМИНАНИЯ О ПРОШЛОМ
ТРАГЕДИЯ ВАСПУРАКАНА**

**ЕРЕВАН
ИНСТИТУТ ИСТОРИИ
2013**

980062

344.925

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Եղիշե Բուրանյան

ԻՄԱՆՅՅԱԼԻ ՀՈՒՇԵՐԻՑ.

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ

798922



ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇԿԵԱՆ
ՄԱՏԵՆԱԾԱՐ

91



ARCH. MESROB ASHJIAN
BOOK SERIES

91

ԵՐԵՎԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
2013

ՀՏԴ 941 (479.25)

ԳՄԴ 63.3 (2Հ)

Բ 990

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Ներածությունը և ծանոթագրությունները՝

պ.գ.թ. Ռուբեն Գասպարյանի և պ.գ.թ. Ռուբեն Սահակյանի

Բուրանյան Ե.,

Բ990 Իմ անցյալի հուշերից. Վասպուրականի ողբերգությունը/ Ե. Բուրանյան.

– Եր.: ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2013. – 121 էջ:

Գրքում ներկայացված է վասպուրականցի Եղիշե Բուրանյանի (1874–1958) անտիպ հուշերը Վան-Վասպուրականի 1890-ական թվականների և 1915 թ. ցեղասպանության և ինքնապաշտպանական մարտերի մասին: Հեղինակն անձամբ ականատես է եղել մի շարք կարևորագույն դեպքերի և իրադարձությունների, որոնց մասին տալիս է հավաստի տեղեկություններ: Նա ներկայացնում է իր հուշերում վասպուրականցիների կենցաղի, մշակութային կյանքի հետ կապված մի շարք մանրամասներ: Գիրքը նախատեսված է պատմաբանների և ընթերցողների լայն շրջանակի համար:

ISBN 978-99941-73-74-7

ՀՏԴ 941 (479.25)

ԳՄԴ 63.3 (2Հ)

©Պատմության ինստիտուտ, 2013

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Վանի նահանգի Արճակ գյուղի բնակիչ Եղիշե Բուրանյանը (1874–1958 թթ.) այն հայորդիներից մեկն է, որ ցեղասպանության հետևանքով լքելով իր հայրենի ծննդավայրը, շարունակում էր պահպանել իր ջերմ և անկեղծ հուշերը նրա մասին: Այնքան մեծ է եղել նրա սերն իր բնակավայրի՝ Երկրի մասին, որ չի ծուլացել և ժամանակ է գտել ու քղթին է հանձնել իր հուշերը, որոնք մեր օրերում ձեռք են բերում անգնահատելի արժեք:

Ե. Բուրանյանի և նրա հարազատների ճակատագիրը գրեթե ամբողջությամբ նման է արևմտահայ գաղթականության ճնշող մեծամասնության ճակատագրին: Ապրել են հանապազօրյա կյանքով, զբաղվել հողագործությամբ և մասամբ անասնապահությամբ: Հնարավորության դեպքում պայքար են մղել զանազան քրդական ավագակախմբերի դեմ: 1915 թ. հուլիսյան գաղթի ժամանակ կորցրել են հարազատներին: Գաղթի ճանապարհին տիֆից մահանում են Ե. Բուրանյանի մայրը և կինը: Նա իր երեք երեխաների և երկու եղբայրների՝ Ենոքի և Արտաշեսի հետ ապաստան են գտնում Արևելյան Հայաստանում:

Ռուսական կայսրությունում կրել են հայ գաղթականներին վիճակված բոլոր փորձությունները, ապա՝ տեղափոխվել են Թիֆլիս՝ Ռուսաստան: Այստեղ Ե. Բուրանյանը կարողանում է հիմնել իր սեփական գործը՝ հրուշակեղենի արտադրություն:

Խորհրդային տարիներին, երբ իշխանությունները հրաժարվում են Նոր տնտեսական քաղաքականությունից (ՆԷՊ, ՆՏՔ) և բռնագրավում են Ե. Բուրանյանի սեփականությունը, նա հարկադրված է

լինում գալ Թիֆլիս, իսկ 1931 թ. վերադառնալ Երևան: Այստեղ ծնվում են նրա երկու երեխաները՝ Կառլենը (1931 թ.) և Զնարիկը (1932 թ.):

Հուշերի հեղինակը գորգուրանքով, կարելի է ասել թուփ առ թուփ, վանք առ վանք, ծառ առ ծառ նկարագրում է Վասպուրականը: Նրա վկայությունները կարևոր են նրանով, որ Ե. Բուրանյանն անդրադառնում է անձամբ ականատես եղած և կամ հավաստի աղբյուրներից լսած դեպքերին և իրադարձություններին: Բացի այդ, նա չի սահմանափակվում 1890-ական և 1915 թվականներին Վասպուրականում ընթացող իրադարձությունները նկարագրելով, այլև այդ դեպքերի հետ կապված զուգահեռներ է անցկացնում Սասունի կամ Զեյթունի նույն ժամանակահատվածի իրադարձությունների հետ: Այսինքն, նա փորձ է անում պատմականության տեսանկյունից ներկայացնել Արևմտյան Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունները՝ համադրելով և վերլուծելով այս կամ իրադարձության հետ կապված դեպքերը:

Հետաքրքիր է նաև հուշերի հեղինակի տեղեկացվածությունը նշված ժամանակահատվածում ընթացող քաղաքական իրողություններից: Հուշերի ուսումնասիրությունից հետևում է, որ նա ստացել է բավականին լավ կրթություն, չնայած այդ մասին որևէ տեղեկություն չի հայտնում: Կարելի է ենթադրել, որ Արճակից Վան տեղափոխվելուց հետո Ե. Բուրանյանը հաճախել է քաղաքի դպրոցներից մեկը:

Բացի այդ, հստակ երևում է, որ Ե. Բուրանյանը բավականին ժամանակ է ունեցել զբաղվելու ինքնակրթությամբ: Մի շարք դեպքերի և իրադարձությունների նրա վերլուծությունները, այս կամ այն պատմական իրադարձության հետ նրա կատարած համեմատությունները, վկայում են բավականին խորը գիտելիքների և պատմական մի շարք դեպքերի ու իրադարձությունները պատկերացնելու և վերլուծելու մասին: Զգացվում է, որ նա ուշադիր հետևել է 1950-ական թվականներին հրատարակվող պատմագիտական գրականությանը: Կարելի է ենթադրել, որ Ե. Բուրանյանը կամ ունեցել կամ էլ կարողա-

ցել է հայթայթել նախախորհրդային տարիներին հրատարակված գրականությունը:

Նման հուշեր գրելու համար պետք էր որոշակի քաղաքացիական քաջություն: Ճիշտ է, Ե. Բուրանյանը հուշերն ավարտել է 1956 թ., երբ Ի. Ստալինի անձի պաշտանմունքի քննադատությունից հետո քույլ էին տրվել որոշակի «ազատություններ», սակայն հստակ երևում է, որ նա ավելի վաղ է սկսել հուշերի վրա աշխատելը: Ինչպես վկայում են նրա հարազատները, Ե. Բուրանյանն ունեցել է նաև այլ գրառումներ, որոնց ճակատագիրն անհայտ է:

Նրա գրառումներում բացի վերը նշվածից պահպանվել են նաև որոշ ժողովրդական պատմության պատառիկներ, որոնք մենք նպատակահարմար գտանք ներկայացնել հուշերի վերջում:

Ինքնին հասկանալի է, որ 1950-ական թվականները տարբերվում էին ստալինյան բռնակալության տարիներից, սակայն մարդիկ շարունակում էին զգուշանալ իրենց տեսակետը կամ զնահատականը հայտնել այս կամ այն իրադարձության կամ պատմական որևէ դեմքի մասին: Դա էր պատճառը, որ Ե. Բուրանյանը հնարավորություն չուներ ամենայն մանրամասնությամբ անդրադառնալ հատկապես այն դեպքերին ու իրադարձություններին, որոնք վերաբերվում են հայ ազգային ազատագրական շարժմանը, ազգային կուսակցությունների, հատկապես Հայ Յեղափոխական Դաշնակցությանը, տարբեր կուսակցական և հասարակական գործիչներին: Սակայն, «քննադատության» հետ միասին, Ե. Բուրանյանը տալիս է հայ եկեղեցական և հասարակական խոշոր գործիչ Մկրտիչ Խրիմյանի, ազատագրական շարժման և պետական ականավոր գործիչ Արամ Մանուկյանի և այլոց անաչառ զնահատականը: Ե. Բուրանյանի՝ որպես ականատեսի, վկայությունը կարևոր է նրանով, որ նա կտրականապես հերքում է Ա. Մանուկյանին ներկայացվող անհիմն և սին ամբաստանությունները, որոնք վերաբերում են Դավոյի դավաճանությանը և 1915 թ. հուլիսյան տխրահռչակ նահանջին:

Մենք շնորհակալություն ենք հայտնում Ե. Բուրանյանի թոռ Արմեն Բուրանյանին, որը սիրահոժար տրամադրեց մեզ իր պապի հուշերը տպագրության համար:

Ե. Բուրանյանի հուշերը տպագրվում են առաջին անգամ, ուղղագրական և կետադրական որոշ շտկումներով, սակայն ոճը պահպանելով: Հուշերի վերնագիրը հեղինակինն են: Բոլոր ընդգծումները փաստաթղթինն են: Մեր միջամտությունները կատարվել են ուղղագիծ փակագծերով:

Եղիշե Բուրանյանի հուշերի բնագիրը պահպանվում են Արմեն Բուրանյանի ընտանեկան արխիվում:

Ռուբեն Գասպարյան
պատմական գիտությունների թեկնածու

Ռուբեն Սահակյան
պատմական գիտությունների թեկնածու

«Նեապոլից հետո անպայման
մեկ անգամ պետք է տեսնել Վանը և հետո մեռնել»
Հենրի Լինչ

ՀԵՂԻՆԱԿԻ ԱՌԱՋԱԲԱՆԸ

Ես ծնվել եմ Վանի նահանգի Արճակ կոչված գուտ հայաբնակ գյուղում 1874 թ. հունվարի 6-ին՝ բարեկեցիկ ընտանիքում:

Իմ ծնողները [նախնիները] Շահ Աբասի¹ ժամանակ Տաճկաստանից [Օսմանյան կայսրություն՝ Արևմտյան Հայաստանից]² տարագրվել են Պարսկաստան³: Տաճկահայ [արևմտահայ] այդ ողջ մնացած մի փոքր զանգվածը՝ մեծամեծ աղետներից ազատված, հիմնում է իր համար մի նոր ավան՝ անվանելով Նոր Ջուղա⁴, քաղաք Պարսկաստանի մի բանուկ շրջանում:

Հայ տարագիր ժողովուրդը առաջին անգամ չէ, որ անմեղ զոհ է դարձել մահմեդական բարբարոսությանը: Դարեր շարունակ հայ ժողովուրդը տանջվել ու տառապել է, բայց միևնույն ատեն, կարողացել է պահպանել իր գոյությունը՝ իր ամուր համբերության, ջանասեր աշխատանքի և ընդունակության շնորհիվ: Պահելով իր նախնայաց կրոնն ու հավատը, և մինչև օրս [հաղթահարելով] ամեն խոչընդոտ-

¹ Շահ Աբաս I (1571–1629 թթ.), Պարսկաստանի շահ 1587–1629 թթ.:

² Արևելյան Հայաստանից:

³ Ի նկատի ունի 1604–1605 թթ. պարսից շահ Աբաս I-ի կողմից իրականացված հայ բնակչության զանգվածային բռնագաղթը:

⁴ Շահ Աբաս I-ը բռնագաղթված ջուղայեցիներին բնակության համար տրամադրում է մայրաքաղաք Սպահանի մոտ, Ջանդարոթ գետի հարավային կողմում գտնվող տարածքը: Դրա մի մասը տրվում է որպես արքունական պարզև, իսկ մի մասն էլ ըստ պայմանի, հայերը պետք է գնեին: XVIII դ. սկզբներին Նոր Ջուղան ուներ մոտ 30 հազար բնակիչ: Շինարար, ստեղծագործող և առևտրական ջուղայեցիները մի բանի տարվա ընդմիջումից հետո շարունակում են Հին Ջուղայի դարավոր մշակույթն ու արվեստը, հիմնում են Ամենափրկիչ վանքը և 17 այլ եկեղեցիներ, բացում դպրոցներ, ստեղծում են հազարավոր գեղազարդ խաչքարեր: 1647 թ. Նոր Ջուղայում Հովհաննես վարդապետը բացում է տպարան: Նոր Ջուղան դառնում է հայ մանրանկարչության նշանավոր կենտրոններից մեկը: Ինչպես Հին Ջուղայում, այնպես էլ նոր բնակավայրում, հայերի կյանքում առաջնակարգ տեղ է գրավում առևտուրը:

ներ, ուր էլ որ լինի, արիաքար պայքարում ու նոր կյանք է կերտում՝ առանց հուսահատվելու: Եվ որպես ապացույց Տաճկաստանից¹ տարագրված, ջալանված, կողոպտված, հրից, սրից ճողոպրած՝ մի ափ [բութ] հայ գաղթականությունն իր անդուլ աշխատանքով վերաշինեց մի նոր անվերի, ամնշակ բնակավայր՝ վերածելով շեն քաղաքի, և որը կոչվեց Նոր Ջուղա քաղաք:

Վայրենաբարո պարսկական աշխարհում հայ տարագիր ժողովուրդը՝ որպես շինարար, կարճ ժամանակում իր արհեստի ընդունակությամբ, վաճառականությամբ [Նոր Ջուղան] դարձրեց առաջնակարգ ավան Պարսկաստանում: Բայց պարսկական ավերիչ ձեռքը այդ ավանի ժողովրդին ևս թույլ չտվեց երկար վայելելու իր ժրաջան աշխատանքի պտուղը: Թալան, կողոպուտ, սպանություն, բռնություն թուրք սարքագների², սեյիդների³, մոլլաների ու պետական ամեն մի պաշտոնյաների ոտնձգությունների ամենատվորական ասպարեզ դարձրին այդ բարգավաճ քաղաքը, որ հայ ժողովրդի անդուլ աշխատանքով կառուցվեց: Այլևս ո՛չ անձի և ո՛չ գույքի ապահովություն, այլ՝ բացարձակ անիշխանություն: Մեյիդների և մոլլաների սանձարձակությունները, օրը ցերեկով թալանությունն ու սպանությունը սովորական երևույթ դարձան: Իսկ հայ տարաբախտ ժողովուրդը, որպես հյու և անընդունակ պայքարելու չարագործ բռնության դեմ, ամենայն անտարբերությամբ համբերում և տանում էր պարսկական այդ անլուր բռնությունն ու կամայականությունը⁴:

¹ Արևելյան Հայաստանից:

² Պարսկերեն՝ հետևակ զինվոր:

³ Սաիդ արաբերեն բառ է, որը նշանակում է առաջնորդ, պարոն: Դա պատվավոր կոչում է մահմեդականների շրջանում: Սաիդներն ունեն հատուկ արտոնություններ և կրում են կանաչ չալմաներ, քանի որ համարվում են Մոհամեդ մարգարեի սերունդները: Նրանք իրավունք ունենին քննադատել միապետներին նրանց սխալների համար:

⁴ Հեղինակը չափազանցում է հայ ժողովրդին ամբաստանելով դիմադրության անընդունակ լինելու մեջ: Նա հաշվի չի առնում, որ բռնագաղթված հայերը շրջապատված էին զանազան մահմեդական ցեղերով և իրենց նույնիսկ չնչին «անհնազանդությունը» կարող էր ազդանշան համդիսանակ ոչ միայն բռնությունների, այլև կոտորածի: Նրա վկայակոչած օրինակն ապա-

Եվ ահա մեր առաջավոր [բարեկեցիկ] գերդաստանը գլխովին զոհը դարձավ պարսկական էնդրիճքին¹։ Մի գիշեր պարսիկի հռչոտված, մեռած դիակ գցելով մեր բնակարան [տուն] և այդ սպանության մեջ մեր պապերին՝ ամբաստանելով, առանց դատ ու բատաստանի՝ խուժում են մեր բնակարան [տուն] և սրի անցկացնում [քաշում] մեծ ու փոքրին և կողոպտում մեր ամբողջ կայքն ու կարողությունը՝ առանց պատասխանատվության ենթարկվելու պարսկական իշխանությունից։ Այդ քսան անձից բաղկացած ընտանիքից ազատվում են միայն երկու եղբայր, որոնք աղետի վայրում չէին գտնվում, լսելով իրենց գերդաստանի անակնկալ կոտորածի [մասին], հուսահատության մատնված գիշերով փախուստ են տալիս դեպի թուրքական սահման և պատահաբար հասնում են Արճակ կոչված գյուղ՝ ապաստան են գտնում ազգակիցների մոտ, և այդպիսով փրկվում։

Այդ երկու հասուն եղբայրները, զրկված իրենց տուն ու տեղից, որպես այդ երկրին՝ գյուղին օտարականներ, առանց հուսահատվելու ձեռնամուխ են լինում աշխատանքի։ Որպես հասուն և քիչ թե շատ կրթված հուժկու երիտասարդներ, գյուղական բնակիչների բարյացակամ վերաբերմունքի շնորհիվ մի փոքր ժամանակամիջոցում ստեղծում են բարեկեցիկ վիճակ իրենց նոր հայրենիքում։

ցույցն է այն անիշխանության և կամայականության, որ տիրում էր Պարսկաստանում։

¹ Խարդավանքին։

ԱՐՃԱԿ ԳՅՈՒՂԻ ՏԵՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Այս գյուղը¹ գտնվում է Պարսկաստանի սահմանից ոչ շատ հեռու, մի աղի լճի ափին², և կոչվում է նաև ծով, ([նրա] ափին) [որը հայտնի է իր] տափարակ հսկայական տարածություն ունեցող արտավայրերով և վարելահողերով: Հարուստ է նաև առատ ջրերով: Այնպես որ, իմ պապերը զրկված լինելով նյութական կարողություններից և զուրկ էին մեծ ձեռնարկությունների ձգտել, գնահատելով այդ բնակավայրի հարմարությունները և առավելությունները, վերջնականապես վճռում են մշտական բնակություն հաստատել այդ գյուղում, քան՝ ապրել քաղաքում:

Եվ որպես ուշիմ, գիտակից երիտասարդ ուժեր՝ [նրանք] ձեռնարկում են երկրագործության և մի փոքր [կարճ] ժամանակում մեծ հաջողության են հասնում և արգասաբեր հողի շնորհիվ, և ստեղծում [ունենում] են իրենց սեփական գութանն ու արորը: Մշակում էին դարերով անմշակ մնացած խոպան հողեր: Չեղք են բերում ընդարձակ արոտավայրեր և ընդարձակում իրենց տնտեսությունը, ունենալով ոչխարի հոտեր, և՛ կաթնատու անասուններ և՛ մշակող [լծկան] կենդանիներ:

¹ Արճակ գյուղը գտնվում է Արևմտյան Հայաստանի Վանի նահանգում, Արճակ գավառում, Արճակ լճի հարավ-արևելյան ափին: 1909 թ. ուներ 160 տուն հայ բնակիչ, որոնք զբաղվել են այգեգործությամբ, երկրագործությամբ, անասնապահությամբ, մասամբ՝ մեղվաբուծությամբ: Գյուղը տեղական ճամապարհով կապված է եղել Վանի հետ: Ուներ եկեղեցի և մախակրթարան: Բնակիչները գործում մասնակցություն են ունեցել Վանի 1915 թ. ապրիլ-մայիս ամիսների ինքնապաշտպանությանը: Բնակչության մի մասը գոհվել է Եղեռնի տարիներին, իսկ մյուս մասը գաղթել է Արևելյան Հայաստան և Հյուսիսային Կովկաս:

² Արճակ, Արճիշակ, անհոսք լիճ Վանա լճից արևելք, 1750 մ բարձրության վրա: Մակերեսը 100 կմ քառ. է, իսկ խորությունը՝ 5-ից 10 մետր: Լիճն է թափվում Արճիշակ գետը: Լիճը ծնունդ ստեղծակալում է: Ռուս նշանավոր գրող Մերգել Գորոդեցկին հետևյալ կերպ է նկարագրել Արճակ լճակը. «Հիշում եմ, առաջին անգամ էի Արճակում: Արճակ լիճը Վանա լճի մախերգանքն է՝ գողտրիկ օղեղեն, մեղմածուխ, բնանկարի մման առնված լեռների շրջանակի մեջ», տե՛ս Городецкий С., Об Армении и армянской культуре, Ереван, с. 61-62.

Անթիվ է երկրագործի ձեռք բերած հարստությունն իր ձեռնարկությունում, եթե չար ձեռքերը խոչընդոտ չհանդիսանային: Բայց, դժբախտաբար, բռնատիրական աշխարհում գյուղացին և աշխատավոր ժողովուրդն իր կյանքի, իր գույքի տերը չէ, անպակաս են բռնավորի սուրը աշխատավորի գլխին: Գյուղացին դժբախտաբար դառն դատած դատարկ նստում է, որովհետև բոլոր կողմերից հափշտակում են հայ աշխատավորի քրտնաջան աշխատանքի պտուղը: Քուրդ անաշխատավոր ժողովուրդը գայլի ախորժակով է մոտենում հայ գյուղացու ունեցվածքին: Թուրք բռնակալ պետությունն իր սոված, անգործ պաշտոնյաների անկուշտ որովայն է լցնում շինականի արդար քրտինքի պտուղը: Վաշխառու քաղաքացին է կողոպտում միամիտ գյուղացու դառը աշխատությունը [արդյունքը]։ միով բանիվ հա կողոպտում ու թալանում խեղճ գյուղացուն, և դրա համար է, որ գյուղացին միշտ աղքատ է և նրա ընտանիքը տկուր և սոված: Բացառություն են կազմում այն գյուղացիները, որոնք գիտակցաբար են վարում իրենց տնտեսական գործերը՝ պահպանելով իրենց զգոնությունը թե՛ բռնակալներից, և՛ թե՛ զանազան կողոպտիչներից, փրկում են իրենց արդար վաստակն իրենց համարձակությամբ, գիտակցությամբ և ոչ խոնարհությամբ:

Ես մեջբերում եմ մի քանի օրինակներ, որոնք ապացույցն են իմ կարծիքի:

Ինչպես վերը նշեցի, մեր գերդաստանը պարսկական բարբարոսության խնդիրքի զոհ դարձավ, և երկու եղբայրներ մազապուրծ այդ ջարդից, ապաստանեցին թուրքական [հայկական] Արճակ կոչված գյուղը, բայց չնոռացան իրենց գերդաստանին հասցրած աղետը և այս նոր հայրենիքում զգոնությունն ու համարձակությունը ձեռք բերելու եղավ նրանց իդեան [որը օգնեց] պահպանել իրենց ձեռք բերած աշխատանքի պտուղը:

Պապա՝ Օհանը, բնավորությամբ մեղմ, որպես լավ գյուղատնտես, վարում էր իր երկրագործական աշխատանքն ինչպես լավ ... [մեկ բառ ընթեռնելի չէ], իսկ նրա մեծ եղբայրը, թեև լավ երկրագործ էր, բայց միևնույն ատեն, հանդուգն, գործնական մարդ հանդիսա-

ցավ գյուղում և հետագայում կոչվեց մելիք Մկո: Իր համարձակ գործունեության շնորհիվ մեծ համարում ձեռք բերեց շրջակա քուրդ բեկերի շրջանում, սանձահարեց քրդական ոտնձգություններից, մանավանդ շեյխ Ջելալեդինի արշավանքի պահին: Երբ շեյխ Ջելալեդինն իր հորդաներով Վան քաղաքը ասպատակեց, և Վանի շրջակա գյուղերը ասպատակելով հասավ Արճալի մոտ, մոտ երկու ժամվա հեռավորության վրա կանգ առավ, իր վրանը խփեց՝ իր թալանչի գորքին հանգիստ տալու համար, մելիք Մկոն տեսնելով իր շրջանի զխի՛ն գալիք անխուսափելի աղետը, ըստ տատիս պատմածի, մելիքը պատրաստվում է աղետի առաջ առնել և իր շրջանից մի քանի աչքի զարնված գյուղապետեր և մի քանի ընտրելի ոչխար առաջը զցած, հեծնելով իր մծույզը, նախնական [նաև] զենքով զինավորված, մզրախը¹ ձեռքին դիմում է դեպի շեյխի վրանը և իր առաջապահներից դրկած շեյխին [մոտ], որ ընդունի այդ շրջանի մելիք Մկոյի այցելությունը: Երբ պատգամավորները հայտնում են մելիքի այցը, շեյխը զարմացած հրամայում է, որ անարգել ընդունեն մելիքին և մելիքին առաջնորդում են շեյխի վրանը: Մելիքը ամենայն համարձակությամբ, զինվորված ներկայանում է շեյխին՝ նրան բարի գալուստ շնորհավորելու [մաղթելու] և հրամայում է ոչխարները մատաղ անեն շեյխի հաջողության համար: Շեյխը մնում է հիացած այդպիսի հսկայատիպ համարձակության վրա, մելիքի այդպիսի հսկայական համարձակությամբ: [Մելիքը] երկար խոսակցություններից հետո խնդրում է շեյխին, որ իր շրջանի գյուղերը ազատ [զերծ] մնան իր հորդաների ասպատակություններից, և շեյխը հարգելով նրա խնդիրը հրամայում է իր հորդաներին շրջադարձ կատարեն և այդ շրջանի հայկական գյուղերը չմտնել: Եվ միևնույն ատեն, որպես քաջ մարդու՝ մի թանկագին շալ արայով պարգևատրում է և ճանապարհում: Մելիքն իր մարդկանցով վերադառնում է գյուղ և այսպիսով փրկում իր շրջանի գյուղերը՝ ի զարմանա շրջանի [գավառի] քուրդ բեկերի, որոնք պատրաստվում էին մասնակից լինել շեյխ Ջելալեդինի ասպատակներին,

¹ Նիզակ:

[նրանք] ոչ միայն հուսախաբ են լինում, այլ սկսում են ավելի զգուշ վերաբերվել դեպի այդ շրջանի գյուղերը: Այսպիսով մեկիք Մկոն՝ որպես ազդեցիկ անձնավորություն, երկար ատեն հովանավորեց [պաշտպանեց գավառակը] քուրդ ավազակներից [մինչև] իր մահը՝ 1890 թիվը:

Իր [մեկիք Մկոյի] մահից հետո սկսվում է քրդական բեկերի կապկալված ձեռքերը [ազատ են արձակվում կապանքներից], և [նրանք] սկսում են ազատ մուտք գործել հայկական շեներ, [սակայն] ոչ բացարձակ, այլ՝ գողունի: Թեև իմ հայրը փոխարինեց մեկիքին, բայց չունեցավ այն քաջությունն ու համարձակությունը, ինչ նրա հորեղբայրը և առաջին հարվածը մեր տան գլխին կատարվեց [խասցվեց]: Մեր շրջանի Մազրուկ¹ կոչված քրդական գյուղի Մուսառաֆա բեկը, որպես մեր տան կողքին [ընակվող] մոտիկ հարևան, մի անպիտան քուրքամուղ դավաճան Վանից՝ Պետրոս անվամբ հայի առաջնորդությամբ, այդ չարագործ բեկը գողանում է մեր երկու հարյուրից ավելի ընտիր ոչխարները: Թեև հայրս իրազեկ է լինում, որ իր դրացիի օժանդակությամբ է կատարված այդ գողությունը, բայց անճարակ է գտնվում վրեժխնդիր լինելու ...²: Դիմումները պետական իշխանությանն անօգուտ են մնում: [Հայրս] վճռում է թողնել գյուղը՝ իր տնտեսությունը, հանձնելով հավատարիմ ձեռքերի և ընտանիքով տեղափոխվել քաղաք՝ ապահով լինելու համար, մանավանդ պապիս մահանալու պատճառով: Պապս՝ որպես հեռատես և փորձված մարդ, ժամանակին քաղաքում [Վանում] Խաչ-փողոց կոչված փողոցում [զնեղ էր] բարեկեցիկ [հարմարավետ] երեքհարկանի տուն իր ամբողջ հարմարություններով: Եվ մեր ընտանիքն ապահով վիճակում ապրեց ժամանակավոր մինչև հորս անակնկալ մահը՝ 1895 թվին, իսկ 1896 թվին ծագեց Վանի պատերազմը³, կոտորածը Սասունի հայկական ջարդերից հետո¹:

¹ Մազրիկ:

² Մեկ մախադասությունը ընթերցելի չէ:

³ Նկատի ունի 1896 թ. հունիսի 3-ից մինչև հունիսի 8-ը քուրք ջարդարարների դեմ Վանի հայության ինքնապաշտպանությունը: Հայոց դիմադրության առիթը հան-

Մասունի կոտորածը տեղի ունեցավ 1895 թվի աշնանը: Թե ինչը առիթ ներկայացավ Մասունի կոտորածին, մի առ մի պարտք են համարում գոհացնել հարգելի ընթերցողին:

Ըստ իմ քաղած հաղորդումների՝ թուրքական մի խումբ ոստիկաններ հարկահավաքի անվան տակ մտնում են Մասուն և սկսում են բռնություններ գործ դնել ոչ թե տուրքի գանձման համար, այլ ապստամբ ճանաչված սասունցիներին ահաբեկելու, իրենց ճիվաղային բարբարոսությունները գործի դնելու [համար]: Մասունի քաջ ժողովուրդը, չտանելով նրանց գործ դրած բռնությունները, ջենդերմեներին² և հարկահավաքին սրախողխող կանեն, և համոզված, որ թուրք կառավարությունը չպիտի անպատիժ թողնի սասունցիների կատարածը³, Մասունի քաջ մարտիկները պատրաստվում են օր առաջ վտանգի առաջն առնելու: Վստահ իրենց անառիկ դիրքերին՝ իրենց փոքրիկ ուժերով, քաջարի ղեկավարների կազմակերպությամբ

դիսացավ հունիսի 3-ից 4-ը թուրք հրոսակների կողմից հայերի վրա հարձակումը և նրանց ունեցվածքի կողոպուտը: Հայ ազգային կուսակցությունները՝ Արմենական, Հնչակյան և Դաշնակցություն մախաձեռնում են հայ բնակչության պաշտպանությունը:

¹ Նկատի ունի 1894 թ. օգոստոսի սկզբներին սկսած սասունցիների ինքնապաշտպանությունը: Կոնվների ընթացքում թուրք-քրդական գերակշիռ ուժերը՝ կանոնավոր բանակը և քրդական զինված ջոկատները կատաղի մարտերի ընթացքում կարողանում են ճնշել մոտ երկու հազար զինված հայերի դիմադրությունը: Վերջիններս պաշտպանում էին 20 հազարից ավելի խաղաղ բնակչությանը: Հակառակորդը դաժան հաշվեհարդար է տեսնում սասունցիների հետ: Կոտորածներ են տեղի ունենում նաև Մուշի որոշ հայկական գյուղերում: Սպանվում են տաս հազար խաղաղ բնակիչներ: Ավերվում և կողոպտվում են շուրջ 40 հայկական գյուղեր: Կոտորածները շարունակվում են մինչև սեպտեմբեր:

² Ֆր. ժանդարմ, ոստիկան:

³ Մասունի ազատասեր բնակչությանը վերջնականապես իրեն ենթարկելու և Արևմտյան Հայաստանի ազատագրական կենտրոններից մեկը վերացնելու նպատակով, թուրքական կառավարությունը որոշում է տնտեսական պարտադրանքի պատրվակով պատեհ առիթ գտնել հարձակվելու համար: Մակայն սասունցիները հրաժարվեցին վճարելուց՝ պատճառաբանելով իրենց որոշումը քրդական ցեղերի մշտական հարձակումներով: Մասունի դիմադրական շարժման գործնական և գաղափարական առաջնորդ դերը ստանձնել էին հնչակյան գործիչներ Սիիրան Տամատյանը, Համբարձում Պոյաճյանը (Մուրադ), Արմենակ Ղազարյանը (Հրայր), Գևորգ Աղամյանը (Գևորգ Չաուշ) և ուրիշներ:

պատրաստվում են թուրքական հզոր բանակի դեմ կռվելու իրենց ուժերի ներածին չափով: Եվ ահա 1895 թ. աշնանը սուլթան Համիդի, արյունաբերու Կարմիր Սուլթանի¹, բարձրագույն հրամանի՝ (հայրի թեղմիր)² [համաձայն ընդունվում է] հայերի բնաջնջման հրովարտակը [որը հանձնարարվում է] Էրզրումի զինվորական [հրամանատար] Ջեքի փաշային³:

Սուլթան Համիդի հրամանի համաձայն Ջեքի փաշայի քսանհինգ հազարանոց բանակը⁴, [մրան] միացած քրդական աշիրեթներին դիմում [շարժվում] են Սասունի մի բոտ ապստամբ քաջերին կոտորելու, բնաջնջելու: Ինչ խոսք, որ Սասունի մի բոտ քաջերը երկար չպիտի կարողանային թուրքական ահավոր բանակին [դիմադրել], մանավանդ հսկայական քրդական աշիրեթների հորդանքերին հաղթահարել [դիմակայել], թեկուզ լավ, ամառիկ դիրքերին կառած լինեն, ապա ռազմաժողովը, և ամենագլխավորը՝ կենսամթերք հոծ ժողովրդին մատակարարելու, մանավանդ որ Սասունն ամեն կողմից պաշարված էր քրդական հորդանքներով:

Չնայած այս աննպաստ պայմաններին՝ Սասունի քաջարի մարտիկները այդ ահավոր ուժերի [դեմ] երեք ամիս անվեհեր կերպով պատերազմեցին, մեծ կորուստներ հասցնելով թուրքական բանակներին, սակայն վերահաս սուլը և ռազմաժողովի պակասությունը չընկճեցրեց հայ քաջերին, և զենքը ձեռքին հերոսաբար զոհվեցին: Քրդական և թուրքական ահավոր բանակները մտան Սասուն և սկսե-

¹ Աբդուլ Համիդ II (1842–1918 թթ.), թուրք սուլթան (1876–1909 թթ.): 1894–1896 թթ. նրա հրամանով կոտորվել են 300 հազար հայեր: Իր դաժանությունների՝ հայ հպատակների զանգվածային կոտորածների համար ստացել «Կարմիր սուլթան» մականունը:

² Թուրքերեն բառացի նշանակում է բարեկեցության ոչնչացում (hari tedmir):

³ Ջեքի փաշան Անատոլիական IV բանակի հրամանատարն էր, որին սուլթան Աբդուլ Համիդ II-ը հանձնարարել էր իրականացնել սասունցիների կոտորածը:

⁴ Ջեքի փաշայի զորքի թվաքանակը սկզբնական շրջանում 12 հազար էր: Ձինված էր հրետանիով: Կամոնավոր բանակին միացել էին մահ համիդեական երեք հազարանոց զորքը, ինչպես նաև մահմեդական ավարամուլ զինված ջոկատներ: Կարելի է ենթադրել, որ հեղինակն է նկատի ունենում վրա արշավող պատմիչ ուժերի ընդհանուր թիվը:

ցին գազանաբար կոտորել մեջի բնակիչներին՝ առանց խնայելու ծերերին ու երեխաներին՝ եվրոպական կոնսուլների աչքի առաջ։ Հայի անմեղ արյունով ողողվեց Մասունի լեռներն ու դաշտերը, կատարվեց սուլքան Համիդի ծրագիրն ու փափագը։ Իսկ ինչ՞ դեր կատարեց քաղաքակիրթ Եվրոպան. հանդիսատեսի դերում մնաց միայն՝ ծաղրելով հայերի անմեղ դիակները, մենք միայն մի խոսք ունենք քաղաքակիրթ Եվրոպային կոչելու՝ ամոք ու նախատինք այդ մարդկային դավանանքներին, որոնք քրիստոնեական մարդասիրական հավատ են քարոզում աշխարհի մարդկությանը, նզովք իրենց անվանը։

Վերադառնա՞նք դեպի մեր պատմությունը, թե ինչ վիճակում էր գտնվում Վասպուրականը Մասունի ջարդերից հետո, գյուղեր, շեն ավաններ ավերակի մատնելուց, հետո կոտորեցին նաև Բիթլիսի հայությանն իր շրջականներով [շրջաններով]¹ և Ջեքի փաշան իր միսին կատարելուց հետո անցավ Պոլիս՝ իր չարագործության համար պարգև և պատիվ² ստանալու իր արյունաբքու սուլթանից, իր բանակը հանձնելով Վանի զինվորական Սելափետոյին³ [Սաադեդին] փաշային պակաս մնացածը լրացնելու։

¹ 1895 թ. հոկտեմբերին կոտորածների զոհ են դառնում նաև Բիթլիսի (Բաղեշ) նահանգի 102 գյուղերի հայ բնակիչները։ Հայերի մի մասը կարողացավ փախչել մոտակա լեռները, սակայն մահացավ սովից և ցրտից։ Բիթլիսի ջարդերին ակամատես ամերիկացի միսիոներ Ջորջ Փ. Նեփի վկայությամբ, «Բիթլիսի շրջանում եւ տեղի ունեցան ջարդեր, որոնք շրջանը անճանաչելի դարձրին մուսուլման քաղաքական իշխանությունների համար»։ Ամերիկացու համոզմամբ, Բիթլիսի ջարդերն այն աստիճան դաժան էին, որ «սովերեցին անգամ Մասունի ջարդերը»։

² Սուլթանը Ջեքի փաշային պարգևատրում է «Նիշանի իմթյազ» շքանշանով, իսկ ինքնապաշտպանության ճնշմանը և կոտորածներին ակտիվ մասնակից քրդական չորս ցեղապետեր՝ կառավարական մետաքսյա դրոշներով։

³ Սաադեդին փաշան հանդիսանում էր սուլթանի հանձնակատարը։ Նա օժտված էր արտակարգ լիազորություններով։ Փաշային հանձնարարված էր կազմակերպել կոտորածներ Վանի նահանգում։

ՎԱՆ ԶԱՂԱՔՆ ՈՒ ԻՐ ԱՐՎԱՐՁԱՆՆԵՐԸ

Նախքան Վանի 1896 թ. կռիվները քաղաքաբ տալու, հարգելի ընթերցողներին հարկ եմ համարում համառոտակի նկարագրել ուժեղիս ներծին չափով [Վան քաղաքը և իր արվարձանները]:

Վան քաղաքը գտնվում է Բզնունյաց ծովի արևելյան ափին՝ շրջապատված ոչ մեծ լեռներով և բլուրներով: Արևելքում Վարազա լեռն է և Կարմրավոր վանքն իր ոչ բարձր բլուրով, արևմուտքում՝ Վանա ծովը Սիփան սարի ստորոտում, հյուսիսում Մք. Խաչ վանքի բլուրը, հարավում Սիերի բլուրը և Ջըմզըմ բերդ:


Վան քաղաքը բաժանված էր երկու թաղամասի. Զաղաքամեջ և Այգեստան, անջատված թուրքական թաղամասերով:

Զաղաքամեջում էին գտնվում պետական բարձրագույն հիմնարկները և զինանոցները ու Վանի ընդհանուր առևտրական շուկան՝ պատմական բերդի ստորոտում: Բերդն ունի ատամնավոր քարե ամրություններ և վառողի պահեստներ: Վանի բերդն ունի պատմական հուշարձաններ, բևեռագրեր: Վանի բերդն ունի անցյալի աղետալի պատմություններ՝ Շամիրամի¹, Լեմկեմուրի², Չինգիզ խանի³ և այլ զագանաբարո մահմեդական բռնապետերի սխրագործություններ [չարագործությունների] Վասպուրականի հայ ժողովրդին հանդեպ: Հայ ժողովուրդը դարեր շարունակ թուրքական բարբարոսների զոհ է դարձել և դեռ շարունակվում է այդ ահռելի կոտորածների մղձավանջը:

¹ Նկատի ունի Ասորեստանի առասպելական քագուհուն:

² Լեմկ Թեմուր (1336–1405 թթ.), միջինասիական զորավար, ամիրա (1370–1405 թթ.): Մարտում վիրավորվելով՝ ստացել է «Լեմկե» («Կաղ») մականունը: Աչքի է ընկել դաժանությամբ:

³ Չինգիզ խան (խկական անունն է՝ Թեմուչի, 1155 կամ 1162–1227 թթ.), մոնղոլական միասնական պետության հիմնադիր, զորավար: Մոնղոլական կայսրության հիմնադիր: Հայտնի էր իր դաժանություններով:



Վան քաղաքն իր արվարձաններով, իր գեղեցիկ դիրքով, տեսաբաններով կոչվում է երկրային դրախտ: Թուրք տեսաբանները չէին սխալվել, որ կոչեցին «դանյադա Վան ախիրաթդա հիման»¹:

Քաղաքամեջից բարձրանալով դեպի Խաչ փողոցի ուղությամբ Այգեստան՝ դեպի Սոգա կոչված գյուղ, երեք ուղղությամբ հոսում են պաղորակ առատ առվակներ՝ շրջապատված ուտենի և բարդենի ծառերով, կարկաչուն աղբյուրներով և Վանի ժողովուրդը այդ հովասուն առվակների ծառերի հովանու տակից շտապում էր Վանի շուկան, օրհնելով բնության պարզևած շնորհը:

Վանի ծովակում գտնվում է չորս [հինգ] կղզի [որոնցից նշանավորն է] Աղթամարը՝ Գագիկ Արծրունու² ճարտարապետական փառավոր կառուցած եկեղեցին³, հնագույն ճարտարապետական քանդակներով, դրսի տունն՝ Ախավանքն իր գեղատեսիլ դրվածքով [դիրքով]: և ունի հայկական միջնակարգ դպրոց, որտեղ սովորում էին մասնավորապես չքավոր ընտանիքի երեխաները, վանքապատկան գյուղերի հասույթներով, ուներ միաբանություն և կրթված ուսուցչական խումբ, և ուներ առանձնապես գյուղատնտեսություն [զգալի հողատարածություններ]: Այս վանքը ղեկավարվում է Վանի [հոգևոր] առաջնորդի կողմից նշանակած վանահայրով:

Ախթամարը՝ որպես կաթողիկոսանիստ վանք, իր պատմական անցյալով առաջնակարգ վանք էր համարվում և անցյալի թագավորներից, իշխաններից, իշխանագուներից ստացած թանկագին նվերներ, ոսկեդեղն, զգեստներ, զարդ, ամանեղեն, արծաթեղենով ամենահարուստ վանքն էր կոչվում [համարվում]: Եվ այս ամբողջ հարստությունը և մատենադարանը անձեռնմխելի էր մնացել շնորհիվ Արսեն վանահոր, որ մեծ հեղինակություն ուներ Ախթամարի շրջանի քրդական բեկերի շրջանում, սակայն չարագործ մարդիկ եղան, որ

¹ Նշանակում է՝ «աշխարհում մնանը չունեցող, Աստծո կողմից օրհնված Վանը, այլ աշխարհի դրախտ»: Թուրքերեն՝ dünyade Van ahirtde himmayun:

² 908 թ. Վասպուրականի թագավոր:

³ Եկեղեցին կոչվել է Սուրբ Խաչ: Կառուցել է Մանուել ճարտարապետը 915-ից 921 թթ.:

սպանեցին վանահորը և վանքն իր հարստությամբ կողոպուտի մատնեցին և ազգից անպատիժ մնացին¹:

Ինչպես վերը նշեցի, կա նաև երեք [չորս] ուրիշ կղզի, Կոտուց, Անապատ, Արտեր և Լիմ, որոնք չունեն ոչ միաբանություն, ոչ դպրոց: Լիմ անապատում կային մի քանի մոլեռանդ անապատական վարդապետներ, որ ճգնելով էին անցկացնում իրենց անպետք օրերը:

Վանա ծովակն իր մեջ ունի ընտիր տառեխ ձուկ և արտադրվում է նաև ծովային աղ՝ բորակ, որը մշակվում էր Ավանց գյուղում՝ ծովային նավահանգստային գյուղում: Ավանց գյուղի բնակչությունը զբաղվում է նավավարությամբ: Նավերով փոխադրում են Դատվանի անտառներից վառելափայտ և ածուխ քաղաքի ժողովրդին մատակարարելու, իսկ ձուկը Բենդի մահու գետն է մատակարարում, ձկան մոնոպոլիան² պետությունը աճուրդով գարնանը վաճառում էր վարձակալներին:

1915 թ.³ Վանի առաջնորդն էր տխրահռչակ Պողոս եպիսկոպոսը⁴, որն իր սև ամունը ստացել է քուրդ արյունարբու բեկերի և հայառյուսյաց փաշաների հետ գործակցելու համար, ինչի համար էլ տեղորի ենթարկվեց վանեցի մի կարգ հեղափոխականների կողմից⁵, որոնք մաքրում էին հայ ազգը դավաճաններից:

¹ Նկատի ունի 1915 թ. ապրիլին թուրք ոստիկանների կողմից վանքի գրավումը, եկեղեցականների սպանությունը և գույքի կողոպուտը:

² Չկնոթության մենաշնորհը:

³ 1860-ական թվականներից:

⁴ Պողոս վարդապետ Մելիքյանը, հետագայում եպիսկոպոս, Վանի հոգևոր առաջնորդ Գաբրիել եպիսկոպոս Շիրոյանի փոխանորդն էր: Կատարած զեղծարարությունների համար Կ. Պոլսի Ազգային ժողովն արգելում է նրան հոգևոր պաշտոն վարել մինչև ամբաստանությունների հերքումը: Վասպուրականը բաժանվում է երկու մասի՝ պողոսյանների և ապողոսյանների: Պողոսի դեմ հետևողական պայքար է մղում Կ. Պոլսի պատրիարք Սյրտիչ Խրիմյանը: Խրիմիը լուծվում է 1879 թ. դեկտեմբերին, երբ Մ. Խրիմյանն ընտրվում է Վասպուրականի հոգևոր առաջնորդ: Սակայն 1883 թ. Մ. Խրիմյանի հրաժարականից հետո հոգևոր առաջնորդի պաշտոնը ստանձնում է Պողոս եպիսկոպոս Սելջըյանը:

⁵ Սպանվել է 1896 թ. Աղթամարում դաշնակցականների կողմից:

ՎԱՐԱԳԱ ՎԱՆՔ

Սիրելի ընթերցող, ծանոթացնեմ սքանչելի Վարագա վանքին՝ Խրիմյան¹ արժանահիշատակ Հայրիկի սիրած դրախտանման բուրաստանը։ Բնությունը չի խնայել տալ Վարագին այն գեղեցկությունը, ինչը բնության ծոցում պահված է։ Քաղաքից բարձրանում ես վանքի բարձունքի հովիտ, որը զարդարված է դալարագեղ ծառերով, սառնորակ աղբյուրներով, հազար երանգի գույնզգույն լեռնային անուշաբույր ծաղիկներով, ոչխարների հոտերի, գառների անուշ մայունով, հովիվների սրնգի անուշ դալարիկով, հազարավոր թռչունների անուշ ճովողյունով, լսում և զգում ես մարդկային ուրախ ծիծաղ, երգ, և մոռանում ես կարծես կյանքի դառն ապրումները, վերանում ես դեպի երանական աշխարհ, հոգ, թախիծ չքանում են ու քեզ մի բույե երջանիկ ես զգում և այդ սքանչելի կյանքը երազ է թվում կարծես, այս անփառունակ բռնապետական երկրում, այս աշխարհը բռնն ես կարծում, բայց ստրուկ ես քո հայրենի աշխարհում, ո՛չ անձի, ո՛չ կայքի տեր ու տիրական չես, բռնության ճիրաններում գալարվում ես ու ողբում այս անցավոր աշխարհում։

Գալով վանքի միաբանությանը, [վերջինս] շնորհիվ Խրիմյան Հայրիկի ձեռներեցության, շատ լավ պայմանների մեջ է գտնվում՝ տնտեսությունը, դպրոցն իր ամենակարող փուլի մեջ է գտնվում, վանքապատկան հասությանը սովորում են 200-ից ավելի չքավոր ընտանիքների երեխաներ։ Ունի տպարան՝ Վենետիկից նվեր ստացած հայր Ալիշանից²։ Տպվում է ամսաթերթ «Արծիվ Վասպուրականի»³ և մեծ ծավալով տարածվում հայ հասարակության մեջ։ Սա-

¹ Խրիմյան Հայրիկ (Մկրտիչ Ա Վանեցի, 1820–1907 թթ.), Ամենայն հայոց 125-րդ կաթողիկոս (1892–1907 թթ.), մտավորական, կրթական, հասարակական-քաղաքական գործիչ, գրող։

² Ղևոնդ Ալիշան (Քերովբե Ալիշանյան Պետրոս, 1820–1901 թթ.), հայ բանաստեղծ, բանասեր, պատմաբան, աշխարհագրագետ, թարգմանիչ, Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ 1838 թ.։

³ «Արծիվ Վասպուրական», պարբերական, հրատարակվել է Կ. Պոլսում (1855–1856, 1873–1874 թթ.) և Վանի Վարագա վանքում (1858–1864 թթ.), շաբաթաթերթ։

կայն շատ անգամ չար նախանձողների չարախոսության արգելքները խանգարում էին առաջադիմության ծավալմանը: Վանի տիրապետչակ դավաճան առաջնորդ Պողոս եպիսկոպոսի դավաճան արքայականների դավադրությամբ Վարագա վանքը զրկվեց իր հայրենիքին նվիրված հովվից: Թուրք կառավարության հրահանգով Խրիմյանը աքսորվեց իր հայրենի սիրասուն աշխարհից: Բայց Պողոս եպիսկոպոսը իր արժանավոր պատիժը ստացավ կատարած չարագործությունների համար վանեցի վրիժառուներից: Եւ այս սքանչելի երկիրն իր սրբավայրերով մի օր ավերի ու ամայության պիտի մատնվի չար ոտխներին ձեռքով՝ հարուստ տներ, գյուղեր, ավաններ անտեր պիտի մնան, միջի բնակիչը՝ բնավեր կդառնան:

Ինչպես վերը հիշեցինք, Սասունն իր շրջակա գյուղերի, քաղաքների հետ գլխովին ավերի մատնելուց հետո թուրքական բանակները առաջնորդվեցին դեպի Վան քաղաքը, որը թուրք կառավարության կողմից ճանաչված էր ապստամբ և հայաշատ հարուստ քաղաք: 1896 թվականից Վանի կուսակալն էր անվանի Նազիմ փաշան: Թեև խաղաղ անձնավորություն էր, բայց սուլթան Համիդի ստորադրյալը լինելով՝ անգոր էր սուլթանական հրամանին չհնազանդվել, մանավանդ ծրագրված էր հայերի բնաջնջումը, իսկ զինվորական ընդհանուր հրամանատարն էր Սելլաեռոյին [Սաադեդին] արյունառուշտ հայատյաց փաշան: [Նա] նախ իր բանակն ուղղեց Վանի նահանգի հայաբնակ գյուղերը կոտորելու, որպեսզի Վանը զրկվի արտաքին օգնություններից, մթերքներից, հետո կոտորեց Արճեշի, Ալջավազի բարերբեր գյուղերը և ավանները, ապա մեկ առ մեկ կոտորեց Սարայի վիլայեթի¹ հայաշատ բնակավայրերը քրդական աշիրեքների օգնությամբ և ավերի ու թալանի մատնելով հասավ Արճակի վիլայեթ²: Ար-

Խմբագիրներ՝ Մ. Խրիմյան (1855–1864 թթ.) և Մ. Անայան (1872–1874 թթ.): Արևմտյան Հայաստանում տպագրված առաջին պարբերականն է: Աշխատակցել են Վարագի Ժառանգավորաց վարժարանի սաները (Ա. Թոխմալյան, Տեկանց եղբայրներ, Գ. Սրվանձոյանց), Հ. Մելիք-Հակոբյանը (Բաֆֆի), Մ. Աղաբեկյանը և ուրիշներ:

¹ Գավառ:

² Գավառ:

ճակի [գավառի] Խառակոնիսի չորս հարյուր տնից բաղկացյալ գյուղը սրի և հրի ճարակ դարձրեց քուրդ բեկերի հրոսակների միջոցով, հազարավոր տղամարդ, կին, երեխա սրախողխող եղան, գեղեցիկ կանայք առևանգվեցին, միմիայն Արճակի եկեղեցում ապաստանած հարյուրավոր կին, ծծկեր երեխաներ արյունաշաղախ եղան, հորդեց արյունը ինչպես վտակ, իսկ գազանացած քուրդ հորդաները չհագեցան հայի արյունը խմելուց:

Տարագրեցին կանանց և կարգ մը ողջ մնացած տղամարդկանց, տարան Մազրուկ կոչված գյուղ՝ հավատափոխ անելու: Սրանք այն Բեղրիսան բեկի տակաճքներն էին, որոնք սուլթան Համիդի ծրագրով տեղափոխվեցին հայկական շրջաններ, որպես պատուհաս հայկական գյուղերին: Այս գլխավոր բեկերից մեկն էր Բեղրիսան բեկի սերնդից Այիբիսան բեկը, Մանդան կոչված հայկական գյուղում բույն դրեց և տեղական հայերին ահ ու սարսափի մատնելով գրավեց նրանց հողերը և նրանց գերի դարձրեց, մանավանդ նրա տխրահռչակ ավազակաբարո տղան՝ Բոռ Մեյիդ բեկը: Մազրուկ գյուղի բեկեր՝ Հուսեյին, Ալի, Մուստաֆա, Ավդուահմանը¹ պատուհաս դառան հայ գյուղերին:

Սեյլահետդին փաշան այդ հայկական շեներն ասպատակելուց հետո, քաղաքի արվարձանները սկսեց կոտորածի ու թալանի մատնել: Քաղաքի մոտիկ Շահպադի խաղողի գինու հռչակավոր գյուղը գլխովին ավերեց, [իսկ] ծովի ափին [գտնվող] Արտամետ գյուղը, որ հռչակված էր իր նրգատու այգիներով, կարմիր հոտավետ կլաթ խնձորով, նմանապես ավերածության մատնեց: Վերջապես անհամար են այն հազարավոր գյուղերն ու ավանները, որոնք զոհ գնացին թուրքական բարբարոսությանը:

Վերջացնելով հայ գյուղերի ավերածությունները՝ մտավ քաղաք՝ իր անողորմ հարվածը հասցնելու քաղաքի բնակչությանը: Սեյլահետդինն իր կանոնավոր զորաբանակին թուրք խուժանը միացրած՝ անակնկալ կերպով, խուժեց Քաղաքամեջին մոտիկ Հայկավանք թա-

¹ Աբդուահման:

ղամասը, որ կտրված էր Զաղաքամեջից և անխնա սկսեց անլուր կոտորածը, քալանն ու տների հրկիզումը: Թաղի միջի կենդանի մնացած կին, երեխաները ահ ու սարսափի մատնված, խուճապահար դիմեցին Կալի¹ փաշայի ապարանք՝ ապաստան գտնելու նպատակով, սակայն Կալի փաշան ավելի դաժան գտնվեց քան թուրքական խուժանը, և հրամայեց իր ջենդերմեններին սրախողխող անել քե՛ր կանանց, և քե՛ր մանուկներին և հորերը լցրեց նրանց հոշոտված դիակները, և դրա համար, կանլի փաշա անունով կոչվեց:

Հայկականքի կոտորածները վերջացնելով՝ դիմեց այն քաղամասեր, որոնք խառն էին թուրք բնակչությամբ, օրինակ. Բոշի քաղ, Թորոմանի քաղ, Սուրբ Հակոբի քաղ, Կարոյի քաղ, Կլոր դարի քաղ: Հայկական այն քաղերը, որոնք վառահ [էին] իրենց թուրք հարևաններին, չէին փոխադրվել հայկական կենտրոններ՝ ոմանք կոտորվեցին, իսկ ոմանց ընտանիքները պաշտպանություն գտան իրենց նախկին բարեկամ թուրքերից: Դա իհարկե շատ քիչ բացառությամբ, որովհետև թուրք կառավարության հրահանգն էր՝ չթաքցնել գյավուրներին²:

Թուրքական գործը և խուժանը այս քաղամասերը քալանելուց և կողոպտելուց, տները հրկիզելուց հետո հարձակվեց կենտրոնական հայկական քաղամասերի վրա, սակայն Վանի մի կարգ հերոս մարտիկների դիմադրությամբ հանդիպելով, մեծ զոհեր տալով հետ նահանջեց՝ պատրաստվելով մեծ ուժերով հարձակում հայկական կենտրոնների վրա: Սակայն այդ փորձերն ևս ի դերև եղան շնորհիվ քաջարի դիմադրողների: Մեկահետդին փաշան չուզեց ընկնվել և դիմեց գերմանական կոնսուլի [բրիտանական հյուպատոսի] խորհրդին՝ քնդանոթներով մկաճել հայոց համառությունը, սակայն դա նույնպես չօգնեց՝ հանդիպելով քաջարի մարտիկների համառ դիմադրությանը, մինչև որ ռուսաց կոնսուլը դիմեց միջնորդության և սպառնաց ռուսաց բանակի մուտքը Թուրքիա: Փաշան սանձահար-

¹ Այդպես է կոչվել Հայաստանն ասպատակած թուրքական «կանլի» ցեղախմբի անունով:

² Գյավուր՝ անհավատ, ոչ մահմեդական:

վեց և ժամանակավորապես դադարեցրեց թնդանոթաձուլությունը ու հարձակումները և դիմեց եվրոպական կոնսուլներին, որպեսզի հայկական զինված ուժերը քաղաքից դուրս գան, հավաստիացնելով խաղաղություն վերականգնելու [իր ցանկությունը], և կոնսուլների¹ միջամտությամբ, հինգ հարյուրից ավելի² զինված և անզեն երիտասարդություն պարսկական զծով պետք է հեռանային, սակայն դավադիր թուրքը, քուրդ հրոսակների համիդյաններ³ հորդաններով շրջապատում են հայ քաջ մարտիկների խանասորի դաշտում և կոտորում են: Հայ մարտիկները արհաբար մարտ են մղում մինչև իրենց վերջին զնդակը և հերոսաբար զոհվում, բացառապես ողջ են մնում երկու թե երեք երիտասարդ⁴, այդ կոտորածների ականատես լորոնք պատժեցին հետագայում, թե ինչ] հերոսական մարտ մղեցին հազարավոր քրդական հորդանների դեմ, մինչև որ հերոսի անվան արժանի մահ գտան:

Այսպես Այգեստանի ժողովուրդը սահմանափակեց իր մարտը, իսկ Քաղաքամեջի հայ զանգվածը ահ ու սարսափի մեջ էր գտնվում: Հայ վաճառականները վերահաս վտանգի առաջն առնելու համար դրամական կաշառքի միջոցով դիմեցին Քաղաքամեջի զինվորական պարետին՝ չերբեզ բին բաշիին (հազարապետին) փրկեցին կոտորա-

¹ Հիմնական «միջնորդը» բրիտանական հյուպատոս Ուիլյամսն էր: Բրիտանական կառավարությունը երկյուղում էր, որ Ռուսաստանը կարող էր որպես պատրվակ օգտագործել Վանի հայության ինքնապաշտպանությունը և զորքեր մտցնել Օսմանյան կայսրություն: Այդ իսկ պատճառով բրիտանական կառավարությունն աշխատում էր իր դիվանագիտական ներկայացուցչի միջոցով համոզել հայերին՝ դադարեցնել դիմադրությունը և «անարգել» հեռանալ Պարսկաստան:

² Իրական թվաքանակը մեկուկես հազար էր:

³ Համիդեական զնդերը:

⁴ Հունիսի 8-ին մեկուկես հազարի հասնող ամբոխը շարժվում է Վարագա վանք: Նրանց մի զգալի մասը՝ մոտ յոթ հարյուր հոգի Սկրտիչ Ավետիսյանի (Թերլեմեզյան) ղեկավարությամբ շարժվում է Բաշկալե-Ալբակ ուղղությամբ: Նրանք Սուրբ Բարդուղեմիոս վանքի մոտ շրջապատվում են թուրքերի և քրդերի կողմից: Անհավասար մարտում վանեցիների մեծ մասը զոհվում է: Ողջ են մնում միայն մոտ 35 հոգի: Չոհվում են մահ Մարտիկի (Մարտիրոս Մարտիսանյան) ու Պետոյի (Ալեքսանդր Պետրոսյան) ղեկավարած մոտ ութսուն հոգուց բաղկացած խումբը:

ծից ժողովրդին և ազատեցին ամբողջ շուկայի հարստությունը, հա-
կառակ Սելահետոյին փաշայի սպառնալիքին: Միակ գոհը որ ունե-
ցավ, քաղաքի առաջնորդ Դանիել վարդապետի ինքնակամ գոհն էր,
որ տեղի ունեցավ կռվի ընթացքում:

Առաջնորդ Դանիել վարդապետը, չտանելով իր հոտի կոտորա-
ծը, վճռում է անձամբ դիմել փաշային, և իր հետ վերցնելով իր ծառա-
յին՝ դիմում է փաշային, թեպետ առաջնորդարանի մեծամեծերը խոր-
հուրդ չեն տալիս, բայց համառ վարդապետը, հեծած իր ձին, վերց-
նում է ծառային, գալիս է փաշայի մոտ՝ որ կոտորածներին վերջ տա-
լու խնդրով: Հասնում է թուրքական բաղնիքի մոտ, երբ կացնի հար-
վածով ձիուց վայր կընկնի և վերջ կտա իր կյանքին: Մերկացրեցին
դին ու զցեցին դիմացի արտը: Ես՝ որպես ականատես այդ սպանու-
թյան, երբեք չեմ մոռանա նրա մարմնի հոշոտումը, թուրքերի կողմից:
Եվ այսպես վերջացավ Վանի 1896 թ. Վասպուրականի ողբեր-
գությունը:

Իմ հիշողության մեջ չեմ մոռանա մի հանգամանք, մի ցավալի
իրողություն, որ կատարվեց Վանի ահավոր կռիվների ընթացքում,
երբ թուրքական թնդանոթները որոտում էին հայկական ընտանիքնե-
րի գլխին: Հայ կանայք, երեխաները, թողած իրենց կայքը, սարսա-
փահար դիմում էին ամերիկյան շրջանակ¹, ապաստան գտնելու:
Ամերիկյան միսիոները՝ այդ այծամորուք հրեշը՝ դոկտոր Ռեյնոլդսը²,

¹ Ավելի մանրամասն տես Փայասյան Սո., Ամերիկացի միսիոներների
գործունեությունը Օսմանյան կայսրությունում 19-րդ դարի առաջին կեսին,
Բանբեր Հայաստանի արխիվների, Երևան, N 1, 2005, էջ 120–134, նույնի՝ Ամերի-
կացի միսիոներների գործունեությունը Օսմանյան կայսրությունում 19-րդ դարի
երկրորդ կեսին, «Բանբեր Հայաստանի արխիվների», N 2, 2006, էջ 111–119,
Տերոյան Վ., Իմպերիալիստական ծիծեռնակներ. Միսիոներաբարեգործական
կազմակերպությունների աշխատանքը Մերձավոր Արևելքում և Անդրկովկասում,
Երևան, 2008:

² Կոմսը (Վահան Փափագյան) իր հուշերում այլ կերպ է ներկայացնում բժիշկի
Ռեյնոլդսին, նրա հետ աշխատող Քլարենս Աշքրին և Էռնեստ Յարոուին: Կոմսը
դրական է խոսում միսիոների մասին: Ռեյնոլդսը առաջարկում էր հայդուկներին
«ուժին ուժով չդիմադրել» և հեռանալ Երկրից (Արևմտյան Հայաստանից), տես
Փափագեան Վ., Իմ Յուշերը, հատոր առաջին, Պոսթըն, 1950, էջ 230: Միսիոներ-
ները զաղտնի օժանդակություն էին հայդուկներին, թույլատրելով իրենց

որ մարդասիրություն կոչ էր քարոզում, անգթաբար վնդում է իր շրջանակից՝ առանց խղճի խայթ գգալու: Նույնը կատարեցին անգլիական և գերմանական կոնսուլները: Բացառությամբ միայն ռուսական կոնսուլի, որն իր դրոշակի տակ առավ մեծ բազմություն մինչև կռիվների վերջը:

Կռիվների վերջանալուց հետո կաթոլիկ կղերը և բողոքական միսիոներներն իրենց կեղծ մարդասիրական անվան տակ հանգամանքներից օգտվելով, որպես դավանանքի գող որսորդներ, ուզեցին օգտվել դրամական օժանդակության անվան տակ և գրավել այն ընտանիքներին, որոնք կորցրել էին իրենց ընտանիքները, տունը, կայքը, կարոտ էին օգնության: Եվ կաթոլիկ կղերները, լեշի սովոր ուրուրների նման, թափառում էին հայկական գյուղերում: Կաթոլիկ դավանանքի կոչ էին անում նրանց, ովքեր կարոտ էին կարիքի¹: Գտնվեցին շատ գյուղացի ընտանիքներ, որոնք ընդունեցին կեղծ կաթոլիկ կրոնը կարիքից դրոված, բայց երբ սկսեցին իրենց նյութական դրությունը բարելավել, հեռացան կաթոլիկ եկեղեցուց և իրենց նախնյաց լուսավորչական եկեղեցուն դիմեցին:

Կաթոլիկ անամոթ կղերները սրտմտած ասում էին. «Փարա վար, կաթոլիկ վար, փարա յոխ, կաթոլիկ յոխ»: Եվ ասացվածք էր դարձել հայերի մոտ. «Փարա [փող] կա, կաթոլիկ կա, փարա չկա, կաթոլիկ չկա»: Նույնը և կատարվում է բողոքականության մեջ: Եվ այդ անամոթ վարդապետները փողով որսում էին հայ չքավոր, արյունաքան ժողովրդին՝ առանց ամոթի ու խայտառակության:

Եվ Վասպուրականի հայ ժողովուրդը, ամեն կողմից թալանված, կողոպտված, զուրկ տարրական օգնությունից, հենված էր []միայն իր ուժերին՝ տասներեք տարվա խաղաղությունից օգտվելով, մոռացած իր տխուր, ողբերգական անցյալը՝ զարկ տվեց իր արհեստին, վաճառականությանը, գյուղացին իր գյուղատնտեսությանը, այդ կարճ ժամանակամիջոցում վերականգնեց իր տնտեսությունը և կա-

հիվանդանոցի հայ աշխատակիցներին բժշկական օգնություն ցուցաբերել վիրավոր և հիվանդ հայրուկներին:

¹ Օգնության:

բողոքությունը էլ ավելի կուտորապես¹, բարելավեց իր վիճակը: Մակայն այդ խաղաղությունը երկար կյանք չունեցավ, քանի որ մենք գտնվում էինք բռնապետության ճիրանների մեջ: Ում ծանոթ չէ թուրքական բարբարոսությունը, ակներև է, որ աշխարհը մեծապես տուժել է թուրք տիրապետությունից: Անշուշտ տուժել է ~~ինքը՝ թուրք ժողովուրդը~~, որ կամա ակամա դարեր շարունակ զուրկ է մնացել քաղաքակրթության կենսաբեր բարիքներից:

Պիտի հանդուրժի՞ առյույր ընդ երկար այդպիսի պետության գոյությունը: Ահա այն հերթական մեծ խնդիրը, որ այսօր դրված է հրապարակի վրա և որի լուծմանը կենդանի հետաքրքրությամբ սպասում է ողջ քաղաքակիրթ մարդկությունը:

Հավատանք և հուսանք, թե Թուրքիայի ազգերի և ցեղերի համար բացվելու է նոր արշալույս հզոր Սովետական Ռուսաստանի և նրա քաջաբազուկ նիզակակիցների միացյալ զորությամբ:

Ինչպես պատմությունը ցույց տվեց, Վասպուրականի ահավոր աղետից տուժած հայությունը կամաց-կամաց այդ կարճ խաղաղության միջոցում վերականգնեց իր ավերված օջախները, իր կորուվի, ամղուլ աշխատանքով ձեռք բերեց բարեկեցիկ վիճակ. որպես ընդունակ, աշխատասեր ժողովուրդ՝ կրկին ծաղկեց՝ արհեստ, գյուղատնտեսություն, որպես ընդունակ, աշխատասեր ժողովուրդ, բայց ի՞նչ վստահություն և ի՞նչ երաշխավորություն կար այնպիսի երկրում, որտեղ բռնապետություն է թագավորում. անցյալի հայ ժողովրդի գլխին հասած հարվածները բռնավորների կողմից խելքի բերին հայ ժողովրդին, որ այս բռնակալական երկրում առանց պաշտպանական միջոցի չի կարելի ապրել խաղաղ ճանապարհով, ուստի ամեն մի հայի սրտում հղացավ ինքնապաշտպանության սրբազան պարտականություն:

Հայը համբերատար է, որպես քրիստոնեական օրինաց հնազանդ, իր խոնարհությամբ միշտ զոհ դարձավ բարբարոս մահմեդա-

¹ Ավելի բարձր մակարդակով:

կանությանը¹, հուսալով, որ Քրիստոսը հրաշքներ կգործի, մահմեղականի սուրը կխորտակի, եթե քրիստոնյան հետևի Քրիստոսի օրինակին, որ համբերատար խաչի վրա բարձրացավ, սակայն չարաչար սխալվեց և էշ մահատակ եղավ մահմեղականության անողորմ յաթաղանին: Եթե քրիստոնյա հայությունը հետևած լիներ իր մախնյաց քաջագնական ոգուն, հայ ժողովուրդը ստրուկ չէր դառնա մահմեղական շահամուլ ժողովրդին, որ իր սրի օգնությամբ միայն ապրեց և քրիստոնյայի ճակատի քրտինքով աշխատանքի տեր ու տիրականը դարձավ:

Եվ մահմեղական ապիկար ժողովուրդը², որը ոչ աշխատանքի և ոչ գիտության ընդունակ էր, իսկ իր սրի օգնությամբ տիրակալ դարձավ խելակորույս քրիստոնեական դավանության հետևողներին՝ իրական փաստ է, քանի որ հայ կռապաշտական կրոնն էր դավանում, իր մեջ քաջագնական ոգի էր կրում, հզոր թագավորներ, իշխաններ, նախարարներ անսահման տեր ու տիրական էր լայնածավալ քաղաքների: Հայը տեր ու տիրակալ էր: Իսկ քրիստոնեական կրոնն ընդունեց թե չէ, ոչ միայն կորցրեց իր տիրապետած երկրները, այլև կորցրեց իր անկախ թագավորությունը և ստրուկ, վասալ և գերի դարձավ մահմեղական թափառաշրջիկ հորդանների³: Հայն աշխատում էր, մահմեղական ավազակը՝ վայելում: Հայ ազգը զգաց իր սխալը, բայց արդեն ուշ էր: Հայի զգաստությանը հետ դառնալ դժվար էր այլև:

¹ Մահմեղական անվան տակ պետք է հասկանալ օսմանյան բռնապետությունը, որը բանտ էր նրա տիրապետության ներքո գտնվող հպատակ ժողովուրդների՝ արաբների, դպտիների, ասորիների, հույների, սերբերի, բուլղարների, հայերի և այլ ժողովուրդների համար:

² Ի նկատի պետք է ունենալ թուրք և բուրդ վերնախավին, որն ապրում էր հիմնականում հայերի աշխատանքի շահագործմամբ:

³ Հեղինակի նման դիրքորոշումը չի համապատասխանում իրականությանը: Պարզապես նրան, ինչպես նաև ցեղասպանությունը տեսած և ապրած արևմտահայության համար անասելի ծանր էր հարազատների և ծննդավայրի կորուստը: Միայն դրանով կարելի է բացատրել նրանց նման վերաբերմունքը քրիստոնեության նկատմամբ: Հայտնի է, պետականության կորստից հետո Հայ առաքելական եկեղեցին դարեր շարունակ ղեկավարել հայ ազգային-ազալուսգրական շարժումները, պահել հայկական դպրոցները և այլն:

Վանի ժողովրդի հեղափոխական շրջանը¹, ինչպես վերը նկարագրեցինք Վասպուրականի ամբողջ հայությունն իր անճարակության, թուլության երեսից կոտորվեց: Գյուղեր, քաղաքներ ավերվեցին, դիմադրության ոչ մի փորձ չկատարվեց՝ բացառությամբ Վան քաղաքի բնակչությունից: Եվ 1896 թ. Վանի ժողովրդի ցույց տված դիմադրությունն ապացույց եղավ, դաս եղավ հային, որ միակ փրկությունը մահմեդականի² դեմ զենքով կարելի է հուսալ, ո՛չ խոնարհությամբ ապավինել մահմեդականի ողորմածությանը՝ ստրկաբար գլուխը խոնարհելով:

Եվ Վանի երիտասարդությունը, գիտակցության գալով, հակառակ իրենց խավարի մեջ խարխափող մեծամեծներին՝ սկսվեց հեղափոխական կազմակերպության³ նախնական շրջանը:

Վանում առաջինը հրապարակ եկավ Արմենական կուսակցությունը⁴, գլխավորապես ունևոր դասերից և կարող ուսուցիչներից, ինչպես էր Փոքրոտզալյանը⁵, բայց շատ սահմանափակ ծրագրով: Ապա Հնչակյան⁶ կուսակցությունը, որ շատ ուժեղ մտավորական դեկավարներ չունեցավ՝ մասան իր շուրջը հավաքելու, կազմակերպելու. ծրագիրը մնաց միայն թղթի վրա:

¹ Հեղափոխական շրջան ասելով, հեղինակն ի նկատի ունի 1878 թ. Բեռլինի վեհաժողովից հետո սկսած հայ ազգային-ազատագրական շարժումը:

² Օսմանյան բռնապետության:

³ «Հեղափոխական կազմակերպությունը» պետք է հասկանալ ազատագրական շարժման կազմակերպում և ուժեղացում:

⁴ Արմենական կուսակցությունը հիմնվել է 1885 թ. Վանում: Հիմնադիրն է Մ. Ավետիսյանը (Թերլեմեզյան): Կուսակցությունն ակտիվ մասնակցություն է ունեցել 1896 և 1915 թվականների ինքնապաշտպանական կռիվներին:

⁵ Փոքրոտզալյան Սյրտիչ (1848–1921 թթ.), հայ հասարակական-քաղաքական գործիչ:

⁶ Հնչակյան (Սոցիալ-դեմոկրատական հնչակյան) կուսակցությունը հիմնվել է 1887 թ. Ժնևում: Հիմնադիրներն են մի խումբ կովկասահայ ուսանողներ՝ Ա. Նազալբեկյանը (Նազարբեկ), Մ. Վարդանյանը, Ռ. Խանազատը, Գ. Կաֆյանը և ուրիշներ:

Իսկ Դաշնակցությունը¹, ունենալով արտասահմանյան մտավորական տաղանդավոր գործիչներ, ինչպես Քրիստափոր Միքայելյանը², Ղազարյանը³, Ռոստոմը⁴, Վռամյանը⁵, Ահարոնյանը⁶ և շատ ու շատ գործիչներ, որոնք գործում էին, քե՛ր արտասահմանում, և քե՛ր Տաճկահայաստանում, մեծ ժողովրդականություն ձեռք բերեցին հանդուգն գործունեության համար և գրեթե տաճկահայերի [արևմտահայերի] մեծամաս մասան հարեց դեպի Դաշնակցությունը. ոչ քե՛ր Դաշնակցության ծրագիրն⁷ էր ժողովրդին հետաքրքրում, այլ նրանց սանձարձակ⁸ գործունեությունը՝ զինել ժողովրդին ամեն զնով, և բարձրացնել նրա ռազմատենչ ոգին հանդեպ բռնակալ Թուրքիայի և փրկության դուռ բանալ հայ ճնշվածների [համար]: Եվ իսկապես, Դաշնակցական կուսակցության ղեկավար գործիչներն իրենց ջանքերով, ուղղակի և անուղղակի միջոցներով, մեծ քանակությամբ զենքեր և ռազմամթերքներ կուտակեցին Վանում:

Վանի երիտասարդությունը ոգի առավ, ռազմական փորձարկներով [փորձերով], վարժություններով կուլելու հակում ունեցավ: Դաշնակցության օրինակով զինվելու ջանք թափեցին նաև ռամկավար գործիչները: Այսպիսով, Վանում աչքի զարնված ուժեր հրապարակ եկան:

¹ Դաշնակցություն («Հայ Յեղափոխական Դաշնակցություն») կուսակցությունը հիմնվել է 1890 թ. Թիֆլիսում: Հիմնադիրներն են՝ Քր. Միքայելյանը, Սիմոն Չավարյանը, Ռոստոմը (Ստեփան Չորյան), Խաչատուր Մալումյանը և ուրիշները:

² Միքայելյան Քրիստափոր (1859–1905 թթ.), հասարակական-քաղաքական գործիչ, Դաշնակցություն կուսակցության հիմնադիրներից և ղեկավարներից մեկը:

³ Ղազարյան Հրայր (Ղազարյան Արմենակ, Հրայր Դժոխք, Ուրվական 1864–1904 թթ.), ազատագրական շարժման գործիչ:

⁴ Չորյան Ստեփան (Ռոստոմ, 1867–1919 թթ.), ազգային-ազատագրական շարժման գործիչ: ՀՅԴ անդամ և ղեկավար:

⁵ Վռամյան Արշակ (Դերձակյան Օնիկ, 1870–1915 թթ.), հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ: ՀՅԴ անդամ:

⁶ Ահարոնյան Ավետիս (1866–1948 թթ.), քաղաքական-հասարակական, պետական գործիչ, գրող, հրապարակախոս: ՀՅԴ անդամ:

⁷ Իրականում 1890-ական թվականների կեսերին հայ հասարակությունում առավել մեծ հեղինակություն է ձեռք բերում ՀՅԴ-ն, որն իր հիմնական խնդիրն է համարում Արևմտյան Հայաստանի ազատագրումն օսմանյան բռնապետությունից:

⁸ Խիզախ, անվախ:

1896 թ. կռիվներից հետո, բացի քաղաքի ուժերից, շատ գյուղերի քնակչությունը ևս դիմեց զենք ձեռք բերելուն, և շատ հայաշատ գյուղերի երիտասարդությունը ոգևորված, ծախում է իր ամասունը և զենք ձեռքբերում՝ իր փրկության միակ հույսը զենք ունենալը համարելով, որովհետև օսմանյան պետության բռնակալական երկրում ոչ մի վստահություն [չկար] գույքի, անձի ապահովության համար, բռնակալական սուրը հայի գլխից միշտ եղել է անպակաս, ինչպես դամոկլյան սուրը՝ մազից կախված։ Եվ այսպես, դարեր շարունակ հայ ժողովուրդը տառապել է և տուժել իր անընդունակության համար, որ չի կրցել իր կյանքն ու գույքը բռնակալներից փրկել։

Վասպուրականի ժողովուրդը առանձնապես շատ և շատ անգամներ է տեսած ու կրած է թուրքական բարբաբության մուշնեքը, բայց երբեք փորձ չէր ըրած դիմադրելու բռնության չարիքներին, հլու ոչխարի համբերությամբ փիզը ճկել է թուրքի սրին՝ համարելով [դա] իր ճակատագիրը։ Եվ չեն գտնվել այնպիսի բանիմաց, քաջագնական ոգի ներշնչողներ, որոնք կրնային հայի թմբած հոգուն ուժ ներշնչել և մղելին դեպի բռնության դեմ պայքարելու։ Կրոնական դասը մեռցրեց հայի քաջագնական ոգին¹, ներշնչեց նրան լինել սնվեզու գառ։ Եվ ահա, գայլերն այնքան շատացան, որ գառների թիվը փոքրացավ։

Վանի ժողովուրդը, ինչպես որ նկարագրեցինք, իր թմբած քնից արթնացած, նոր զգաց ինքնապաշտպանության առավելությունը։ Պատրաստվեց, ուժ կուտակեց, բայց դժբախտաբար հայոց այդ անակնկալ պատահականությունները, դավաճանությունները, ազ-

¹ Հեղինակի այս պնդումը չի համապատասխանում իրականությանը։ Տվյալ դեպքում մա հակասում է իրեն։ Ե. Բուրանյանը մեծ գնահատականով, հավանաբար փորձել է իրեն ապահովել խորհրդային իշխանությունների հնարավոր բռնություններից, ուստի մեծ թյուր գնահատական է տալիս հայոց եկեղեցուն։ Հայտնի է, թե ինչպիսի բշտամական վերաբերմունք ունեւ ԽՍՀՄ-ը դեկավարող կոմունիստական կուսակցությունը ընդհանրապես հոգևորականության և եկեղեցու նկատմամբ հատկապես 1920-1930-ական թվականներին։ Պետականության կորստից հետո, ընդհուպ մինչև հայ քաղաքական կազմակերպությունների երևան գալը՝ հայապահպանության և ազատագրական շարժման հիմնական ոգեշնչողը և ղեկավարողը եղել է հայ առաքելական եկեղեցին։

զակործան դավերն անբաժան են եղել հայ ազգից, որը այդ ազգադավ ոճրագործների երեսից տուժել է ու ջախջախվել, կործանվել հոգուտ բռնավորի, ու կատարվեց այն, ինչ որ վանեցու մտքով չէր անցնում:

ՄԻ ԱՆԼՈՒԻ ԴԱՎԱՃԱՆՈՒԹՅՈՒՆ

1908 թվին Վանի Խաչ փողոցի ոստիկանությունը եռուգետի մեջ էր: Ներկայացել էր մի սրիկա անձ, սև զազանային դեմքով մի պատանի, որ ցույց էր տալիս իր հոգեկան փոքրոգությունը՝ համարձակություն¹՝ օսմանյան բռնակալությանն առաջարկելով իր ծառայությունը՝ իր դաժանագույն ոճրագործության մի ծրագիր:

Ոստիկանապետը Վանի ժողովրդին հանրածանոթ մի անձ էր՝ ազահ, ծանոթ էր Վանի ամբողջ երիտասարդությանը՝ որպես հավատարիմ ժանդարմ, տեսնելով լրտես, ծանոթ դավաճան Դավոյին², նախ չի հավատում իր աչքերին, որ [Դավոն] Դաշնակցության զենքերի փոխադրության ակտիվ գործիչ էր ճանաչված, մի պահ երկմտում է, ապա վերցնելով նրան՝ կառք է նստեցնում, տանում, ներկայացնում պոլիսմիստրին³ բարձրագույն պաշտոնյա կոմիսարին և հավանություն առնելով՝ մի քանի ոստիկանների հովանավորությամբ⁴ ուղևորվում է Սուրբ Գրիգոր վանք¹, որտեղ թաքցված էր մեծ

¹ Իրականում՝ դավաճանություն:

² 1908 թ. հունվարի 22-ին, իսկ ըստ այլ տվյալների՝ հունվարի 24-ին կամ 25-ին, ՀՀԴ անդամ դեերցի Դավիթը (Դավո) թուրքական իշխանություններին հայտնում է Դաշնակցության զինապահեստների գտնվելու վայրերը և այլ գաղտնիքներ: Իր դավաճանությունը Դավոն փորձում է արդարացնել նրանով, թե իբր Ա. Մանուկյանը սիրային կապ է ունեցել իր հարսնացուի հետ: Իրականում Դավոն բռնաբարել էր դաշնակցական գործիչներից մեկի բրոջը: Կոմսը պահանջել է Դավոյից, որպեսզի նա ամուսնանա աղջկա հետ, հակառակ դեպքում կանգնելու է հեղափոխական (կոսակցական) դատարանի առջև: Դավոն երկյուղելով իր կյանքի համար՝ դիմել է դավաճանության, սին հույսեր տաժելով, որ թուրքական ոստիկանությունը կապահովի իր անվտանգությունը:

³ Ոստիկանապետին:

⁴ Ուղեկցությամբ:

քանակությամբ զենք և ռազմամթերք՝ այդ դավաճանի գիտակցությամբ² պահեստում պահված: Եվ ոստիկանությունը, այդ առաջին հաջողությունից ոգեշնչված, նրա կյանքի պահպանության համար շրջապատում է ոստիկանական ուժեղ պահակախմբով՝ կասկածելով, որ դաշնակցական տեռորիստները³ չեն ների իր [նրա] կատարած դավաճանությունը, անպատիժ չեն թողնի: Մակայն հանգամանքները շատ դժվար կացության մեջ էին, և ժամ առ ժամ սպասում էին հարմար մոմենտի վրեժ լուծելու նրա կյանքի դեմ⁴, Բայց ուշանում էր⁵:

Մի քանի խոսք նրա դավաճանության դրդապատճառների մասին և ապա Դավոյի սխրագործությունների⁶ շարունակությունը:

Այդ ավազակ հանդուգն սրիկան, Դեեր կոչված քրդական շրջանից, մի քրդախոս ընտանիքի անկիռք զավակ, մտնում է Դաշնակցության շարքերը, որպես համարձակ սուրհանդակ արտաքին տեղերից, մասնավորապես Պարսկաստանից զենքեր փոխադրելու [համար], մանավանդ քուրդ լեզվին լավ ծանոթ, մեծ վստահություն և լավ ընկերական շրջապատ է ստեղծում իր համար՝ առանց կասկածի տակ դնելու իր չար դիտավորությունը ի գործ դնելու համար: [Դավոյն] Սիրահարվում է մի ոմն անձի աղջկա, սակայն աղջկա հայրն ու մայրը, իհարկե, չեն համաձայնվում այդպիսի լածիրակին աղջիկ տալ: Սրիկան սպառնում է ծնողներին՝ վստահ իր ուժին: Բայց, իհարկե չի համարձակվում բռնության դիմել, մանավանդ որ Դաշ-

¹ Վանից և Ս. Գրիգոր վանքից իշխանությունները դուրս են բերում 300 հրացան, 300 հազար փամփուշտ և մեծ քանակությամբ ուժանակ: Հետագայում բռնագրավվեց 200 հրացան, բանտարկվեցին 200-ից ավելի հայեր: Ավելի մանրամասն տես Ասրյան Ա. Ս., Արամ Մանուկյան. կյանքը և գործը (Ազատագրական շարժման և անկախ պետականության վերականգնման ուղիներում), Երևան, 2008, էջ 72-75:

² Գիտության:

³ Ահաբեկիչները:

⁴ Դավոյին ահաբեկել:

⁵ Չգծգվում:

⁶ Պետք է հասկանալ՝ մատնությունները:

նակցության ղեկավար Արամ Մանուկյանը¹ քանիցս զգուշացրել և սպառնացել էր, որ Դավոն հիմար քայլեր չկատարի:

Այդ խուլիզան Դավոն, նկատելով, որ իր բաղձանքին չպիտի հասնի կոպտությամբ, մանավանդ որ աղջկա ծնողները բողոքել էին Արամին, գաղտագողի հետապնդում է աղջկան: Արամը վճռում է Դավոյին այդ քայլի համար կամ զգուշացնել և կամ պատժել, իսկ Դավոն վերջին շրջագայությունից, Դաշնակցության առաջադրանքը կատարելուց հետո քաղաք է վերադառնում՝ սիրտը լի դառնությամբ: Ուզում է Արամին վնասել, երբ ջոկում² է, որ Արամն ուզում է իրեն պատժել: Այդ խուլիզանն ուզում է Արամին խփել, բայց իր ընկերները, որպես վտանգից խուսափելու համար, Արամի կարգադրությամբ բանտարկում են խարխուլ բնակարանում, մինչև կարգադրություն: Իսկ Արամին ծառայող մի թեթևամիտ՝ Խժ-խժ անունով, հիմարաբար, որպես կատակ, Դավոյին ասում է. «Դավո, Արամի հրամանով քո վզին կարմիր թել են անցկացնելու, այսինքն՝ վճռված է, որ քեզ գնդակահարելու են»: Եվ Դավոն, առանց խորհելու, դատելու, տան լուսամուտը խորտակում է և խույս տալիս և գնում է Խաչ փողոցի ոստիկանատուն, առանց խորհելու հետևանքի մասին՝ ուզում է իր վրեժը լուծել Արամից և այդպիսով մեծ աղետի դուռ բանում Վանի հայ ժողովրդի գլխին: Ահա մի մեծ հանդուգն, անգրագետ ոճրագործ, որ եղել է Դաշնակցության վստահելի գործակից:

Ինչ որ արդեն վերը հիշեցինք՝ նրա ներկայանալը ոստիկանատուն, չենք կրկնում, այլ նկարագրում են իր հետագա գործարքը:

¹ Մանուկյան Արամ (Հովհաննիսյան Սարգիս, Սերգեյ 1879–1919 թթ.), ազգային-ազատագրական շարժման, քաղաքական և պետական ակնամարտ գործիչ: ՀՅԴ անդամ: 1915 թ. Վանի ինքնապաշտպանության փաստացի ղեկավար, մայիս-հուլիս ամիսներին Վանի ժամանակավոր վարչության կառավարիչ (նախնական պետ), 1917 թ. վերջին Երևանի Հայոց ազգային խորհրդի փաստացի ղեկավար: 1918 թ. մայիսյան հերոսամարտի ժամանակ ապահովել է հայկական զորքերի քիկունքը: 1918 թ. հուլիսի 24-ից՝ Հայաստանի Հանրապետության Ներքին գործերի նախարար:

² Գլխի է ընկնում:

[Դավոն] Սուրբ Գրիգորում գտնված պահեստի զենքերը հանձնելով չբավարարվեց, այլ ցույց տվեց նաև այն պահեստի զենքերը, որոնք գտնվում էին իր ծանոթ ընկերների պահարաններում¹։ Իր գիտցած ծանոթ պահարաններն իրենց տեղերից թեև փոխադրել էին ուրիշ պահարաններ, սակայն ոչ բոլորը։ Եվ այդ հրեշ սրիկան, թիկունք ունենալով՝ ջենդերմեններով շրջագայում, ամեն ծակ ու ծուկին ծանոթ լինելով մի առ մի դուրս էր հանում զենքի պաշարները՝ հրացաններն ու ատրճանակները, որոնք անհատական զենքեր էին, և ցուցակով, անուններով ձեռքակալել է տալիս այն երիտասարդներին, որոնք չէին համաձայնել զենքը հանձնել։

Եվ ահա բանտերը լցվեցին Վանի աշքի զարնված երիտասարդներով։ Թուրքական գազան ոստիկանությունը գործի դրեց խոշտանգումների գործիքները՝ նախնադարյան ինկվիզիկական չարչարանքներ և խոշտանգումներ։ Դժվար է գրչով նկարագրել տանջանքի այն տեսակները, որ գործի էին դնում բանտում։ Ով որ ծանոթ է թուրքական անցյալի պատմությանը, միայն նա կարող է գաղափար կազմել և երևակայել, թե ինչեր էին կատարում լեմկեմուրները, չինգիզ խանները, ալփասլաններ և հազարավոր արյունոտ թաքարական ճիվաղները, որին փոխարինեց արյունոտ սուլթան Համիդը և իր հետևորդները։ Միթե՞ կարելի է թվել այն ամեն չարագործներին, որոնց անունը սարսափ է առաջացնում, հիշելիս մեր արյունը սառչում է երակներում։

Եվ Վանի ոստիկանական դահիճների ձեռքով հարյուրապիսի երիտասարդ ուժեր արյունաքամ մահ գտան բանտերում։ Թուրք կառավարությունը չբավարարվեց քաղաքով, այլ իր ոստիկանների խմբերն դրկեց գյուղեր՝ զենքեր հավաքելու անվան տու՜ճ գյուղացու տները տակնուվրա անելու և բռնաբարություններ ի գործ դնելու։ Ամբողջ Վասպուրականի ժողովրդի գլխին սև ամպով էր պատած. սարսափը, սուգ ու շիվանը մի քոսոտ քրդի սերունդ ալվազակի երեսից²,

¹ Գաղտնարաններում։

² Արամի մասնակցությամբ գումարված Վասպուրականի ՀՅԴ ղեկավարների արտակարգ ժողովը մահավճիռ է կայացնում Դավոյի նկատմամբ։

որ թուրք կառավարությանն առիթ էր ներկայանում հայ ժողովրդին արյունաքան անելու:

Վանի ժողովուրդը սարսափի մատնված, շվարած դեռ ավելին էր սպասում թուրքական ռեժիմից, երբ մի գեղեցիկ օր Վանի շուկայից վերադարձող կարճիկ հասակով մի երիտասարդ Թերլեմեզյան Տաճատ¹ անունով, սրտապինդ, համարձակ, խուրջինը թևին՝ ատրճանակը մեջը, անտարբեր քայլվածքով ուզում է անցնել թուրքական քաղնիքի առջևից, որտեղ Դավոյի ապաստարանն էր:

Եվ Դավոն առանց կասկածելու, Հուսնի անունով հրամանատարի հետ շրջագայելիս հետազոտում է քաղաքից վերադարձող անցորդներին, հանկարծ տեսնում է իր նախկին ծանոթ Տաճատին և սկսում է Արամի հասցեին սպառնալիքներ կարդալ, իսկ Տաճատը անտարբեր լսում է և մտմտում, առիթը ձեռքից չթողնի, հանգամանքից օգտվելով՝ մի ֆայտոնի անցնելուն, որ Դավոյի ուշադրությունն է գրավում, Տաճատը թույլտվության ազդեցության տակ հանում է ատրճանակը և խիտում՝² գետին տապալելով դավաճանին³, խույս է տալիս կրակելով իր հետապնդողների վրա ու հասնում իր ընկերների մոտ անվնաս:

Այս դեպքից զազազած թուրքերը՝ տեսնելով իրենց բարեբարի գնդակահար լինելը, առանց թույլ կորցնելու, առիթից օգտվելով հարձակվում են շուկայից վերադարձող ժողովրդի վրա, սառը զենքերով սկսում են կոտորածը շուկայից տուն վերադարձող միամիտ ժողովրդի: Անտեղյակ անց ու դարձից, անպատրաստ, մեկ առ մեկ կոտորվում են առանց որևէ դիմադրության:

¹ Թերլեմեզյան Տաճատ (1888–1982 թթ.), ազգային - ազատագրական շարժման գործիչ, ՀՀԴ անդամ: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, անդամագրվելով VII խմբին, մասնակցել է կամավորական շարժմանը: 1917–1920 թթ. մասնակցել է արևմտահայ, գլխավորապես՝ վասպուրականցի զաղթականների կեցրոյան հետ կապված հարցերով: Մասնակցել է 1921 թ. փետրվարյան ապստամբությանը, որի պարտությունից հետո հեռացել է արտասահման:

² Կրակում է:

³ Գործողությունը կատարվում է 1908 թ. մարտի 10-ին:

Բարեբախտաբար, մի պաշտոնյայի հայ կառապանը իր պետին տեղափոխելու համար շուկայից վերադարձող միամիտ ժողովրդին հասկացնում է վերահաս վտանգի [մասին], ետ է դարձնում շուկա ժողովրդին, իսկ ռմանք անտեղյակ՝ ճանապարհին սպանվում են, մինչև որ անգլիական և ռուսական կոնսուլների¹ միջնորդությամբ դադարում է կոտորածը, բայց երկու հարյուրից ավել անմեղ զոհ տալուց հետո:

Չմոռանամ մի դեպք հիշել, որ [տեղի է ունեցել] դավաճանի մահվանից երեք օր առաջ, երբ ոստիկանական մի ջոկատ Այգեստանից դուրս հանած զինամթերքով բեռնված սայլը, Սահակ Բեյի փոսը անցնելու միջոցին մի քանի հանդուգն տղաներ հարձակվում են սայլի վրա և պայթեցնում են այն խմոր², որ թուրքերն անտարբեր փոխադրում էին և կարծելով, որ դավաճանն այդ շարքում է, սպանում են մի ջենդերմեի՝ կարծելով որ Դավոն է: Այդ սրիկան ծպտված է լինում և չեն ճանաչում: Իսկ պայթած ռումբն ահավոր դրդոյուն է հանում՝ սարսափի մատնելով թուրքերին³:

Այս դեպքից հետո խուզարկությունը ժամանակավորապես դադարեցնում են՝ սպասելով նոր ստացած զորական ուժի՝ կասկածելով, որ հայերը դեռ մեծ ուժ⁴ ունեն թաքցրած, կարող են ապստամբել, և դրա համար նոր ուժեր էին ուզում Վան փոխադրել նոր գործողության դիմելու:

Դավաճանի մահից հետո, երբ [իշխանությունները] զինվորական նոր ուժ ստացան, սկսեցին նոր խուզարկություն և թուրքերին հաջողվեց ջրի քահրեզների հորերից, գուցե դավաճանության միջո-

¹ Հյուպատոսների:

² Այդպես է փաստաթղթում:

³ Գործողությունը տեղի է ունենում 1908 թ. հունվարի 25-ին: Մարտը, որին մասնակցում էր մահ Արամը, տևեց մոտ 3,5 ժամ, սակայն չի հաջողվում սպանել դավաճանին: Հայերին հաջողվում է խել ռազմամթերքը, մոտ 15 հազար փամփուշտ:

⁴ Ձենք և զինամթերք:

ցով, ձերբակալել Արամին և իր հետ քաքնված ընկերներին¹, ի միջի այլոց տեղոր կատարող Տաճատ Թերլեմեզյանին, Գևորգ Ճիթեշյանին, Թևոս Դեղտրիկյանին, Միհրան Արարքցյանին շղթայակալ բանտ են տանում՝ թուրքական տանջարան: Բայց ժամանակավորապես տանջանքների չենթարկեցին Արամին և ընկերներին՝ սպասելով Պոլսի բարձրագույն հրամանին:

Ժողովուրդը տագնապի մատնված սպասում էր նրանց անխուսափելի մահվանը, սակայն անակնկալ կերպով երրորդ օրը բարձրագույն հրովարտակով Սահմանադրություն հռչակվեց²: Չեմ կարող նկարագրել այն ուրախությունն ու հրճվանքը, ինչ կատարվեց այդ օրը Վանի հասարակության շրջանում: Վանի ժողովուրդը խելագարի նման դիմեց բանտ՝ իրենց արյունաքամ զավակներին գրկելու. գրկախառնություն, ուրախություն, լաց ու ոտաների կանչ, դիուլ-զուտ-նանների ձայնը երկինք էր բարձրանում: Ազատվեցին բոլոր քաղաքական հանցավորները³, վերադարձան լեռներում [թաքնված] փախստական մարտիկները, ձեռք-ձեռքի տված հայ-թուրք ժողովուրդը երկու օր՝ զիշեր ու ցերեկ խրախճանք կատարեցին առանց աշխատանքի մասին մտածելու:

Վասպուրականի ժողովուրդը Սահմանադրության տոնն էր կատարում. խրախճանքի մեջ էր, երբ լուր հասավ Ադանայի հայկական ողբերգական կոտորած 18000 հայերի [մասին]⁴: Մի ահավոր սև ամպ էր, որ իջավ վասպուրականցու սրտին. ժողովուրդը լրջացավ,

¹ Նրանք ձերբակալվում են 1908 թ. մայիսի 6-ին: Հավանաբար նրանք կենթարկվեին մահապատժի, սակայն երիտթուրքական հուլիսյան հեղաշրջումը ազատ է արձակում նրանց բանտից:

² Երիտթուրքական հեղաշրջումը տեղի է ունեցել 1908 թ. հուլիսի 23-ին, որի արդյունքում վերականգնվում է 1876 թ. օսմանյան սահմանադրությունը:

³ Բանտարկյալները:

⁴ Բացի Ադանայում հայերի զանգվածային սպանություններից (1909 թ. ապրիլի 1-ից 4-ը և 12-ից մինչև 14-ը), հայերի կոտորած է տեղի ունենում Կիլիկիայի մյուս հայկական բնակավայրերում: Ընդհանուր առմամբ գոհվում են 30 հազար հայեր: Կողոպտվում է նաև հայերի ունեցվածքը: Հաճընում, Սիսում և մի շարք այլ վայրերում հայերը կազմակերպում են ինքնապաշտպանություն, ավելի մանրամասն տե՛ն Գասպարյան Ռ. Հ., Հայկական կոտորածները Կիլիկիայում (XIX դարի 90-ական թթ. – 1921 թ.), Երևան, 2005:

մտնտանքի մեջ ընկավ, բայց, բարեբախտաբար, չկատարվեց այն, ինչ որ մենք ևս սպասում էինք, թեև ժողովուրդը լռջացավ, վտանգն անցած համարեց, բայց չհանգստացավ:

Միշտ կասկած, միշտ նոր աղետ էր սպասվում օսմանյան անկայուն պետությունից: Եվ, իհարկե, չսխալվեց, ո՞վ չգիտեր, որ օսմանյան պետությունը՝ մուսուլման ազգը չի կարող քրիստոնյայի բարեկամը լինել: Մեծ վիճակ էր կա երկու ազգության մեջ: Այդ վիճակը դարերով մնացել է անմատչելի և կմնա, բանի դեռ թուրք ժողովուրդը չի հասել եվրոպական բարձր քաղաքակրթության: Նա խավար է և կմնա անփութիս: Թեկուզ եվրոպական կրթությունը, կուլտուրան մտնի Թուրքիա, արմատացած ծուռ համոզումը երբեք չի փոխվում: Աշխատասիրությունը չի կարող արմատ գցել այն ժողովրդի մեջ, որը դարեր ի վեր սովորել է ձրիակերության: Հայն աշխատի, թուրքն՝ ուտի, այդ է լոգունգը, բայց այլևս չկա այն աշխատավոր հայը, որ իր աշխատանքով լեցնի մուսուլմանի՝ անկշտում որովայնը: Չկա այլևս այն աշխատասեր գյուղացին, որ իր աշխատանքի պտուղներով լեցնի օսմանյան դատարկ շտեմարանները: Թուրքն անընդունակ է արհեստի, ստեղծագործության: Այդ է վկայում նույնիսկ թուրք ինտելիգենտ կոչված մասսան, բայց իր գոյությունը պահում է շնորհիվ իր աշխարհագրական դիրքի, եվրոպական շահասեր պետությունների հովանավորության ներքո: Կգա մի օր, որ Թուրքիան գայլի բաժին կդառնա եվրոպական որևէ պետության, թեկուզ առայժմ քարշ տա իր քայքայված պետական մեքենան:

Վերադառնա՞նք Վանի նոր կենցաղին և քաղաքի նկարագրությանը Սահմանադրության հռչակումից հետո:

Վան քաղաքը 1896 թվին ինչպես գիտենք, մի մասը² ավերի մատնվեց. վանքեր, գյուղեր, եկեղեցիներ, դպրոցներ ավերվեցին, քայքայվեցին: Թեև այդ տասը տարում շեները վերանորոգվեցին, սակայն դեռ շատ էր թերի մնացել և Սահմանադրության շրջանում ավելի կուլտուրապես զարկ տվին ոչ միայն վանքերին, այլ ավելի

¹ Նկատի ունի տիրող թուրք և քուրդ վերնախավին:

² Մասամբ:

շատ դպրոցների բարեկարգմանը: Ձեռնարկվեցին թատրոնի և մամուլի բարեկարգման, գրադարանների կարգավորման, ժողովրդին կուլտուրապես բարձրացման [աշխատանքներին]:

Հայ ժողովուրդը՝ որպես ընդունակ, աշխատասեր ժողովուրդ, շատ առաջ կընթանար, եթե չարաբաստիկ պատերազմն առիթ չներկայանար, հայը կուլտուրապես բարձր մակարդակի վրա էր, իսկ թուրք ժողովուրդը նույն խավարի մեջ և որպես պետական ծառայող՝ ոչ մի ձգտում ցույց չտվեց առաջադիմելու, որ գոնե արգելք չհանդիսանար հայի առաջադիմությանը:

Արհեստ, վաճառականություն, կապ արտասահմանի հետ, բոլորը կատարվում էր հայերի ձեռներեցությամբ: Սահմանադրության ժամանակաշրջանում հայերը նույնիսկ պետական ապարատում մեծ առաջադիմություն ցուցաբերեցին և դրա պատճառով թուրք դիվանագետների նախանձը գրգռեցին, հայերի բարձրանալուն փականք դնելու, հայերին մեջտեղից վերացնելու, առիթ էին որոնում, որ իրենք իրենց խախուռ զոյությունը պահպանեն: Ես երբեք չեմ մոռանա իթթիհատ կուսակցության¹ ազատամիտ համարված Թահսին փաշային, որը Վանի կուսակալ եղավ, վաճառականական տուն բացեց հայ վաճառականների դեմ պայքարելու [համար], և ստիպեց թուրք պաշտոնյաներին, որ գնումներն իրենց մագազինից² կատարեն, բայց ոչ մի հաջողության չհասավ և իր գնած ապրանքները նույն վիճակում մնացին: Եվ խնդրեց Վանի հայ վաճառականներին, որ գնեն կեսագին և փակել տվեց այդ առևտրական տունը՝ ասելով. «Մենք՝ թուրքերս, ընդունակ չենք հայի հետ մրցելու, և դրա համար է, որ մենք

¹ «Իթթիհատ»՝ «Միություն և առաջադիմություն» ("İttihat ve terakki") երիտթուրքական կուսակցությունը հիմնվել է 1889 թ.: 1908 թ. երիտթուրքերը գահընկեց են արել սուլթան Աբդուլ Համիդ II-ին և հռչակել օսմանյան Թուրքիայում սահմանադրության վերականգնումը: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին՝ 1914–1918 թթ. երիտթուրքերը ծրագրել և իրականացրել են օսմանահպատակ հայերի ցեղասպանությունը, որին զոհ են գնացել 1,5 միլիոն հայեր: 1919–1920 թթ. Կ. Պոլսում տեղի ունեցած դատավարության ժամանակ երտթուրքերի պարագլուխները դատապարտվել են հեռակա մահապաժի:

² Խանութից:

ուզում ենք հայերին արգելք դառնալ, որ շատ չառաջադիմ են թուրք ժողովրդին խեղդելու: Մենք ձեր փեշերից կախվում ենք, որ չկարողանաք ձեր կուլտուրայով մեզ ստրկացնել»: Ահա մի շատ ազատամիտ կուսակցության համարված անձ, որ պիտի Սահմանադրությամբ կառավարեր այն երկիրը, որ հայերով լցված էր, այն ալ այնպիսի ժողովուրդ, որ վտանգ էր սպառնում, թալանի, կողոպուտի վարժված սնված հայի աշխատանքով, հավատացյալ մուսուլմանը հայի կողքին նստած հավասար իրավունքով, իսկ միամիտ հայ ժողովուրդը հավատաց սոմանյան ազատամիտ համարված իբրիհատ կուսակցության մոլեռանդ, հայատյաց թալեաթներին¹, Ջեմալ² փաշաներին, որոնք ծարավի էին քրիստոնյայի արյունը խմելու, և կատարեցին այն ծրագիրը, ինչ որ Կարմիր սուլթանը իր երեսուներկու տարվա թագավորության [ընթացքում] չկարողացավ հայի բնաջնջումը իրագործել, իսկ թալեաթներ, էմվերներ³, ջեմալներ, Քեմալ¹ փաշաները,

¹ Մեհմեդ Թալեաթ (Թալաաթ) փաշա (1874–1921 թթ.), սոմանյան պետական գործիչ, Օսմանյան կայսրության ՆԳ նախարար (1913–1918 թթ.), մեծ վեզիր (1917 թ. փետրվարի 4-ից մինչև 1918 թ. փետրվարի 9): Հանդիսացել է «Միություն և առաջադիմություն» կուսակցության ղեկավարներից մեկը: Արևմտահայության զանգվածային բռնագաղթի և ցեղասպանության գլխավոր կազմակերպիչներից մեկը: Պատերազմի ավարտից հետո փախել է Գերմանիա: 1919 թ. թուրքական Ռազմական ատյանի կողմից հեռակա դատապարտվել է մահվան: 1921 թ. մարտի 15-ին սպանվել է Բեռլինում վրիժառու Սողոմոն Թեիեբյանի կողմից:

² Ահմեդ Ջեմալ փաշա (1872–1922 թթ.), թուրք քաղաքական և ռազմական գործիչ: «Միություն և առաջադիմություն» կուսակցության ղեկավարներից: 1914 թ. Օսմանյան կայսրության ռազմածովային նախարար: Հայերի ցեղասպանության կազմակերպիչներից և ոգեշնչողներից մեկը: 1914–1918 թթ. Միիիայում գործող թուրքական IV բանակի հրամանատար: Պատերազմում Օսմանյան կայսրության պարտություն կրելուց հետո փախել է Գերմանիա: 1919 թ. թուրքական Ռազմական ատյանի կողմից հեռակա դատապարտվել է մահվան: Խորհրդային իշխանությունները նախատեսում էին Ջեմալին ուղարկել Միջին Ասիա, որտեղ նա պետք է օգներ Էմվերին հակաքրիստոնական «պայքարում»: Սպանվել է 1922 թ. հուլիսի 25-ին Թիֆլիսում վրիժառուներ Պետրոս Տեր-Պողոսյանի, Արտաշես Գևորգյանի և Ստեփան Ծաղիկյանի կողմից

³ Իսմայիլ Էմվեր փաշա (1881–1922 թթ.), սոմանյան պետական և ռազմական գործիչ: Երիտթուրքական «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ: 1913 թ. նշանակվել է ռազմական նախարար, միաժամանակ զբաղեցրել է զինված ուժերի գլխավոր շտաբի պետի պաշտոնը: Հայերի ցեղասպանության գլխավոր ոգեշնչողներից մեկը: Օսմանյան կայսրու-

հայերի վերջնական բնաջնջումը և տեղահանումը արագացրին, և իրենց նպատակին հասան, գրավելով Հայաստան դրախտանման երկիրը՝ ամերիկյան հովանավորության տակ:

ՕՍՄԱՆՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Թուրքական իթթիհատական կուսակցությունը Թուրքիայում հեղաշրջում [կատարելով] թեև տապալեց սուլթան Համիդի թագավորությունը, բայց չփոխեց մոլեռանդ մուսուլմանի հոգին՝ քրիստոնեության հանդեպ տածած իր ատելությունը: Գայլն իր մորթին փոխելով գառան մորթով, միշտ գայլ կմնա իր բնածին հատկությամբ:

Օսմանյան նոր պետական իշխանության գլուխ անցած քալեաթներ, էմիրներ, Ջեմալ փաշաները, թեև բարձրագույն հրամանով սահմանադրություն հռչակեցին՝ «էդելեթ, հուրիյեթ, մասափաթ» («խաղաղություն, ազատություն, հավասարություն, ազգերի եղբայ-

յան պարտությունից հետո փախել է Գերմանիա: 1919 թ. Կ. Պոլսի Արտակարգ ռազմական ատյանի կողմից հեռակա դատապարտվել է մահապատժի ռազմական հանցագործությունների և կայսրության հայ բնակչության կոտորածների համար: Արտասահմանում կապեր է հաստատել Խորհրդային Ռուսաստանի կառավարության հետ և իր ծառայություններն առաջարկել Սեմ Բրիտանիայի դեմ մղվող պայքարում: 1920 թ. սեպտեմբերի 1-ից 7-ը մասնակցել է Բաքվում կայացած Արևելքի ժողովուրդների համագումարին: Օգտագործելով Խորհրդային իշխանությունների հակաանգլիական տրամադրությունները, 1921 թ. կեսերին ժամանում է Բուխարա և դրժելով խոստումը՝ գլխավորում հակախորհրդային բասմաչական շարժումը Սիջին Ասիայում: Նրա նպատակն էր ռուսներին դուրս մղել Սիջին Ասիայից և ստեղծել պանթուրքական պետություն: Սպանվում է 1922 թ. օգոստոսի 4-ին Կարմիր բանակի Թուրքեստանյան III հեծելազորային դիվիզիայի II բրիգադի (հրամանատար Հակոբ Մելքոնյան) դեմ մղված մարտում: Մուստաֆա Քեմալ, Աքաբուրք (1881–1938 թթ.), բուրք պետական, քաղաքական և ռազմական գործիչ: Մասնակցել է Առաջին համաշխարհային պատերազմին: Օսմանյան կայսրության պարտությունից հետո կազմակերպում է «Կուվվալ ի միլլիե» շարժումը, որի նպատակն էր պահպանել կայսրության ամբողջականությունը: 1920 թ. սեպտեմբերին Մ. Քեմալի հրամանով բուրքական բանակը հարձակվում է Հայաստանի Հանրապետության վրա: Հարձակման նպատակը՝ Հայաստանը ոչնչացնելն էր: Տեղի են ունենում հայերի զանգվածային կոտորածներ: 1923 թ. հոկտեմբերին Թուրքիան հռչակվում է հանրապետություն, որի նախագահն է դառնում Մ. Քեմալը:

րութիւն և օրենքի հավասարութիւն»), սակայն այդպէս չեղավ, չեղավ որովհետև մուսուլմանական կրօնը թույլ չէր տալիս, որ երեկվա «ստոր» գլավուրը մի սեղանի շուրջ նստի մուսուլմանի կողքին, և օսմանյան լայնածավալ երկիրը կառավարի այնպէս, ինչպէս քաղաքակիրթ Եվրոպայում: Դա երբեք ձեռնտու չէր մահմեդական ժողովրդին [թուրքերին]:

Սուլթան Մեջիդն¹ իր թագավորության օրում նույն օրենքը հրատարակեց, բայց մնաց թղթի վրա, ի՞նչ նոր պետություն. պաշտոնյաները այդ իրադէմ² ոչ միայն [չ]իրագործվեց, այլ ավելի աղետաբեր եղավ քրիստոնյա ժողովրդի [համար]:

Նույնը և կատարվեց 1908 թվի իթթիհատական սահմանադրության [հետ]: Սակայն հայ և թե մյուս քրիստոնյա ազգությունները անցյալի փորձերից չխրատվեցին և մեծ հույսերով, հավատով հավատացին կեղծ Թուրքիայի պաշտոնյաների հավաստիացումներին:

1908 թվից սկսած քրիստոնյաներին իրենց հավասար համարելով՝ հայ երիտասարդներին թուրքական զինվորական շարքերում մտցրին, դատարաններում, պետական պատասխանատու մարմիններում տեղ գրավեցին, թուրքական պառլամենտում փաշաների կողքին աթոռ գրավեցին հավասար ձայնով, ճոճան ճառերով երկրի բարեկարգության, ժողովրդի ապահովության, բարգավաճման, հին կաշառակեր պաշտոնյաների փոփոխման խոստումներ եղան, որոշումներ եղան և այս բոլոր խոստումները և որոշումները մնացին լոկ որոշում թղթի վրա միայն արձանագրված:

Սահմանադրության այդ նոր շրջանում գուցե կատարվեր փոքրինչ փոփոխություն, եթե չծագեր աղետալի ընդհանուր [համաշխարհային] պատերազմը: Եվրոպական կոնսուլների միջամտությամբ վճռեցին ուղարկել Թուրքիայի ներքին գավառների վերանորոգման

¹ Աբդուլ Մեջիդ (1823–1861 թթ.), Օսմանյան կայսրության XXXI սուլթան (1939–1861 թթ.): Շարունակել է հոր բարենորոգումները, իսկ 1839 թ. հրապարակել է Հաթթի շերիֆ հրովարտակը, որով իր բոլոր հպատակներին, անկախ ազգային և կրոնական պատկանելիությունից խոստացել է կյանքի, գույքի և հավատի ապահովություն և ազատություն: Բարենորոգումները մնացել են միայն թղթի վրա:

² Հրամանագիրը:

համար հսկիչներ, Վանի վիլայեթի համար նշանակեցին Հոֆֆին¹, որը Վան հասավ 1909 թվին², երբ Թուրքիան, որպես Գերմանիայի դաշնակից, սեփերբերլիքե³ հայտարարեց և Հոֆֆը կանչվեց ետ՝ Պոլիս: Թուրքական⁴ վերանորոգումները մնացին անկատար ըստ Թուրքիայի ցանկության:

¹ Համաձայն 1878 թ. Բեռլինի վեհաժողովի 61-րդ հոդվածի, Օսմանյան կառավարությունը պարտավորվում էր Արևմտյան Հայաստանում իրականացնել բարենորոգումներ: Սակայն թուրքական կառավարությունը տարբեր պատերազմի հետևած գում էր դրանց իրականացումը: Առաջին համաշխարհային պատերազմի մախօրյակին, շնորհիվ ռուսական դիվանագիտության, ինչպես նաև բրիտանական և ֆրանսիական, հնարավոր եղավ համաձայնության գալ Արևմտյան Հայաստանում խոստացված բարենորոգումները կատարելու մասին: 1914 թ. հունվարի 26-ին Ռուսաստանի և Օսմանյան կայսրության միջև կնքվում է պայմանագիր: Արևմտյան Հայաստանը բաժանվում է երկու մահանգի, որոնք պետք է ղեկավարվեին Գլխավոր տեսուչների կամ մահանգապետների կողմից: Այդ պաշտոններում նշանակվում են հոլանդացի Վեստենենկը և մոլդեզացի Հոֆֆը: Սակայն սկսած Առաջին համաշխարհային պատերազմը հնարավորություն է տալիս օսմանյան կառավարությանը չեղյալ համարել 1914թ. ռուս-թուրքական համաձայնագիրը:

² 1914 թ. գարնանը:

³ թուրք. seferberlik- զորահավաք:

⁴ հայկական:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Թուրքական պառլամենտի անդամները, նախքան սեփերերիլը հայտարարելը, ձևականոթեն ընդհանուր ժողով գումարեցին Էրզրումում՝ զորահավաքի՝ սեփերերիլը հայտարարելու խնդրի քննարկման [համար], որին պիտի մասնակցեին հայ և թուրք պատգամավորները: Թուրքերի կողմից նշանակվեց Հելմի Բուրհանեդին բեյը, Նազըմ բեյը, իսկ հայ դաշնակցականների կողմից պառլամենտի անդամ Վռամյանը, Ակնունին և Ռոստոմը, որոնք քննարկեցին ներկա պատերազմին մասնակցելու, թե՛ չմասնակցելու հարցը: Հայ պատգամավորների ամբողջ փաստարկները առ ոչինչ համարելով՝ ժողովի մասնակցող թուրք պատգամավորները վճռեցին, սեփերերիլը հռչակել՝ որպես Գերմանիայի դաշնակից Ռուսաստանի դեմ, իսկ հայ պատգամավորները անկախ իրենց համոզմունքներից լուռ ու անձայն հեռացան այդ ժողովից և ենթարկվեցին թուրքերի որոշմանը:

¹ Ի նկատի ունի 1914 թ. հուլիսի 25-ից մինչև օգոստոսի 17-ը Էրզրումում տեղի ունեցած ՀՅԴ VIII Ընդհանուր ժողովը: Վերջինս որոշում է. «Պատերազմի պարագային, յուրաքանչյուր պետության քաղաքացի պետք է կատարել իր պարտականությունները՝ իր պետության նկատմամբ», այնուհետ շտապեցին Բեհաեդդին Շաքիր և Նաճի բեյերը: Նրանք փորձում են համոզել դաշնակցականներին, որպեսզի վերջիններս դրդեն ապստամբել Կովկասի իրենց հայրենակիցներին և կազմեն կամավորական ստորաբաժանույններ: Երիտթուրքական զործիչները, սակայն, հարկադրված են լինում ձեռնումայն *հեռանալ*, երբ բանակցություններ վարող Ռոստոմը, Վռամյանը և Ակնունին *վհայակոչում* են ժողովի որոշումները, տե՛ս Տասնապետեան Հ., Հ. Յ. Դաշնակցութիւնը իր կազմութիւնն միչեւ Ժ. Ընդ. ժողովը (1890–1924), Աթենք, 1988, էջ 108, տե՛ս նաև Ա. Ամուրեան, Հ. Յ. Դաշնակցութեան Ը. (Էրզրումի) Ընդի. ժողովի մասին (Գումարում 1914 թուի Յուլիսի 25-ից մինչև Օգոստոս 17), «Ազդակ Շաքարօրեակ», Beirut, թիւ 2, 27 յունուար, էջ 22–25, թիւ 3, 3 փետրուար, էջ 43–47, թիւ 4, 10 փետրուար, էջ 68–70, թիւ 5, 17 փետրուար, էջ 91–93, թիւ 6, 24 փետրուար, էջ 115–116, 1980: Ռուսաստանցի հետազոտող Վ. Ե. Շաբարովի գնահատմամբ, ՀՅԴ-ն մերժումը լույս բարոզական առիթ դարձավ երիտթուրքերի հակահայ գործողությունների համար, տե՛ս Шамбаров В. Е., За веру, Царя и Отечество! Москва, 2003, с. 371.

Եվ 1909 թ.¹ հռչակվեց ընդհանուր զորահավաք և հայերը՝ որպես օսմանյան կայսրության հպատակ, որպես սահմանադրական օրենքին ենթակա, խումբ առ խումբ դիմեցին հավաքատեղին, թուրքական բանակի շարքերում [զինվորագրվեցին] 20-ից մինչև 40 տարեկան հայեր:

Հետաքրքրական էր տեսնել հայ զորակոչիկների տագնապալի դեմքերը, որոնք անսովոր, շալակած իրենց պարենը դիմում էին թուրքական զորահավաքատեղին՝ արձանագրվելու իրենց տեղամասերում, [իսկ նրանք] որոնք զինվորական ծառայության մեջ էին բանակում ոչ մի փոփոխություն [չենթարկվեցին], իսկ նոր հավաքագրվածները բաշխվում էին ըստ վիլայեթների ջենդերմական բանակներում տեղավորվելու: Գալիս էին հարյուրներով գյուղերից թողնելով գյուղական աշխատանքը՝ վար ու ցանք, կալ ու կոթ, արտերի ցանքերը կծողում ու թափվում էին. չկար աշխատող ձեռք, մորիլիզացիայի ենթարկվեց ամեն ինչ՝ անասուն, որ պիտանի էր բեռ կրելու, գյուղացիների հորերը, մառանները, ինչ որ մթերքներ կային գրավելու, մի խոսքով հայ-քույր աշխատավորի ինչքը, բոլոր ինչ պիտանի էր, գրավում էր հանուն պատերազմի տուրքի (թեքալիֆ հարբիյա²) վաճառականներից, առևտրականներից բռնագրավելու ինչ որ աչքի էր զարնվում: Մի խոսքով անուղղակի թալան ու կողոպուտ հանուն պատերազմի, գյուղացուն ոչ լծկան մնաց, ոչ ձի, ոչ գրաստ. ամեն ինչ պատերազմի համար պիտանի է, թե ոչ՝ հաշվի չէր առնվում:

Ես՝ որպես բանակային, ինձ վիճակվեց լինել արևելյան ճակատ՝ Բուրհանեղին հազարապետի բանակում, որտեղ կային իմ հայրենակիցներից շատ վանեցի երիտասարդներից: Մեր բանակը երեք ամիս գտնվեց իմ ծննդավայրում՝ Արճակ գյուղում, Սարայից երկու ժամ հեռավորությամբ: Երբ Բուրհանեղինի բանակը շարժվեց դեպի ճակատ, տեղի ունեցավ Սարայի մոտ ռուսական բանակի հետ առաջին ճակատամարտը: Երեք ժամ ընդհարվելով թուրքական բանակը, պարտություն կրելով նահանջեց դեպի Արճակ՝ Մոլա Հասան կոչված քրդական գյուղը, և իր բանակը սովի մատնված և ջախջախ-

¹ 1914 թ. հուլիսին:

² Պատերազմական հարկ: Թուրքերեն՝ takalifi harbiye:

ված լինելով, համալրումների սպասելով: [Այդ մարտերում] Հայ բանակայինները մեծ հերոսություն և դիմադրություն ցուցադրեցին՝ արժանանալով Բուրհանեդին բեյի գովասանքին: Ես պաշտոնով պահեստապետ էի. մթերք էի մատակարարում բանակին Արճակի պահեստից, ներկա եղա հազարապետի գովասանքին հայ զինվորների ցույց տված կովին¹: Սակայն պարզվեց, որ ոչ թե ռուսական բանակից պարտվեց թուրքական այդ բանակը, այլ Անդրանիկի² կամավորական բանակի³ հարվածն էր և Բուրհանեդինը զեկուցեց ուր որ պետքն էր:

Եվ անկե հետո սկսվեց թուրքական ղեկավարների խուլ բրթմնջումը դեպի հայ զինվորները և այդ աշնանը թուրքական բանակից անհետացան մի կարգ հայ զինվորներ, մամանավանդ, որ հայտնի դարձավ հայ զինվորների զինաթափումը:

Եվ ես այդ օրից մի պատրվակով ազատվեցի և քաղաք հասա, երբ թուրքական բանակը մեծ տագնապի մեջ էր գտնվում այդ ճակատում:

¹ Այդ ժամանակ Վանում գտնվող ամերիկացի միսիոներ Զլ. Աշրըրը վկայում է, որ ռազմաճակատից հեռագիր է ստացվում Ջեդեթ բեյի անունով: Այնտեղ գովեստով խոսվում էր Վանի մահամզից գորակոչված հայերի մասին, տե՛ս Ussher C. D., Knapp G. H., An American Physician in Turkey. A Narratives of Adventures in Peace and War, New York, Boston, 1917, p. 217.

² Անդրանիկ (Օզանյան, 1868–1927 թթ.), հայ ազգային-ազատագրական նշանավոր գործիչ: Առաջին համաշխարհային պատերազմի ռուս-թուրքական ռազմաճակատում Հայկական I կամավորական խմբի հրամանատար: 1918 թ. հունվարին նշանակվել է Հայկական բանակային կորպուսի դիվիզիայի հրամանատար: Նույն ամսում շնորհվել է ռուսական բանակի գեներալ-մայորի կոչում: 1919 թ. ապրիլին ցրել է ջոկատը և հեռացել արտասահման:

³ Իրականում թուրքական բանակը պարտություն է կրում հրամանատարության թույլ տված կոպիտ սխալների, այլ ոչ թե Անդրանիկի և հայ կամավորների պատճառով: Նշված կեղծ տեղեկատվությունը տարածում է ռուսական Կովկասյան բանակից պարտություն կրած Էնվեր փաշան, որպեսզի թաքցնի օսմանյան III բանակի պարտության իրական պատճառը Սարիղամիշի ճակատամարտում (1914 թ. դեկտեմբերի 22-ից մինչև 1915 թ. հունվարի 4-ը (5-ը): Ինչ վերաբերում է Անդրանիկի կամավորական I խմբին, ապա նա գործում էր հյուսիսային Պարսկաստանում և ապահովում էր տեղի քրիստոնյա՝ հայ և ասորի քաղաքացիական բնակչության տարահանումը ռուսական սահման:

Բուրհանեղինի բանակը ջախջախվելով և համալրում չստանալով, մանավանդ, որ ռուսական բանակի առաջանալուց ահաբեկված, Վանի թուրք ժողովրդին ուզում էին էվակուացիայի¹ ենթարկել: Բայց լսեցին ռուսական բանակի նահանջի [մասին], սրտապնդվեցին և ժողովրդին պահեցին: Թուրք բնակչության մեջ այնպիսի տագնապ էր առաջացել էր ռուսական բանակի առաջախաղացման առթիվ, որ թուրք ընտանիքները ապաստան էին փնտրում իրենց հարևան հայ ընտանիքներում ապաստանելու:

Բայց ռուսական բանակի և կամավորական բանակների² հանկարծահաս նահանջի³ լուրը սարսափ տիրեց [առաջացրեց] Վասպուրականի հայ ժողովրդի [շրջանում]⁴: Եվ այդ սարսափն անտեղի չէր, մանավանդ հայերի ցույց տված համակրանքը դեպի ռուսական բանակի հաջողության [նկատմամբ], երբ գտնվեցին նաև հայ զինվորներ, որոնք լքելով թուրքական բանակը միացան և մտան կամավորական շարքեր և այս գործողությունն աննկատ չմնաց թուրքական կառավարչական տեսչությունից և սկիզբ առավ ատելություն դեպի հայ զինվորները⁵:

Եվ [սկսեցին] բանակների շարքերում հայ զինվորներին զինաքափ անել, «Ամալյա»⁶ բանվորական բանակներում [գումարտակներում] տեղավորել, որ իհարկե կոտորելն, ինչ որ մենք տեսանք ոչ միայն զինվորների, այլև այն քաղաքների հայ բնակիչների [հետ],

¹ Տարհանել:

² Հայ կամավորական ստորաբաժանումները հայտնի էին «փումբ», «գունդ», «ֆանակ», իսկ պաշտոնական ռուսական գրագրություններում՝ «դրուժինա» անուններով:

³ Նկատի ունի 1914 թ. հոկտեմբերի 30-ին ռուսական Կովկասյան բանակային I կորպուսի նահանջը:

⁴ Այդպես է փաստաթղթում:

⁵ Ռուսական բանակի կողմից գերված հայ ռազմագերիների թիվը հասնում էր մոտ երկու հազարի: Նրանք հիմնականում գերվել են մարտական գործողությունների ընթացքում:

⁶ Ամելե, այսինքն սակրավորական կամ բանվորական ստորաբաժանումներ:

որոնք կարող էին ռուսական բանակին օգտակար լինել¹ և այդ թուրքական դիպլոմատ ղեկավարները անխտիր կերպով դատարկեցին հայ բնակչությունից քաղաքներն ու գյուղերը և մասսայական աներևակայելի դաժանությամբ ջարդեցին:

Եթե ռուսական բանակը շարունակեր առաջանալ այն թափով, ինչ թափով սկսել էր առաջանալ դեպի Թուրքահայաստան², թուրքահայերը ոչ միայն աղետալի կորուստի չէին ենթարկվի, այլ մեծ օժանդակություն կրնային ցուցաբերել ռուսական բանակի առաջխաղացմանը, առաջնորդելով ռուսական բանակին՝ գրավել տաճկական ամբողջ տարածքը: Սակայն ռուսական բանակի նահանջը մեծ աղետի դուռ բացեց տաճկահայության համար ի վնաս ռուսական տիրապետության³:

Թուրքական բանակը բաղկացած էր 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ⁴ կորպուսներից, ղեկոտ[եմբերի] 10-ին թատերաբեմ էր ելել Էնվեր վաշան⁵: Էրզրումի գորքերի ականավոր գորապետներից Շուքրի վաշան նպատակ ուներ արշավել Արդվինի, Օլթիի, Սարիղամիշի ուղությամբ՝ մտնել ռուսական թույլ ճակատը, ճեղքել և մտնել ռուսական հողը Արդահանի, Ախալցխայի վրայով և մտնել Թիֆլիս՝ գրավել Կովկասի մայրաքաղաքը, ապստամբեցնել ոչ միայն Կովկասում գտնվող մահմեդականներին, այլ նաև Դաղստանի լեռնականներին և նույնիսկ վրացիներին և նրանց օգնությամբ գրավել ամբողջ Կովկասը:

¹ Թուրքական իշխանությունները զինապարտ և բանակ հայ զորակոչված տղամարդկանց զանգվածորեն սպանում էին, քանի որ ցանկանում էին քաղաքացիական բնակչությանը զրկել իրեն պաշտպանողներից:

² Արևմտյան Հայաստան:

³ 1914 թ. աշմանը Կովկասյան բանակի նահանջը պայմանավորված էր թուրքական III բանակի լայնածավալ հարձակումով, որը հայտնի է Սարիղամիշյան օպերացիա անվամբ:

⁴ Թուրքական III բանակը բաղկացած էր միայն երեք բանակային կորպուսներից՝ IX, X, և XI:

⁵ Էնվերը ռազմաճակատ էր ժամանել 1914 թ. դեկտեմբերի 2-ին, տե՛ս Лорей Г., Операция германо-турецких морских сил в 1914–1918 гг. Перевод с немецкого Е. Шведе, с предисловием Е. Лудри и с примечаниями Н. Новикова, М., 1934, с. 69.

Թուրքական բանակը որոշ հաջողություններ ունեցավ, որով հետև Արդահանի ճակատում ռուսական բանակը թվով քիչ էր, և մահմեդական ազգաբնակչությունը աջակցեց թուրքական բանակին Արդահանի և Սարիղամիշի տակ¹։ Իսկ ռուսական բանակը հավաքեց իր բոլոր ուժերը։ Տաճկական բանակը, դեկտեմբերի 17-ին² Սարիղամիշի մոտ ռուսական ուժին չդիմանալով, սոսկալի ջարդ կրեց։ Արդահանի տակ ջարդ ու փշուր եղավ։ Արդանուշի և Արդվինի շրջանում փախուստի դիմելով դեպի թուրքական սահման՝ ձյունապատ ձորերում թողեց անհամար սպանված և սառած դիակներ։ 9-րդ և 10-րդ [բանակային] կորպուսները գլխովին ջախջախվեցին և 10-րդ [բանակային] կորպուսի զինվորների մեծ մասը գերի ընկան իր զինվորական հրամանատարի Իսսան փաշայի³ հետ։

¹ 1914 թ. աշնանը տեղի են ունենում Կարսի մարզի և Բաթումի նահանգի ռուսահպատակ աջարների և թուրքերի զանգվածային խռովություններ, որոնք ուղեկցվում են հայ բնակչության զանգվածային կոտորածներով և ունեցվածքի կողոպուտով։ Այս մասին մանրամասն տե՛ս Мартыросян Д., Трагедия ватумских армян: просто “резня” или предвестник армянского геноцида?//Родина, Москва, 2010, N 4, с. 68-71, <http://regnum.ru/news/1236705.htm>, Կիրիմյան Ա., Վարդան Մազմանյանի վկայությունները Բաթումի մարզի Տանձոտ գյուղի հայ բնակչության կոտորածների մասին, Բանբեր Հայաստանի արխիվների, Երևան, N 1, 2005, էջ 3-17, Սահակյան Ռ., Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին և ընթացքում ռուս-թուրքական ռազմաճակատում հետախուզական ծառայությունների գործունեության պատմությունից (1914-1917 թթ.), Պատմաբանասիրական հանդես, Երևան, N 3, 2011, էջ 94-119:

² Սարիղամիշի ճակատամարտում թուրքերի կորուստն ահռելի էր։ Թուրքական 90 հազար զինծառայողներից զոհվեց, գերվեց կամ անհայտ կորավ 78 հազարը։ Ռուսական կորուստները կազմում են շուրջ 20 հազար սպանված, ցրտահարված և վիրավոր, տե՛ս Sanders L. von, Sanders Liman von, Fünf Jahre Türkei, Berlin, 1920, s. 54; Масловский Е. В., Мировая война на Кавказском фронте 1914-1917 г. Стратегический очерк, Париж, 1933, с. 133; Лазарн А. де, Мировая империалистическая война 1914-1918 гг., Москва, 1934, с. 132. Օսմանյան ծառայության մեջ գտնվող գերմանական բանակի կապիտան, հետազայում գեներալ Ռ. դե Նոգալեսի կարծիքով Սարիղամիշյան օպերացիայի ընթացքում ոչնչացվեց օսմանյան լավագույն բանակը, տե՛ս Nogales R. de, Four Years Beneath the Crescent, (Trans. from Spanish by M. Lee, with an Introduction by Lietenant-Colonel E. Davis), N. Y.- London, 1926, p. 25.

³ 1916 թ. ամռանը Ալի Իսսան փաշային հաջողվում է թուրք-բաթարական գաղտնի կազմակերպության օգնությամբ փախչել ռուսական գերությունից և

Ռուսական բանակը հաղթանակ տարավ, թուրքերը ջարդված վերադարձան իրենց հողերը, և ի վրեժ ռուսների տարած հաղթության՝ իրենց թույլը թափեցին տաճկահայ անմեղ ժողովրդի գլխին:

Ռուսական բանակը հետապնդելով թուրք բանակին և առաջանալով գրավեց Բասենի դաշտի մի մասը, Ալաշկերտը, Ղարաքիլիսան, Դուտախը, Թափարիզը, Սարայը, Բաշկալեն և Ռերմիայի շրջանը: Հայերը, այդ ռուսական հաջողություններից ոգևորված, ուրախության ցույցերով դիմավորեցին հաղթական ռուսական բանակին թուրք ժողովրդի աչքի առաջ, իսկ երբ տաճիկները [դեկտեմբերի] 10-ին առաջացան Սարիղամիշ, Արդահան, ռուս զորքերը հրաման ստացան նահանջել: Ու կրկին սկսվեց հայերի և թե ասորիների սոսկալի աղետալի վիճակը ռուսներին ցույց տված համակրանքի համար¹:

Ռուս բանակի առաջին առաջխաղացումը թուրք զինվորականության և ազգաբնակչության մեջ սարսափ տիրեց և Սարայից նահանջող Բուրհանեդինի բանակը, որ Մուլա Հասան էր, պարտություն էր կրել ռուսական բանակից, ինչպես վերը հիշեցինք, ահաբեկված, անկանոն, հապճեպ կերպով փախուստ տվեց դեպի Վան, երբ թուրք բնակչությունը սարսափած ապաստան էր փնտրում հայերի տանը, որպես ռուսների բարեկամի: Սակայն ռուսների հանկարծակի նահանջը ոգևորեց թուրքերին և իրենց շարքերը ամրացնելով, ուժեր հավաքելով, իրենց ամբողջ ուժերը միավորեցին հայերից վրեժ լուծելու՝ որպես ռուսներին օժանդակող ժողովուրդ: Եվ չնայած մի փոքր ժամանակ իրենց բանակում գտնված հայ զինվորներին զինաթափ արեցին և մասսայական կերպով ջարդեցին, թե՛ զինվորներին թե՛ ամբողջ հայ բնակչությանը²:

շարունակել գրավել կարևոր զինվորական պաշտոններ: Նա հատկապես աչքի է ընկնում Միջագետքում բրիտանացիների դեմ մղված մարտական գործողություններում:

¹ Իրականում պատերազմը լոկ պատեհ աքիթ էր օսմանյան կառավարության համար ոչնչացնելու արևմտահայերին:

² Ռազմական նախարար Էնվեր փաշան Սարիղամիշի ճակատամարտի պարտության իրական պատճառները քողարկելու նպատակով ամբաստանում է հայ

1914 թ. դեկտեմբերի 10-ին ռուս մահանջող զորքերի հետ շարժվեցին Ալաշկերտ, Դուտախ, Ղարաքիլիսա, Դիադին և Բայազետ գավառների հայությունը: Դրա հետ միաժամանակ գաղթեցին Սարայի, Բաշկալեյի շրջանների և ապա Ուրմիայի, Դիլիմանի, Խոյի և Թավրիզի հայ և ասորի ժողովուրդները¹, տասնյակ հազարավոր ժողովուրդներ մեծ ու փոքր, կին թե սղամարդ, ձգեցին տուն ու տեղ, անասուններ, մույնիսկ անհրաժեշտ պաշարեղեն, լաց ու կոծով ձեռնառնալով, ձմռան սառնամանիքներին ճամբա ընկան դեպի Կովկաս: Ռուսական բանակը քաշվում էր, իսկ թուրքերը առաջանում էին: Ականատեսների պատմածով գաղթականությունը շարժվում էր ահավոր սարսափների տակ:

Դեկտեմբերի 23-ից Կադզվանի, Իզդիրի և Ջուլֆայի ուղղությամբ Երևանի սահմանը կոխեցին ցրտից սառած, քաղցից նվաղած տասնյակ հազարավոր գաղթականության անծայր քարավաններ: Թե՛ ի՞նչ դրության մեջ գտնվեց այդ թշվառ գաղթականությունը, գրչով անհնար է նկարագրել. սառած, կապտած դեմքերով, անհուն զուլումով:

Սարայի, Բաշկալեյի, Ալաշկերտի և վերը հիշատակված բնակավայրերից, որոնք ռուսական բանակի հետ մահանջեցին վատ, թե լավ, հապա ի՞նչ կլինի այն գավառների, գյուղերի բնակչության դրությունը, ուր ոչ ռուսական բանակն է մտել և ոչ փրկության միջոց կարող է ունենալ, երբ հազարավոր թուրքական զինվորներով և քրդական աշիրեթներով² շրջապատված ոչ մի փրկության ելք չունեն:

զինվորներին, որոնք իբր պատճառ են դարձել թուրքական III բանակի պարտության: Դա ազդանշան է հանդիսանում թուրքական բանակում ծառայող հայ զինվորների մեծ մասի զինաթափմանը և կոտորածին:

¹ Ասորի բնակչության ցեղասպանության մասին տե՛ս Саггизов Л. М., Ассирийцы стран Ближнего и Среднего Востока. Первая четверть XX века, Ерewan, 1979, Խոսրոհա Ա. Ա., Ասորիների ցեղասպանությունն Օսմանյան Թուրքիայում և հարակից թուրքաբնակ վայրերում (XIX դարի վերջ – XX դարի առաջին քառորդ), Երևան, 2004:

² Ցեղերը:

Վան վիլայեթի [նահանգի] տասնինը նահանգների [գավառների] հայ բնակչությունը ահ ու սարսափի մատնված, աչքերը հառած դեպի արևելքից ծագող արևը՝ ռուսական հաղթական բանակը, [որը] բայց ուշանում էր, իսկ արյունոտ օսմանյան բանակը, քրդական արմախում հորդանները, իրենց սրերն են սրում հայ ժողովրդից իրենց պարտության վրեժը լուծելու համար, կոդոպտելու ու թալանելու հայի քրտնաջան աշխատանքի պտուղը: Թուրքական ուժը պատում էր անգեն հայ ժողովրդին կոտորելու ու թալանելու, ոչ թե ռուսական հարվածին դիմանալու:

Թուրքական անգոր բանակը, անվստահ իր ուժերին, դիմեց քրդական հորդանների օգնությանը և նոր ուժերով [զենքով] զինեց քրդական համիդեականներին գերմանական զենքերով, տեխնիկայով¹, բանտերից ազատեց գազանաբարո բանդիտներին, գողերին, մարդասպաններին՝ իր գործի ջախջախված շարքերը համալրելու: Որպես օրինակ՝ վերցնենք այն փաստը, որ Բիթլիսի Մոսկան գավառի անվանի ցեղապետ Բշարե Չաթոն, որը 1914 թ. քրդական ապստամբության պարագլուխն էր թուրքական կառավարության դեմ, կալանավորված էր Թուրքիայի² կողմից և կախաղանի էր դատապարտված և նաև նրա մեղսակից Մեյիդ Ալիին և շատերին ազատություն շնորհեց և զինեց, որպեսզի նրանց օգնությամբ կոտորել տա հայ գյուղերի բնակչությանը: Եվ Բշարե Չաթոն Մանազկերտում ստանում է իր 600 հրոսակներին պետք եղած զենքն ու ձին և այդ ուժերով հարձակվեց Արճեշի, Պատմոսի վրա, մեջի [տեղի] բնակչությանը կոտորելուց հետո Բերկրիի վրայով շարժվեց Սարայ: Դժվար չէ երևակայել, թե ինչ ոճիրներ կատարեց Բշարե Չաթոն հայ անգեն ժողովրդի գլխին, իմ գրիչը չի կարող նկարագրել: Եվ այդ չարագործության սարսափի տակ անգեն, անպաշտպան բնակչության կենդանի մնացածները սարսափահար կարողացան փախչել Կովկաս՝ թողնելով հազարավոր դիակներ ճանապարհներին, բացի հայերից, հազարավոր ասորիներ էլ մահվան գիրկն անցան:

¹ Սպառազինությամբ:

² Օսմանյան իշխանության:

Բշարե Չաթոյի հորդաններին միացան մաս մակուոցի, քակուոցի, մլանցի, շկցի, համիդաքրդական¹ [համիդեական] աշիրեթներն և միահամուռ ուժերով խուժեցին հայկական անգեն գյուղերը և գլխովին կոտորեցին, թալանեցին, գեղեցիկ կանանց առևանգեցին, [իսկ] ծերերին, երեխաներին սրախողող արյան մեջ խեղդեցին: Սրի ճարակ դարձան Սարայի վիլայեթում հարյուրավոր գյուղեր և քաղաքներ՝ Արճեշը, Ալջավազը, Բուլանըխի ամբողջ շրջանը՝ ամենահարուստ հայաբնակ Գործոք, Բողազ, Քասան, Հասիստան, Հազարեն և շատ ու շատ գյուղեր: Այս ամբողջ ողբերգությունը կատարվեց ռուսական բանակի նահանջելուց հետո, թե ինչ օգնության հասան ռուսական և հայ կամավորական բանակներից դա պարզ է:

Ի՞նչն էր ռուսական բանակի հապճեպ նահանջի պատճառը, քանի որ թուրքական հզոր կարծած բանակը ջախջախված էր²: Եթե

¹ «Համիդիեն» անկանոն քրդական հեծյալ գնդեր էին, որոնք կազմակերպվել էին սուլթան Աբդուլ Համիդ II-ի կողմից (1891 թ.) և կոչվել էին նրա անունով: Դրանց կազմակերպման հիմնական նպատակն էր՝ ճնշել հայ ազատագրական շարժումները: Կառավարության կողմից նրանց տրվում էր աշխատավարձ, զենք և զինամթերք: Համիդեական գնդերն ակտիվորեն մասնակցում են են 1890-ական թվականների և 1915-1916 թթ. հայերի ցեղասպանությանը: Լուծարվել են 1920-ական թվականներին:

² Իրականում Սարիդամիշի ճակատամարտից հետո ռուսական Կովկասյան բանակը ձեռնպահ է մնում ձմեռային պայմաններում ակտիվ մարտական գործողություններ մղելուց: Անհրաժեշտ էր որոշակի ժամանակ, որպեսզի բանակի մարտակազմը կարգի բերվի ծանր կոիվներից հետո: Բացի այդ, ձմեռային դաժան պայմաններում, երբ բանակն ապահովված չէր անհրաժեշտ հանդերձանքով, հնարավոր չէր անցնել հարձակման: Ռուսական Գերագույն գլխավոր հրամանատարությունը ռուս-թուրքական ռազմաճակատը համարում էր երկրորդական, այդ իսկ պատճառով չէր բավարարում Կովկասյան բանակին անհրաժեշտ քանակությամբ հանդերձանքով: Կովկասյան բանակի հարձակումը սկսում է 1915 թ. մարտ-ապրիլ ամիսներին: Սկզբնապես ռուսական հրամանատարությունը նպատակ չունեի առաջանալ Վանի ուղղությամբ, քանի ունեցած ուժերն անբավարար էր: Միայն Դիլմանի նշանավոր ճակատամարտից հետո, երբ պարտություն է կրում Խալիլ բեյի դիվիզիան, ռուսական զորամասերի հրամանատարները, այդ թվում Խալիլին պարտության մատնած Կովկասյան II հրաձգային բրիգադի հրամանատար գեներալ-մայոր (իետագայում գեներալ-լեյտենանտ) Ֆոմա Նազարբեկովը (Թովմաս Նազարբեկյան), հրաման են ստանում հետապնդել և շրջապատել Խալիլ բեյի դիվիզիան: Վերջինիս հետապնդումը զորքերին բերում է Վան տանող ճանապարհին, որից

ռուսական բանակը չառաջանար և թույլ տրվեր կամավորական բանակներին օգնություն հասնելու Վասպուրականի ժողովրդին, անտարակույս գլխովին չէր կոտորվի հայությունը այնպես, ինչպես որ անօգնական կոտորվեց¹:

Վանից Վռամյանի դիմումները² սուրհանդակի միջոցով Անդրանիկի բանակին, օգնության կանչը, ապարդյուն անցավ, որովհետև ռուսական բանակի գեներալները բարեհաճ չգտնվեցին Անդրանիկին թույլատրելու հայերին օգնության հասնելու³:

Անդրանիկի դիմումները մերժվեցին և կաշկանդվեցին իրենց տեղում, մինչև որ հայերի կոտորածը իր գազաթնակետին հասավ և մեզ համար հարց է ծագում. ինչո՞ւ կամավորական խմբեր կազմվեցին, քանի որ ռուսական բանակը առանց հայկական կամավորական բանակների⁴ իր զինու¹ զորությամբ կարող էր թուրքական անգործ բա-

հետո միայն հաստատանում է Վանը գրավելու խնդիրը: Ավելի մանրամասն տե՛ս Мартirosян Л., Ванская операция-эпизоды армянской и русской истории, Москва, <http://www.regnum.ru/news/1161786.html>

¹ Գեներալ Ֆ. Նազարբեկովն իր հուշերում վկայում է, որ 1914 թ. նոյեմբերի 29-ին «Ադրբեջանական» (Ադրպես էր կոչվում Ատրպատականի աղավաղված անունից) ջոկատի (Կովկասյան կազակային դիվիզիա) հրամանատար, գեներալ Ֆեոդոր Չեռնոգուբովը նույնիսկ ցանկանում էր երկու լեռնային քնդանոթ տալ I կամավորական խմբին՝ Վան արշավելու համար, սակայն Սարիղամիշի ճակատամարտի հետ կապված համընդհանուր մահանշի հրամանը հնարավորություն չի տալիս իրականացնել մտահաղացումը, տե՛ս ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 1, ք. 34:

² Որքան մեզ հայտնի է, նման դիմումներ Վռամյանի կողմից չեն եղել:

³ Հավանաբար Ե. Բուրանյանն ի նկատի ունի 1914 թ. նոյեմբերի 20-ին կամ 21-ին «Ադրբեջանական» ջոկատի հրամանատար, գեներալ Ֆ. Չեռնոգուբովի կարգադրությունը գեներալ Ֆ. Նազարբեկովին՝ առաջարկել Անդրանիկին շարժվել Վան, խոստանալով տրամադրել լեռնային երկու քնդանոթ: Սակայն Սարիղամիշի շրջանում ստեղծված տագնապալի իրավիճակը հարկադրում է հրաժարվել այդ գործողությունից: Ադրբեջանական ջոկատը մահանջում է, տե՛ս ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 1, ք. 34 և շրջ.:

⁴ Ինչ վերաբերում է միայն հայ կամավորական խմբերով թուրքական բանակին ջախջախելու հնարավորության մասին եզրինակի տեսակետին, ապա դա չափազանցված է: 1914–1916 թթ. հայ կամավորների ընդհանուր թվաքանակը 7-ից 8 հազար էր: Ոմանք նշում են մահ 10 հազար: Նույնիսկ 10 հազարի դեպքում հնարավոր չէր հաղթել թուրքական III բանակի զորամասերին, որոնք զինված էր գնդացիներով և հրետանիով: Այս դեպքում Ե. Բուրանյանի մոտ խոսում է ծանր

նակները ջախջախել: Եվ այդ անիմաստ կամավորական անունը միայն զայրույթ առաջացրեց թուրքական շրջանակներում և իրավունք համարեց հայ զինվորներին զինաթափ անելու ու ներքին թշնամի հայերին կոտորելու²:

Ահա հարցեր, որ մեզ³ տաճկահայերիս զբաղեցնում էր [հետևյալը հարցը, թե], ովքե՞ր ծրագրեցին կամավորական բանակ ստեղծելը՝ մի խումբ անհեռատես բախտախնդիրներ, որոնք ծանոթ չէին թուրքական դիպլոմատներին, իսկ հայ դաշնակցական «անմեղ» պարոնները հանուն փառքի, տաճկահայերի ճակատագրի հետ խաղացին և խայտառակ կերպով, տաճկահայության բնաջնջման պատճառ դարձան: Պատմության մեջ սև տառերով պիտի հիշվի ռուսահայ դաշնակցության այն անունները, որոնք ժամանակի ընթացքում կհիշատակվեն³: Այո, հայ դաշնակցական դիվանագետները Չոհրաբեն-

կորուստների մասին տխուր հիշողությունները: Այդ մտքերն էին տանջում արևմտահայության ճնշող մեծամասնությանը: Նրանք չգիտեին, որ ռուս-թուրքական ռազմաճակատը համարվում էր երկրորդական, համաշխարհային պատերազմի ընթացքի վրա որևէ էական ազդեցություն չունեցող ռազմաթափերաբեմ: Դա էր պատճառը, որ Կովկասյան բանակը վերջին հերթին էր ստանում անհրաժեշտ զինամթերքը, ռազմական հանդերձանքը և համալրումը: Եվ նույնիսկ նման պայմաններում ռուսական բանակի հրամանատարությունը, հանձին գեներալ Նիկոլայ Յուդենիչի, կարողանում է տանել մի շարք փայլուն հաղթանակներ: Ռուս-թուրքական ռազմաճակատը միակն էր, որտեղ ռուսական զորքերը որևէ պարտություն չեն կրում: Ահա այս հանգամանքն էր, որ անհասկանալի էր արևմտահայերի համար:

¹ Ջենքի:

² Հեղինակի նման տեսակետը չի համապատասխանում իրականությանը: Հավանաբար նրա տրամադրության տակ չեն եղել այն փաստերը, որոնք վկայում են, որ արևմտահայերի ցեղասպանությունը ծրագրված էր ավելի վաղ, մինչև պատերազմը: Այնպես որ կամավորական շարժումը չի կարելի պատճառ համարել հայերի ցեղասպանության: Այն լոկ առիթ էր հայերի տեղահանությունը և կոտորածները իրականացնելու: Նմանապես չի համապատասխանում իրականությանն այն պնդումը, որ հայերը եղել են «ներքին թշնամիներ»:

Արդեն վերը նշել ենք, որ Ե. Բուրանյանը հուշերը գրել է հետադարձության ժամանակաշրջանում, որը սակայն նրան չէր ազատի հնարավոր պատասխանատվությունից, եթե նրա գրառումներն ընկնեին համապատասխան մարմինների ձեռքը: Ինչ վերաբերվում է ՀՅԴ-ի «մեղսակցությանը» հայերի կոտորածներին, ապա դա ևս չի համապատասխանում իրականությանը: Կամավորական շարժումը Արևելյան Հայաստանում և Ռուսաստանի հայաբնակ վայրերում

ըլ¹, Վարդգեսները² կամ Վռամյանները ամենայն միամտությամբ հավատացին Թուրքիայի պետական փոփոխություններին և երեխայի նման բազմեցին իրենց կողքին, որպես պառլամենտի հավասար անդամների: Արդյո՞ք չճանաչեցիք մահմեդականի [թուրքի] խարդախ կեղծավոր հոգին: Չէ՞ որ ինչքան էլ մահմեդական [թուրք] գայլը ազատամիտ ձևանա, նույն մահմեդական մոլեռանդ հոգին անբաժան կմնա իրենից: Դա պետք է հայը հասկանա, գայլը տմական ապրանք չի դառնա, ինչպես հնում էր ասված: Իսկ մահմեդականը [թուրքը], թեկուզ շատ բարձր կրթություն ստանա, իր չար հոգին իր մեջից դուրս չի գա: Նա գլավուրի [անհավատի] հետ չի եղբայրանա, այլ կոշավի, եթե հնար ունենա, կխմի հայի արյունը, եթե առիթ ներկայանա՝ կքծնի, եթե ուժ չունի հարվածելու, խորամանկության կոլիմի գայլի աներեսությամբ, մինչև իր նպատակին հասնի:

Պատմության մեջ սև տառերով պիտի հիշվի, ռուսահայ դաշնակցության այն անունները որոնք ժամանակի ընթացքում կիիշատակվեն:

Տաճկահայ ինտելիգենցիան՝ մտավորականությունը դեմ էր³ ռուսահայ դաշնակցության այդ սխալ քայլին, բայց ռուսահայերը

սկսվել է անկանոն և տարերային, և այն կանոնավոր հունի մեջ դնելու գործն իր վրա է վերցնում Թիֆլիսի հայկական կենտրոնական բյուրոն, որի կազմում ընդգրկված են եղել ժամանակի աչքի ընկնող հասարակական և կրոնական գործիչները, որոնց թվում մաս է չՅԴ անդամները: Ամբաստանելով «ռուսահայ» դաշնակցականներին», Ե. Բուրանյանը չի նշում, որ շարժման կազմակերպիչների և ղեկավարների թվում էին մաս արևմտահայեր, ինչպես օրինակ Անդրանիկը (I խմբի հրամանատար), Համազասպը (Սրվանձտյան) (III խմբի հրամանատար) և Արշակ Գավաֆյանը (Քեռի, IV խմբի հրամանատար): Ձգալի էր ճան արևմտահայ կամավորների թիվը: Կամավորական շարժումն իրենից ճերկայացրել է համաժողովրդական շարժում:

Չոհրապ Գրիգոր (1861–1915 թթ.), հայ գրող, հրապարակախոս, հասարակական-քաղաքական գործիչ, մասնագիտությամբ իրավաբան: Օսմանյան խորհրդարանի պատգամավոր: 1915 թ. ցեղասպանության զոհերից:

² Սերենկյուլյան Վարդգես (1871–1915 թթ.), հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ: չՅԴ անդամ: Օսմանյան խորհրդարանի պատգամավոր: 1915 թ. Գր. Չոհրապի հետ միասին դաժանաբար սպանվել է «աքսարի» ճանապարհին:

³ Հեղինակ ի նկատի ունի Էրզրումի չՅԴ VIII Ընդհանուր ժողովի (կայացել է 1914 թ. հուլիսի 25-ից մինչև օգոստոսի 17-ը) և Արևմտյան բյուրոյի որոշումները՝

պնդեցին իրենց մտադրությունը և իրենց ճոճուն պրոպագանդայով մեջտեղ բերեցին նաև այն տաճկահայ հեղափոխականներին, որոնք կամա թե ակամա մտան այդ կամավորական շարքերը, բայց ոչ մեծ հավատով, որ կարող են տաճկահայությանը օգտակար լինելու և փրկելու, քանի որ Ռուսաստանից անկախ գործել չէին կարող և ապացույցն ու ժամանակը եկավ հաստատելու նրանց մտամոլորությունը: Եղան պայքարներ այդ անիմաստ ձեռնարկության դեմ, բայց իզուր կորան նրանց ջանքերը¹:

Ես հիշում եմ Վռամյանի խոսքերի ճշմարտությունը, որ այն ժամանակ արտահայտվեց, երբ կամավորական խմբերը կազմակերպվում էին Կովկասում. սրտի նրմունջով և ցասումով կրկնեց, որ կամավոր անումը Թուրքիան մեզ վրա էժան չի նստեցնի, միայն հուսամ, որ իմ գուշակությունը չիրականանա, թեև գրավոր, իր նամակով իսկ,

չկազմել կամավորական խմբեր: Հայ հասարակության ճնշող մեծամասնությունը Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին իր ողջ եռանդը, նյութական ու մարդկային ներուժը նվիրում է արևմտահայության ազատագրությանը: Հատկապես խոստումնալից էին մախապատերազմյան տարիները՝ 1912-1914 թթ. գարունը, երբ 30 տարուց ավելի անվերջ խոստումներից հետո հնարավորություն է ստեղծվում կյանքի կոչել 1878 թ. Բեռլինի վեհաժողովի 61-րդ հոդվածով վճռված բարենորոգումները: Համաշխարհային պատերազմը, սակայն, ի չիք է դարձնում մախապեղած ծրագրերը: Հայությունը հույս ուներ, որ ռուսական բանակը կարճ ժամանակում պարտության կմատնի թուրքերին: Ե. Բուրանյանը, ինչպես այն ժամանակ ոմանք, ենթադրում էին, որ կամավորական շարժումը պատճառ դարձավ, որպեսզի թուրքերն իրականացնեն հայերի զանգվածային բռնազաղծ և կոտորած: Իրականում, կամավորական շարժումը լոկ առիթ էր երիտթուրքերի համար ցեղասպանության ծրագրի մեխանիզմը գործի դնելու համար: Չլիներ կամավորական շարժումը, օսմանյան կառավարությունը կհնարեր այլ առիթ: Հայերի ոչնչացման պետական ծրագրի նպատակը «Մեծ Թուրան» երևակայական պետության ստեղծելու ցանկությունն էր: Հայերը և Հայկական հարցը լուրջ խոչնդոտ էին թուրք կառավարողների համար պանթուրքական ծրագիրն իրագործելու համար:

¹ Իրականում կամավորական շարժումն ունեցավ իր դրական ազդեցությունը: Ռազմաճակատի տարբեր տեղամասերում նրանք ոչ միայն աչքի ընկան իրենց սխրագործություններով, այլև զգալի աշխատանք կատարեցին հայ բնակչության փրկության և քրդական գերությունից ազատագրման գործում: Վկայակոչենք միայն մի փաստ: 1915 թ. մայիսին Վանի և մահանգի հայությունն իր փրկությամբ պարտական էր Արարատյան գնդին, որը հակառակ ռուսական հրամանատարության որոշման՝ մախաձեռնում է առաջացումը դեպի Վան:

զգուշացրեց իր կուսակցության ղեկավարներին, բայց արդեն ուշ էր, ազնիվ մարդը մարգարեացած էր, մանավանդ, որպես թուրքական պառլամենտի անդամ, ծանոթ էր դիպլոմատ թուրք պաշտոնյաներին և նրանց քաղաքական մտքերին:

Այո, տաճկահայ մտավորականությունը շատ լավ ըմբռնում էր Թուրքիայի կողմից այդ վտանգի ահավորությունը, բայց ինչ կարող էին անել, երբ եղածը՝ եղած էր:

Երբ պառլամենտի պատգամավոր Գրիգոր Չոհրապալը դիմում է Թալեաթ փաշային բացատրություն պահանջելով, թե ինչո՞ւ հայ զինվորներին բանակում զինաթափեցին, Թալեաթ փաշան ի պատասխան Չոհրապալին ցույց է տալիս այն անվանացուցակը, որոնք որպես կամավոր կոչվում էին իրենց հպատակությունը ուրացած թուրքական կառավարության դեմ և մի առ մի նշում տաճկահայ[եր]ի անունները [որոնք անդամագրվել են կամավորական խմբերին]:

Ստորև բերում են այն կամավոր խմբապետների անունները, որ Թալեաթի ձեռքին էին որպես կենդանի փաստ:

1. -Անդրանիկ Օզանյան- [Շապին-] գարահիսարցի
2. -Արշակ Կաֆայան (Քեռի)¹-էրզրումցի
3. -Վարդան²- Խանասորի հերոս

¹ Քեռի (Արշակ Գավաֆյան, 1858–1916 թթ.), ազգային-ազատագրական շարժման գործիչ, ՀՅԴ անդամ: Մասնակցել է 1904 թ. Սասունի ինքնապաշտպանությանը և 1905–1906 թթ. հայ-թաթարական ընդհարումներին: 1908 թ. պարսկական հեղափոխության ժամանակ Եփրեմ Խան Դավթյանի օգնականն էր: 1914–1916 թթ. գլխավորել է Հայկական IV կամավորական խումբը: Այժմ է ընկել Սարիղամիշի ճակատամարտի ժամանակ, որի ընթացքում իրեն դրսևորել է որպես հմուտ հրամանատար: Չոխվել է 1916 թ. Ռևանդուզ քաղաքի մոտ տեղի ունեցած ճակատամարտի ժամանակ:

² Մեհրաբյան Սարգիս (Խանասորի Վարդան, 1867–1943 թթ.), ազգային-ազատագրական շարժման գործիչ, ՀՅԴ անդամ: Ակտիվ մասնակցություն է ունեցել հայդուկային շարժմանը: 1896 թ. գարնանը ղեկավարել է Շատալիսի ինքնապաշտպանությանը: 1897 թ. գլխավորել է Խանասորի նշանավոր արշավանքը: 1905–1906 թթ. հայ-թաթարական բախումների ժամանակ ղեկավարել է Ղարաբաղի հայության ինքնապաշտպանական կոիվները: Պատերազմի սկզբում գլխավորել է Հայկական V կամավորական խումբը, որը զենք չլինելու պատճառով չի մասնակցել մարտական գործողություններին: 1915 թ. ապրիլի 1-ից գլխավորել է Արարատյան գունդը, որի կազմում ընդգրկվել են II, III և IV խմբերը: 1916

4. -Արշակ Մեհրաբյան¹ - շուշեցի
5. -Համազասպ Մրվաստյան² - վանեցի
6. -Խաչատուր Ամիրյան (Խեչո)³ - նախիջևանցի
7. -Իշխան Հովսեփ Արղուբյան⁴ - քիֆլիսեցի
8. -Դրո - Դրաստամատ Կանայան⁵ - իգդիրցի

Եվ Թալեաթը զայրացած ճանապարհում է Ջոհրապին և նույն օրը երեկոյան⁶ ձերբակալել է տալիս Ջոհրապին և Պոլսում գտնվող

ք. կամավորական խմբերի լուծարումից հետո հեռացել է ակտիվ քաղաքական գործունեությունից: Ունի անտիպ հուշեր:

¹ Հեղինակը շփոթել է: Նրա կողմից վկայակոչվող Ա. Մեհրաբյանը նույն ինքը՝ Վարդանն է՝ Մարգիս Մեհրաբյանը:

² Մրվանձտյան Համազասպ (1873–1921 թթ.), ազգային-ազատագրական շարժման գործիչ, ՀՅԴ անդամ: 1914–1916 թթ. կամավորական III խմբի հրամանատար: 1918 թ. մարտին մասնակցել է Բաքվի պաշտպանությանը, եղել է հայկական բրիգադի հրամանատար, Նոր Բայազետի զինուժի հրամանատար: Խորհրդային կարգերի հաստատումից հետո ձերբակալվել և 1921 թ. փետրվարին դաժանաբար սպանվել է Երևանի բանտում:

³ Ամիրյան-Գևորգյան Խաչատուր (Խեչո, Դաշնակցական Խեչո, 1868–1915 թթ.), ազատագրական շարժման գործիչ, ՀՅԴ անդամ: 1897 թ. մասնակցել է Խանասորի արշավանքին, 1908 թ. պարսկական հեղափոխությանը: 1914–1915 թթ. II կամավորական խմբի հրամանատարի օգնական և V հեծելավաշտի հրամանատար:

⁴ Արղուբյան Հովսեփ, իշխան (1863–1925 թթ.), ազատագրական շարժման գործիչ, ՀՅԴ անդամ: Մասնակցել է 1897 թ. Խանասորի արշավանքին: Ակտիվ մասնակցություն է ունեցել 1905–1906 թթ. հայ-թաթարական (աղբրեջանական) ընդհարումների ժամանակ, պաշտպանելով հայկական բնակավայրերը: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին կամավորական VII խմբի հրամանատար: ՀՀ հռչակումից հետո խորհրդարանի անդամ, ապա ՀՀ դեսպան Պարսկաստանում:

⁵ Դրո-Դրաստամատ Կանայան (1884–1956 թթ.), նշանավոր ռազմական և քաղաքական գործիչ: 1914–1916 թթ. Հայկական II կամավորական խմբի (դրոմի-նայի) հրամանատար: 1917 թ. ղեկոնեմբերին նշանակվել է Հայկական ազգային կորպուսի կոմիսար: 1918 թ. մայիսին ղեկավարել է Բաշ Ապարանի ճակատամարտը: 1920 թ. նոյեմբերին նշանակվել է ՀՀ զինվորական նախարար: 1920 թ. ղեկոնեմբերի 2-ին Հայաստանի խորհրդայնացումից հետո, որպես անցման շրջանի զինված ուժերի հրամանատար, ղեկավարել է իշխանությունը մինչև Հեղկոմի Երևան ժամանելը: 1923 թ. հեռացել է արտասահման:

⁶ 1915 թ. ապրիլի 23-ի լույս 24-ի գիշերը:

80-ից ավել առաջադեմ¹ մտավորականներին, նաև այն հայ պաշտոնյաններին, որոնք բարձր պոստեր էին գրավում:

Սկսվում է նաև բոլոր մեծագույն քաղաքներից և ավաններից հայ ժողովրդի տեղահանությունը և սոսկալի մասսայական ջարդը. Էրզրում, Երզնկա, Տրապիզոն, Մերաստիա, Այնթափ, Մարաշ, Ջեյթուն, Խարբերդ, Տիգրանակերտ, Ադամա և այն քաղաքները, ուր հայերի [հայությունը] մեծամասնություն է կազմում, բացի Վանից, որ առայժմ հեռու էր վտանգից և տեղահանությունից, իսկ թե Վանը ինչ դիրք է գրավում կապտմեմ հետո:

**ՎԱՆ ԶԱՂԱՔԻ ՏԱԳՆԱՊԸ ԵՎ ԴԻՍԱԴԵԼՈՒ
ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ²
ԴԻՍԱԳՐԱՎԵԼՈՒ ՕՍՄԱՆՅԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ
ՈՏՆՉԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ
ԵՎ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Ինչպես վերը հիշեցինք, Վասպուրականի ժողովուրդը, 1896 թվի կոտորածները աչքի առաջ ունենալով, պատրաստվում էր ինքնապաշտպանության. զինվում էր ինչքան հնարավորություն ուներ: Վասպուրականի ժողովուրդը, եթե դավաճանության երեսից չկորցներ իր կուտակած, ձեռք բերած զենքը, ավելի վստահ կլիներ, անշուշտ շատ չէր մտահոգվի, սակայն չթուլացավ վասպուրականցու կամքն ու ուժը. կարյաց [կարողացավ որոշ] չափով ինքզինքը պաշտպանել, ի կազմակերպվածության շնորհիվ:

Երկրի ծայրամասերից հասած աննպաստ աղետաբեր լուրերը, ռուսական զորքերի նահանջը, կամավորական խմբերի լքվածություն-

¹ 1915 թ. ապրիլի 23-ի լույս 24-ի գիշերը Կ. Պոլսում ձերբակալվում և արստովում են ավելի քան ութ հարյուր հայ մտավորականներ: Հետագայում ձերբակալությունները և արտաքսումները շարունակվում են:

մը¹, ռուսական բանակի գեներալների անբարեհամբույր վերաբերմունքը տաճկահայության հանդեպ, վիատություն կարող էր առաջացնել Վասպուրականի ժողովրդի մեջ, եթե կամքի ուժ և կորով չունենային [վասպուրականցիները]:

Վանեցի երիտասարդությունն ամենայն արիությամբ, պատրաստակամություն ցուցաբերեց արիաբար մեռնել, քան անփառունակ մահով մեռնել: Եվ այս օրհասական ժամին գործի դրեց իր դիմադրական ուժն ու կորովը:

Համոզված, որ կոտորածն անխուսափելի է Վանի համար, Վանի երեք կուսակցական մարմինները² միասնական ուժերով պատրաստեցին ինչ որ հարկավոր էր դիմադրության համար. մախ հարկավոր եղավ կազմել ղեկավար մարմիններ, մարտիկներին անսխալ ուղղություններ և հրահանգներ տալ, կարևոր փողոցներում կռվելու դիրքեր և բրիգադներ³ պատրաստելու և [այն ամենը], ինչ որ պահանջում էր կռիվ մղելու համար:

Անմիջապես դաշնակցության կողմից կազմվեց Զինվորական շտաբ՝ ձեռնահաս և փորձված անձնավորություններից՝ Վոսմյան⁴, Աբամ Մանուկյան, Փանոս Թերլեմեզյան⁵, Կայծակ Առաքել⁶ և ուրիշներ: Ռամկավարներից Եկարյան⁷, հնչակյաններից՝ Հրանտ Գալիկ-

¹ Նկատի ունի այն, որ խմբերը գործում էին ռուս-թուրքական ռազմաճակատի տարբեր հատվածներում:

² Նկատի ունի Սահմանադիր-ռամկավար (նախկին արմենական), Սոցիալ-դեմոկրատական Հնչակյան և Հայ Յեղափոխական Դաշնակցություն կուսակցությունները:

³ Բարիկադներ:

⁴ Հեղինակը սխալվում է ինքնապաշտպանության ղեկավար մարմնում նշելով Վոսմյանին: Վերջինս դավադրաբար ձերբակալվել և սպանվել էր Վանի մահանգապետ Ջևդեթ բեյի հրամանով:

⁵ Թերլեմեզյան Փանոս (1865–1941 թթ.), ազատագրական շարժման գործիչ, նկարիչ: 1915 թ. ապրիլ-մայիսին Այգեստանի Զինվորական մարմնի անդամ:

⁶ Կայծակ Առաքել (Աբաջյան Տիգրան, 1869–1917 թթ.), ազատագրական շարժման գործիչ, ՀՅԴ անդամ: 1904 թ. մասնակցել է Սասունի ինքնապաշտպանությանը: 1915 թ. ապրիլ-մայիսին Այգեստանի Զինվորական մարմնի անդամ:

⁷ Եկարյան Արմենակ (1870–1925 թթ.), ազատագրական շարժման գործիչ, Սահմանադիր-ռամկավար (նախկին արմենական) կուսակցության անդամ: 1915 թ. ապրիլ-մայիսին Այգեստանի Զինվորական մարմնի ռազմական ղեկա-

յան¹ և նրանց խորհրդականները, որոնց հրահանգի համաձայն պետք է ղեկավարվեր կռիվը:

Կազմակերպեցին դիրքերի խմբապետեր, որոնց անունները հարկ չեն համարում մեկ առ մեկ թվել: Կազմվեց ոստիկանական ջուկատ², նախկին Թուրքիայում պաշտոնավարած, փորձված անձե-րից, օրինակ՝ կոմիսար Մկրտիչ Գարասեֆերյան, Ղևոնդ Խանջյան³, ուրիշներ և [նրանց] օգնականներ:

[Կազմակերպվում են] Սանիտարական խմբեր, բռուցիկ խմբեր, գաղթականության⁴ և խմբերին մատակարարող, կենսամթերքներ բաժանող և վերահսկիչ անձեր, ֆայլաներ⁵ քանդված դիրքերը վերա-նորոգելու համար: Եվ ամենակարևորը՝ զինանոց, արհեստանոց խանգարված [վնասված] զենքերի վերանորոգման և նոր վառող պատրաստելու և զնդակներ ձուլելու առաջնակարգ ոսկերիչ, երկա-թագործներից և հյուսներից կազմված խումբ⁶:

վար: Վանի նահանգապետության շրջանում նշանակվել է նահանգային ոստի-կանության «ղեկավար կազմակերպիչ-քննիչ», այսինքն՝ նահանգային ոստի-կանության փաստացի ղեկավար:

¹ Գալիկյան Հրանտ (1889–1938 թթ.), հասարակական գործիչ, Ս.Ղ. հնչակյան կուսակցության անդամ: 1915 թ. Վանի ապրիլ-մայիսյան ինքնապաշտպանու-թյան ժամանակ Ձիվորական մարմնի անդամ:

² Ոստիկանների թվաքանակը 50 էր: Ոստիկանապետն էր Գրիգոր Շոնյանը:

³ Խանջյան Ղևոնդ, ազատագրական շարժման գործիչ, Սահմանադիր-ռամկա-վար (նախկին արմենական) կուսակցության անդամ: ՀԿԿ ԿԿ-ի առաջին քարտուղար Աղասի Խանջյանի հայրը: Մասնակցել է 1915 թ. ապրիլ-մայիս ամիսների Այգեւստանի ինքնապաշտպանությանը: Վանում նահանգային իշխա-նության կազմակերպումից հետո նշանակվել է Վան քաղաքի ոստիկանապետի օգնական, իսկ հուլիսի 1-ից ոստիկանապետի ժամանակավոր պաշտոնակա-տար: Վանի 1915 թ. հուլիսյան նահանջից հետո հաստատվել է Երևանում, որտեղ զբաղվել է գաղթականության, հատկապես Վան-Վասպուրականի վերաշինու-թյան հետ կապված խնդիրներով:

⁴ Վան քաղաքի Այգեւստան քաղամասում ապաստանել էին շրջակա հայ-կական, ինչպես նաև ասորական գյուղերի բնակիչներ:

⁵ Հավանաբար ի նկատի ունի ամրաշեն (սակրավորական) խումբը, որը կառու-ցում էր ամրություններ և վերականգնում էր թուրքական հրետանու կրակից ավերվածները:

⁶ Վանի և նահանգի ինքնապաշտպանական կոիվների մասին ավելի ման-րամասն տե՛ս Ա-Դ-օ, Մեծ դեպքերը Վասպուրականում 1914–1915 թվականնե-րին, Երևան, 1917, Յուշեր Արմենակ Եկարեանի, խմբագրեց՝ Լ. Աճեմեան, Գ.ա-

Եվ այս ամենը կատարվում էր մտածված և հապճեպ կերպով՝ առանց ժամանակ կորցնելու, կազմ ու պատրաստ, ամենայն ոգևորությամբ՝ սպասելով օրհասական ընդհարմանը: Բայց թուրք կառավարությունը չէր շտապում միանգամից հարձակվել քաղաքի վրա, այլ մտադիր էր նախ քաղաքից դուրս՝ արվարձաններից սկսել, քաղաքի ուժը ջլատելու համար, ապա և քաղաքի հաշիվը մաքրելու, համոզված լինելով, որ քաղաքում դիմադրության կհանդիպի:

Այգեստանը եռուզեռի մեջ էր՝ կտրված Քաղաքամեջի հայությունից: Սակայն հետ չմնացին նաև Քաղաքամեջում ապրող քաջամարտիկները՝ ունենալով իրենց շարքերում հասուն խելքի [տեղ] անձինք, որ խելացի կերպով կազմակերպեցին դիմադրական ուժ. մույնը, ինչ որ Այգեստանի ժողովուրդը և կազմակերպությունը:

Ինչպես վերը հիշեցինք Բուրհանեդինի բանակը ռուսական ճակատում պարտություն կրելով, իր բանակով եկավ Վան՝ վրեժ լուծելու: Վանի կուսակալ Թահսին փաշան Պոլիս կանչվեց, իսկ նրա փոխարեն նշանակվեց Բաշկալեի կայմական, հին ոճրագործ Ջևդեթ բեյը¹. Իր չարագործության և ճիվաղային արարքի համար, որ կատարել էր Սարայում՝ Պողոս-Պետրոսում՝ մի արհեստավորի ոտքից ծակել էր տվել² և չարաչար մահով սպանել, դրա համար Նալբանդ Ջևդեթ անունը ստացավ:

Ջևդեթն իր օձային բնավորությամբ և խորամանկությամբ, խաբեբայությամբ և ոճրագործությամբ հայտնի էր Վանի ժողովրդին: Եվ վանեցիները, ճանաչելով նրա օձային բնույթը, զգուշանում էին, բայց Ջևդեթն իր խորամանկ լեզվով մեկ անգամ ևս կատարեց իր շահատակությունը:

հիրե, 1947, Մահակյան Ռ. Օ., Արևմտահայերի ցեղասպանությունը և ինքնապաշտպանական կռիվները 1915 թվականին, Երևան, 2005, մույնի՝ Ինքնապաշտպանական կռիվները Արևմտյան Հայաստանում 1915 թվականին եւ ՀՀ Դաշնակցությունը, Երևան, 2010:

¹ Ջևդեթը ուներ անձամբ էնվեր փաշայի հովանավորությունը, քանի որ նրա կինը ռազմական նախարարի քույրն էր:

² Իրականում հրամայել էր պալատել, որի համար ստացել է «Նալբանդ»՝ «Պալատար» մականունը:

Բուրհանեղին բէյի ջախջախված բանակը համալրվելով, սկսեց հարձակումը Թիմարի [գավառի] գյուղերի վրա: Առաջինը հարձակվեց Բակրակ կոչված գյուղի վրա, բայց գյուղը դիմադրեց, սակայն անհավասար ուժով: Գյուղացիները դիմեցին քաղաքից օգնություն ստանալու և մի խումբ կռվող մարտիկներ՝ Բեյխուտլի Ռուբենի ղեկավարությամբ օգնության հասան և գյուղը փրկեցին կոտորածից ու վերադարձան: Դա առաջին դիմադրությունը եղավ, որ հայ գյուղը զենքով դիմադրեց և չկոտորվեց: Բանակը շարժվեց դեպի Շատախ այն հույսով, որ այդ քաջարի լեռնականներին կընկճեցնեն և կկոտորեն, բայց չարաչար սխալվեցին, որովհետև այնպիսի դիմադրության հանդիպեցին, որ չէին [կարող] երևակայել:

ՇԱՏԱԽԸ ԵՎ ԻՐ ՏԵՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Շատախը¹ կարելի է գյուղաքաղաք համարել, որ շրջապատված է լեռներով և կարելի է ասել լեռնային երկիր, իսկ ժողովուրդը՝ լեռնական: Կենտրոնական Թաղը² Տիգրիս գետի վրա է, իսկ ժողովրդին կարելի է կոչել կուլտուրական, որովհետև կան նրանց մեջ կրթված և պատրաստված հայ պաշտոնյաներ, և տարրական ու միջնակարգ դպրոց: Թաղի, և առհասարակ Շատախի ժողովուրդը կտրիճ անունն էին ստացել նախկինում՝ [կոչվում էին] ոշտունիքցիներ: Ժողովրդի մեծամասնությունը զբաղվում էր արհեստով. շատ հայտնի էր շալագործությամբ: Շատ հարգի էր Շատախի շալը՝ արփան, որ նույնիսկ արտահանվում էր Պոլիս, Վանի շուկա, այժի բրդից գործվածք, որը կոչվում է նուրբ դիֆֆիկ: Կան նաև շատ ընտանիքներ, որոնք զբաղվում են ոչխարաբուծությամբ, իսկ գյուղատնտեսությունը՝ հողի պակասության պատճառով շատ թույլ էր, որովհետև լեռնոտ էր երկիրը:

Թուրքական կառավարությունը շատ խորթ աչքով էր նայում այդ ընթրստ ժողովրդին: Թաղում նստում էր կայմակամը³: Կար նաև սովար քանակությամբ ոստիկանություն: Եվ շատ անգամ են ընդհարվել ժողովուրդն ու ոստիկանությունը, և այդ ժողովուրդը քաջաբար դիմադրել է և չի ընկնվել:

Եվ դրա համար էր, որ թուրքական բանակը նպատակ դրեց նախ և առաջ Շատախի ժողովրդին զինաթափ անել և կոտորել, ապա Վան քաղաքի վրա խուժել, սակայն Շատախի քաջարի ժողովուրդը

¹ Շատախը գավառակ էր Վանի նահանգում, Արևելյան Տիգրիսի ակունքի շրջանում: Նրա հյուսիսային սահմանը կազմում էր Արտոս լեռը, արևմտյանը՝ Մոկսը, արևելյանը՝ Նորդուզի գավառը: Շատախում հաշվվում էր 110 գյուղ, որից 50-ն էին հայկական: Կենտրոնը Թաղն էր, որը բաղկացած 220 տներից: Այն գտնվում էր Սիվոկնա և Աերին Տիգրիս գետերի միախառնման և երեք խորունկ ձորերի միացման տեղում: Արևելյան Տիգրիսից ծախ գտնվում էին քրդական, իսկ աջ՝ հայկական գյուղերը: Հայտնի էր օսմանյան բռնապետության դեմ իր ընթրստություններով, որի համար ստացել էր «Փոքրիկ Ջեթրոն» պատվանունը:

² Թաղը բաժանված էր երեք թաղամասերի՝ Վերին, Ներքին և Ջրաղացի:

³ Գավառակապետ:

շնորհիվ իր անառիկ դիրքի, նախապես կազմակերպված, պատ-
րաստ գտնվեց դիմադրելու ոչ միայն թուրքական հզոր բանակին, այլ
ամենակատաղի քրդական աշիրեթներին, որոնցով շրջապատված
էր: Քուրդ աշիրաթների կատաղիներից էին Շեքրը աղան՝ Բեկ կոչ-
ված, Լեզգին բեկը, Կորթ բեյը և Ֆալաղ ցեղապետ Բրայիմը [Իբրա-
հիմ], Հասան բեկը, Մուստաֆա և Սայտո բեկերը:

Նրանք իրենց չելլոներից կազմած ձիավորներով և ոտավոր
[հետևակ] շրջապատեցին Շատախի շրջանը¹: Բայց ոչ մի հաջո-
րություն չունեցան Թաղ մուտք գործելու. շատախցիների անվրեպ
զնդակները հետ մղեցին քրդական և թուրքական բանակներին² մեծ
կորուստներով, և թուրքական հրամանատարությունը տեսնելով շա-
տախցիների դիմադրական ուժը, դիմեցին Վան, որ Դաշնակցության
դեկավարները միջնորդեն տեղի ունեցած խռովությունները [դադա-
րեցնելու] և խաղաղության անվան տակ կոիվը դադարեցնելու համար:

Ջևդեթը իր դավադիր նպատակով դիմեց Վռամյանին, որ իրենց
կողմից նշանակեն շատախցիներին խաղաղեցնելու կարող անձ:
Թեև Վռամյանը ծանոթ էր Ջևդեթի ինտրիգներին՝ որպես խոհեմուք-
յուն, և ժամանակ շահելու [նպատակով] համաձայնում է Ջևդեթի
[հետ]: Եվ Դաշնակցության կողմից ընտրում են Ջինվորական
[մարմնի] անդամ Իշխանին³ և իր երեք քիկնապահներ՝ Միհրան
Տ[եր]-Մարգարյանին, Վահան Խոռանյանին և Պողոսին, ում անվա-
նում էին Քոթթթ. լավ կովող տղաներով, թուրք երկու պատվիրակնե-
րով և մի քանի ժեմդերմեններով ուղևորվում են Շատախ՝ կովողնե-
րին հանգստացնելու պատրվակով [նպատակով]:

Իշխանն իր ուղևորներով հասնում է Հիրճ կոչված գյուղը՝ Իշխա-
նին հանրածանոթ Շեքրը աղայի բնակարանում իջևանելու՝ որպես

¹ Դիմադրության համար առիթ է հանդիսանում 1915 թ. մարտի 25-ին տեղի ՀՅԴ կոմիտեի աչքի ընկնող գործիչ, ուսուցիչ Հովսեփ Զոլոյանի և հինգ հայերի անօրի-
նական կալանումը: Ապրիլի 9-ին նրանք մահապատժի են ենթարկվում:

² Ջինված ստորաբաժանումներին:

³ Իշխան (Պողոսյան Նիկոլ, Նիկողայոս, 1883–1915 թթ.), հայ ազգային-ազատա-
գրական շարժման գործիչ: ՀՅԴ անդամ: Սպանվում է իր երեք ընկերների հետ
Ջևդեթ բեյի հրամանով:

լավ բարեկամի: Իշխանն իր ընկերներով՝ որպես բարեկամի տուն, անկող, առանց կասկածելու սեղանի. մոտ մտած էին, երբ թուրք [օսմանյան խորհրդարանի] պատգամավոր Վաֆիկ բեյը և իր ժենդերմենները մի պատրվակով դուրս եկած միջոցին հանկարծակի զնդակահարում են Իշխանին և իր երեք ընկերներին ու գլխատում, գլուխները Ջևդեթի մոտ են տանում: Նախքան Իշխանի սպանման լուրը՝ Ջևդեթը Վռամյանին ևս խաբեությամբ իր մոտ է հրավիրում և անակնկալ կերպով ձերբակալում է, մավով ոտարկում է Դատվան և չարաչար կերպով սրախողխող անել է տալիս:

Վանի ժողովուրդը՝ միամիտ և անտեղյակ, սպասում էին Վռամյանի և Իշխանի վերադարձին: Վռամյանը, մախքան Ջևդեթին ներկայանալը, սեղանի վրա թողած երկտողում զգուշացնում է Արամին՝ չխաբվել Ջևդեթին, չգնալ, եթե կանչի, մինչև իր գալը: Թեև Ջևդեթը աշխատում է Արամին ևս ձեռք բերել իր շողոքորթ խոսքերով, սակայն Արամն իր համախոհներին¹ լսելով՝ չզնաց և չանցած մի օր, Իշխանի և իր ընկերների սպանման բոթը կայծակի արագությամբ հասավ Վանի ժողովրդին, Վռամյանի Դատվան ոտարկելն ևս ավանցի մավարարների կողմից հաղորդվեց, և ահա Ջևդեթն իր խաբողախության բողի տակ երկու դաշնակցական դեմքեր մեջտեղից վերացնելով, հույս ուներ Վանի ժողովրդին ծնկի բերել և բնաջնջել, բայց իր չար նպատակը չկարողացավ իրագործել:

Վռամյանի, Իշխանի և իր քաջարի տղաների մահվան լուրը սև ամպի նման պատեց վանեցի ժողովրդի սիրտն ու հոգին, այլևս դառնության բաժակը լցված էր, Վանի այր թե կլին վրեժխնդիր լինելու կոչ էր մըմնջում, և ամեն ոք դիմում էր ժամ առաջ վրեժխնդիր լինելու գազանաբարո Ջևդեթից և իր զորաբանակին հարված հասցնելու, ցույց տալու թուրքական կեղծ խաբեբայության ստորաքարշ, լկտի կեղծավորությունը: Ստորահոգի Ջևդեթը տեսնելով, որ իր կեղծ խոստումներով, խաբեությամբ չի կարող իր բաղձանքին հասնել, դիմեց զենքի ուժին:

¹ Արամին հետ է պահում այդ քայլից Գևորգ Ճիբեչյանը:

[Ջևղեթը] Լավ իմանալով, որ հայերը լավ պատրաստված են դիմադրելու, աշխատեց լավ դիրքեր գրավել քաղաքը շրջապատելու [համար], և մի խումբ զինվորներ դրկեց գերմանական շրջանակ¹ տեղավորելու, որպես գերմանական հիմնարկի, գերմանական պաշտպանության անվան տակ՝ գրավել կարևոր ստրատեգիական դիրք:

Սակայն հայերը այդ լավ հասկանալով, մի քանի կտրիճ տղաներով արգելք դարձան՝ զնդակահարելով մոտեցող խմբին: Թուրքերը, մի քանի զոհ տալով, խույս տվեցին՝ թողնելով իրենց մի քանի զոհերին, իսկ հայ կտրիճներից պատահաբար զովեց մի կտրիճ հերոս Եղիա² անունով: Եվ այսպես սկսվեց Վանի ինքնապաշտպանական կռիվը 1915 թվի ապրիլի 7-ին³:

¹ Նկատի ունի Այգեստանում գտնվող գերմանական միսիոներական հիստատոսությունը:

² Իրականում 1915 թ. ապրիլի 7-ին, վաղ առավոտյան, թուրք զինվորները հարձակվում քաղաքի մոտ գտնվող Շուշանց գյուղից Վան վերադարձող մի խումբ հայ կանանց վրա: Եղիա Նախշունյանը և Հակոբ Տիվիրզյանը միջամտում են՝ ցանկանալով պաշտպանել կանանց: Թուրքերն անսպասելի կրակ են բացում: Դրանից հետո սկսում է փոխհրաձգությունը և Վանի հերոսական ինքնապաշտպանությունը:

³ 1914 թ. սկզբներին Վանում բնակիչների թիվը 41 հազար էր, որոնցից մոտ 23 հազարը հայ, իսկ 18 հազարը՝ մահմեդական, հիմնականում թուրքեր:

ԸՆԴՀԱՐՈՒՄ ԱՎՈՅԻ ԴԱՐՈՒՄ

Թուրք զորքը, առաջին հարվածը ստանալով, մահանջեց դեպի իր դիրքերը՝ լավ պատրաստվելու նպատակով: Թուրքերն իրենց ուժերը, թնդանոթները տեղավորեցին Հաջի Բեքրի զորանոցում, մի քանի թնդանոթներ՝ Ջըմզըմ [կոչվող] բլրի վրա, իսկ մի քանի թնդանոթ էլ Սահակ բեյի կողմը:

Թուրքերի դիրքերի ամեն մի ամրության [հայերը] պատասխանում էին հայկական փոքրաթիվ դիրքերով, իրենց որոշ անուններով՝ Դարդանելի, Շահպանդարի, Խաչ փողոցի, Հանկոյսների, Սահակ բեյի, Դաբաղ Խերոյի, Բուտնությանի և այլևայլ տասնյակ դիրքերով, որոնք ութ-տաս կովոդ քաջերով, հրաշքներ գործեցին իրենց հանդգնությամբ:

Թուրքական հրետանին ապրիլի 6-ին¹ ամեն կողմից թնդանոթներով, հրացանային համազարկերով, անհամար հրացանների տեղատարափ թափեցին Այգեստանի վրա հայերին ահաբեկելու և շփոթեցնելու նպատակով, [սակայն] փորձերն ապարդյուն էին: Հայ քաջարի մարտիկները պատասխանում էին հատուկեմտ հրացանաձգությամբ, միմիայն ի հարկին, իսկ երբ զորքն ու խուժանը փորձ էին անում առաջանալ, մարտիկները դուրս էին գալիս իրենց դիրքերից, կրակ տեղում նրանց գլխին և խուժանը, մեծ զոհեր տալով, մահանջում ու փախուստի էր դիմում: Կատարվեցին շատ փորձեր թուրքերի կողմից և ամեն անգամ [նրանք] մեծ զոհեր տալով՝ փախուստի դիմեցին: Հայ զինվորական շտաբի² հրահանգի համաձայն՝ ոչ մի ան-

¹ Ապրիլի 7-ին:

² Բնակչությանը սպառնացող վտանգը հարկադրում է Վանի հայությանը դիմել արտակարգ միջոցների: Ապրիլի 5-ին քաղաքի առավել հայտնի թաղամասում՝ Այգեստանում կազմակերպվում է «Վանի ինքնապաշտպանության զինվորական մարմին», կարճ՝ Զինվորական մարմին: Նրա անդամներն էին՝ Արմենակ Եկարյանը (զինվորական ղեկավար), Կայծակ Առաքելը, Բուլղարացի Գրիգորը, Փանոս Թերլեմեզյանը, Ա. Մանուկյանը և ուրիշներ: Ինքնապաշտպանության իրական ղեկավարը և ղգին Ա. Մանուկյանն էր:

պատակ գնդակ չփչացնել. պատասխանել, երբ հարկ է լինում: Իսկ թուրքերն օր ու գիշեր անհամար հրաձգություն էր, որ անձրևի տարափի մեծ թափում էին՝ առանց վնաս հասցնելու հայ մարտիկներին: Թնդանոթներից քանդված դիրքերը գիշերով էլ ավելի ամուր էին վերանորոգվում՝ ամուր պատնեշներ լինելու համար: Թուրքերը, գազազած այս անակնկալներից, ավելի ու ավելի էին խստացնում իրենց համազարկերն անմպատակ, սակայն չէին համարձակվում ոչ մի քայլ առաջանալ:

Այդ համազարկերի պատասխանն էր հայերի նվազախումբը¹, որ ամեն դիրքեր մտնելով, նվազախմբի երաժշտության տակ, քաջալերում և իրենց երգերով կատաղեցնում էին թուրք անճարակ զինվորներին, և այլևս ի՞նչ միջոցի դիմեր խարդախ Ջևդեթը, երբ տեսնում էր իր բանակների անճարակությունը և հայերի հանրագնությունը: Խայտառակված իր անգործությունից՝ անմիտ միջոցի է դիմում՝ ուղարկելով հայ վաճառական Ճիթեչյան Գալուստ Էֆենդիին, որպես պատգամախոս և առաջարկելով իր պայմանները, որ եթե հայերն իրենց զենքերը վար դնեն և անձնատուր լինեն մեր բարեխնամ պետությանը, կների և վնաս չի հասցնի:

Ինչքան հիմար և ծիծաղելի խոստում, կարծելով վանեցու միատնությունը, և ապա սպառնալիք բերել՝ բեյի բանակի ահավոր ուժով հայերին բնաջնջել: Իհարկե, պատասխանն այդ հայ պատգամավորին եղավ ծիծաղը, դավադիր Ջևդեթի պատասխանին և սպառնալիքին, երբ մենք լսեցինք ռուսական ճակատում, Դիլիմանի² քով գլխո-

¹ Հայտնի էր «Ֆանֆառ» անվամբ: Ինքնապաշտպանության մասնակիցը վկայում էր. «Սեր ոգևորությունը մոլեգնության հասավ, երբ դուրսեն գոռացին՝ Ֆանֆառ եկավ, Ֆանֆառ: Չէինք հավատար, որ այդ դարոցական պատանիները ինքզինքնին պիտի վտանգեն՝ մտնելով կռվի ամենատաք տեղը», տե՛ս «Վան-Տոսպ», Թիֆլիս, 28 ապրիլի 1916, թիվ 22-23, էջ 4:

² Դիլմանի ճակատամարտն իր նշանակությամբ չէր գիջում Սարիղամիշի ճակատամարտին: Խալիլ բեյը հավաքական II դիվիզիայի զլխավորությամբ ցանկանում էր Դիլմանի մոտ ջախջախել ռուսներին, ապա շարժվել Նախիջևան ու Գանձակի մահամզ: Այստեղ իր շարքերը համալրելով տեղի մահմեդական բնակչությունից՝ փորձելու էր առաջանալ և Կովկասում հրահրել հակառուսական մեծ ապստամբություն: Գնդապետ Խալիլ բեյի դիվիզիային պարտության է

վին ջախջախված ռուսական հզոր բանակների կողմից և Անդրանիկի բանակի հարվածներից: Խալիլ բեյի ջախջախված բանակը ոչ թե Վան կարողացավ մուտք գործել, այլ Բիթլիսի գծով խույս տվեց ահաբեկված:

Ջևդեթը, լսելով [տեսնելով] հայերի ուժեղ կամքի գործությունը, իր ճիվաղային՝ գալարումներով հրամայեց էլ ավելի ուժգնությամբ ռմբակոծել քաղաքը, բայց այդ ջանքերը ևս չկարողացան ահաբեկել քաջ կովոդ վանեցի մարտիկներին: Ընդհակառակը, ավելի ոգի առած՝ մարտիկները նոր սխրագործությունների դիմեցին: Վճռեցին Համուդ աղայի դիրքը [գորանոցը] մեջտեղից վերացնել: Մի խումբ չեթենների այն որջը, որը շատ սպառնալիք էր Այգեստանի ժողովրդի ելումուտին: Եվ ձեռնարկեցին Վանի քանքանների [հողափորների] օգնությամբ գետնափոր ճանապարհ բացել մինչև շենքի տակ, ռումբերով պայթեցնել շենքը: Բուլղարացի Գրիգորը¹ այդ ձեռնարկը շտաբից որպես առաջադրանք ստանալով, մի քանի օրվա ընթացքում ի գործ դրեց և քանքանների օգնությամբ հասնելով այդ հսկա շենքի տակ՝ մեծ քանակությամբ վառող՝ դինամիտի օգնությամբ ապրիլի 16-ին պայթեցրեց և հրկիզեց թուրքական այդ հսկա ամրոցը՝ ի փառս հայոց անվեհեր քաջերի, ի սարսափ թուրք հրոսակների, որոնք ահաբեկված գոռում-գոչյունով օգնություն էին աղերսում թուրք անճարակ Ջևդեթի գորքերից:

Ի լրումն այդ քաջագործության՝ երրորդ օրը վարժապետ Տիգրանը՝ կարճահասակ, լրարիկ մի անձ, բայց վեհերոտ սիրտ ունեցող

մատնում գեներալ Ֆ. Նազարբեկովի Կովկասյան II հրաձգային բրիգադը, որի կազմում կռվում էր Անդրանիկի I կամավորական խումբը: Ճակատամարտը սկսում է 1915 թ. ապրիլի 15-ի՝ լույս 16-ի գիշերը: Հիմնական մարտերը տեղի են ունենում ապրիլի 18-ին: Խալիլը ծանր պարտություն է կրում և շտապում է նահանջել: Թուրքերի կողմուտը կազմել է մոտ 2 հազար սպանված իսկ ռուսներինը՝ 600 սպանված և 800 վիրավոր: Կամավորներից զոհվեց 21 և վիրավորվում 55 հոգի:

¹ Բուլղարացի Գրիգոր (Ջյոզյան Գրիգոր, ?-1922), ազատագրական շարժման գործիչ: ՀՅԴ՝ անդամ: 1915 թ. Վանի Այգեստան քաղաճախի ինքնապաշտպանության մարմնի անդամ: 1917 թ. կազմված Վասպուրականի հայկական իշխանությունում զբաղեցրել է զինվորական գործերի վարչի պաշտոնը:

հնչակյանների հին սուրհանդակը, առաջարկում է Ջինվորական շտաբից թույլատրել, որ գնա Արարքի՝ հրապարակում գտնվող զորանոցը հրդեհել, որն անհավատալի էր համարվում՝ որպես այդպիսի վտանգավոր ձեռնարկ։ Թեև շատ ցանկալի կլիներ իհարկե այդ վնասակար զորանոցից ազատվել՝ տալիս են իրենց համաձայնությունը։ Եվ այդ փոքրիկ մարդը շալակում է մի խուրձ կանեփ՝ նավթով քրջված, գաղտագողի մոտենում է գիշերով զորանոցի տակի փայտաշեն կրակակներին և իր շալակած կանեփը տեղավորում է և կրակ տալով՝ բռնկեցնում։ [Ապա] հրապարակով «Մեր հայրենիքը» երգելով, հազարավոր զնդակների տարափի տակ հասնում է իր ընկերներին ողջ և առողջ՝ թողնելով թուրքերին սարսափի մեջ։

Ժամ առ ժամ տարածվում են թուրքիկներ իայ զինվորների սխրագործությունների [վերաբերյալ]։ Թուրք փիլիիների¹ հատուկեմո գնդակահարությունների, դիրքերում եղած մարտիկների ոգևորության, նվազախմբի, ուռաների ուրախության ձայները խլացնում էին թուրքական զորքերի անհամար տեղացող գնդակների տարափի դղրյունը՝ ի գազագունն թուրքերի և Ջևդեթի, որ չկարողացավ իրագործել իր գազանային մտադրությունը և պատրաստվում էր օր առաջ իր թուրք ահաբեկված ժողովրդին էվակուացիայի ենթարկել, մանավանդ լուրեր էին հասնում ռուսական բանակի առաջխաղացման մասին Թուրքիայում²։ Տազմապը և հուսահատությունը պատել էր թուրք ժողովրդին, այլևս հաղթանակի մասին չէին մտածում, այլ՝ իրենց կյանքի փրկության, հայերի վրեժխնդրությունից փրկվելու։ Այդ արյունարբու գազան Ջևդեթը, որ հոխորտում էր, ամեն տեղ մահու սարսափ էր տարածում՝ անգն հայերին կոտորելով, գլխիկոր մտածում էր օձային մարմինը վտանգից փրկել։ Եվ որպես վիրավոր վագր՝ հրամայել էր առանց որևէ կետի նշանառության թնդանոթների գնդակներով ողողել քաղաքը։ Այգեստանում թեև այդ անկանոն հրաձգություններն անմեղ զոհեր խլեցին, բայց հաղթության չհասան։

¹ Ոստիկաններ։

² Արևմտյան Հայաստանում։

Քաղաքամեջի քաջարի մարտիկները, չնայած աննպաստ պայմաններին, սահմանափակված [շրջափակված] թուրքական ամրություններով, նորից քաջաբար դիմացան և մարտնչեցին մինչև վերջ:

Այգեստանի ժողովուրդն ավելի լավ պայմանների մեջ էին, քան Քաղաքամեջի¹ ժողովուրդը: Այգեստանի լայնածավալ արտաքին տարածությունը հնարավորություն էր դարձնում [տալիս] իր մեջ ընդունելու շրջաններից, գյուղերից մագապուրծ եղած գաղթականներին: Շրջանի զինված, թե անզեն հսկայական քանակով ժողովուրդը ցաք ու ցրիվ լցվում էր քաղաք և կովոդների շարքերը մտնելով ավելի ուժեղացնում, թեև հացի և մթերքի նեղություն կբերեին, բայց վանեցիների պահեստների պաշարները դեռ երկար կարող էին բավարարել, թե՛ տեղացի ժողովրդին, թե՛ գյուղերից գաղթածներին: Վանի Տնտեսական մարմինները շատ լավ կերպով դասավորում, պահպանում և հաղթահարում էին ամեն խոչընդոտները:

Ձենքի, վառողի պակասություն չզգացվեց, որովհետև վառողը պատրաստվեց պրոֆեսոր Միմասյանի գիտական միջոցով: Ձենքի մի մասը բերեցին փախստական գյուղացիները, [իսկ մյուս մասը՝] սպանված միլիոններից² մնացած զենքերն էր: Վանը այդ օրերին քաջաբար կովում էր թուրքական հզոր բանակի հետ՝ ետ մղելու նպատակով, Վանի շրջանի գյուղերը շրջապատված էին թուրքական զորքերով և քրդական հորդաններով. կյանքի ու մահվան կռիվ էր մղվում: Արճակի նահանգը մոտ լինելով Սարային, ավելի շուտ ենթակա էր քուրդ - թուրքական հարձակումներին, որն այդ շրջանի կենտրոնական վայրն էր համարվում, որտեղ նստում էր նահանգի մյուսիքը (զավառապետ), հայկական սովաթ բնակչությանը աչքի զարնված գյուղ էր:

¹ Քաղաքամեջի ինքնապաշտպանությունը ղեկավարելու համար կազմվում է Ջիվլորական մարմին: Նրա անդամներն էին՝ Հայկակ Կոսոյանը (ղեկավար), Լևոն Գալճյանը, Միհրան Թորոմանյանը, Միհրդատ Միրզախանյանը, Սարգիս Շահինյանը, Դավիթ Սարգսյանը և Հարություն (Հարո) Ներկարարյանը:

² Նկատ ունի իշխանությունների կողմից զինված քրդերին ու թուրքերին:

Արճակ գյուղը, զուտ հայաբնակ լինելով, բնակչությունը կուլտուրապես և կարողությամբ տարբերվում էր իր շրջակա գյուղերից, քրդական [ցեղերը] և թուրքական կառավարությունը աչքաթող չէր արել այդ գյուղի ավերումը, որովհետև իր [Արճակի] մեջի բնակչության շնորհիվ կապ էր պահպանում արտասահմանի, մասնավորապես Բաքվի հետ: [Այդ] շփումներն ունենալով, բավականին առաջադիմություն էր ցուցաբերում թե՛ նյութապես, թե՛ կուլտուրապես: Ունենալով դպրոց՝ երկու լավ կրթված Երամյան դպրոցավարտ ուսուցիչներով, և մեջի երիտասարդներն էլ հեղափոխական ոգով դաստիարակված էին, դրա համար էլ թուրքական պաշտոնյաներին դուր չէր գալիս այդպիսի գյուղ, ինչպիսին Արճակն ու քովի [հարևան] Խառակոնիս գյուղն էր:

Խառակոնիս գյուղը ևս պակաս չէր Արճակից թե՛ բնակչությամբ, և թե՛ գիտակցությամբ: Գյուղն ուներ մեծ միջնակարգ դպրոց, իսկ բնակչությունը երկու հարյուրից ավելի զուտ հայկական տուն և լավ տնտեսություն: Խառակոնիսը Նաիրի Զարյանի¹ ծննդավայրն էր, որտեղից դուրս են եկել լավ բանաստեղծներ² Աշող, Զիչըզ և ինքնուս լավ պատմիչներ, ինչպես Կուլոյի Մելիքսեթը, Մեղրակը և շատ ու շատեր, բայց չեն թողել իրենց աշխատության գրվածքները:

Ես, շեղվելով բուն նկարագրությունից, [այժմ] անցնեմք այն դեպքին, որը տեղի ունեցավ 1915 թվին, [երբ] այդ երկու գյուղերի միասնական ուժերով թուրքական և քրդական հարձակման [ժամանակ] դիմադրության քաջարի օրինակ տվեցին:

Արճակի շրջանի Բողազ Զեսքնի, Հասիստանի, Տաղվերանի, Հազարենի, Մանդանի փոքրաթիվ հայ բնակիչները ենթարկվեց քրդական հարձակումներին: [Բնակիչների] Մեծ մասը կոտորվեց, ողջ մնացածներն ապավեն գտան Արճակ գյուղում և այդ փախստական ուժերը միացան Արճակի և Խառակոնիսի կովոդ ուժերին և ճակատ դրեցին թուրքերի և քրդերի հարձակմանը հարմարավոր դիրք ընտրելով Խառակոնիս գյուղում, որն ավելի հնարավորություն ուներ

¹ Զարյան Նաիրի (1901–1969 թթ.), խորհրդահայ բանաստեղծ:

² Հավանաբար աշուղներ:

քե՛ղիմադրելու և քե՛ղիմադրելու եղած դեպքում զիգզգազ ճանապարհներով [ժողովրդին] ապահով քաղաք [Վան] անցկացնել:

Թուրքերի և քրդերի հարձակումը Խառակոնիսի վրա տեղի ունեցավ ապրիլի 10-ին, որտեղ կուտակված էին քե՛ղիմադրելու և քե՛ղիմադրելու գյուղերի ժողովուրդը, և քե՛ղիմադրելու ուժերը: Գյուղի մի խումբ կռվող ուժեր համախմբվելով ուժեղ դիմադրություն ցուցաբերեցին և թուրքական զորքերին ետ դուրս շարտեցին և գիշերը ժողովրդին փոխադրեցին Կզլջայի լեռ: [Ապա] Յալգուզ Աղաջի և Կզլջայի ժողովրդին խառնելով, անցան Նաբաթ գյուղ, որը գտնվում էր մի բարձրավանդակի վրա: Եվ ճակատամարտ տալով թուրքական բանակին, մի քանի զոհ տալով՝ անցան Ավերակ գյուղ, որի ուղղությամբ էլ հնարավորություն ունեցան ժողովրդին անվնաս հասցնել Վարազի Կարմրավոր վանք, որն ազատ էր թուրքական ձեռքից: [Բնակչությունը] Բանակելով Կարմրավոր վանքում, Խառակոնիսի Շիրինի ղեկավարությամբ և իր մի քանի օգնականների շնորհիվ [հարմար] դիրքավորվեցին¹: Իսկ Արճակ գյուղի և Խառակոնիս գյուղում մնացած ծերերը և անկարող, հիվանդ ժողովուրդը չկարողանալով փախուստի տալ՝ զոհ դարձան քրդական հրոսակներին, զխռվին կոտորվեցին և այդ շեն գյուղերը ավերի և թալանի մատնվեցին:

Արճակի, Խառակոնիսի և շրջանի գաղթականությունը, ինչպես ասեցինք, դիրքավորվորվեցին Վարազի և Կարմրավորի բարձրունքներում, որը Վանի ամենակարևորագույն ամրություն ունեցող վայրն էր, սակայն Շիրինը և իր օժանդակող խումբն անընդունակ և անփույթ գտնվեց պաշտպանելու այդ կարևոր դիրքը, անճարակ օրը լքեցին առանց ուժեղ դիմադրության և խույս տվեցին քաղաք, քանի որ ճանապարհն ազատ էր Ալգեստան մտնելու [համար], իսկ թուրք զորքերն օգտվելով, առաջ խաղացին և գրավեցին այդ կարևոր դիրքը, վանքը ավերածության մատնեցին իսկ ժողովրդի մի մասը Վարազի լեռները բարձրացան և [այնտեղ] ապաստանեցին, իսկ մի մասը քաղաք տեղափոխվեց:

¹ Բնակչության անցումը կատարվում է Շիրին Եղիազարյանի զխառնվորած մարտիկների օգնությամբ և պաշտպանությամբ:

Շիրինին և իր հետ եղող գործիչներին, որպես անընդունակ դեկավարների պատասխանատվության կանչեցին իրենց անփույթ վերաբերմունքի համար, բայց որպես նախկին գործչի մեղմ վերաբերվեցին շնորհիվ իր նախկին ընկերների միջնորդության պատժից ազատվեցին:

Շատախը մնաց իր բարձրության դիրքում և միշտ համատ կռիվներով իր մեջի ժողովրդին պահպանեց: Գավաշի գյուղերի կռիվող ուժերը, որոնք համատ անհավասար կռիվներ մղելուց հետո, ինչպես Աթանանցի հերոս մարտիկները, երկարատև կռիվներ մղելով մտան Շատախ, և մի մասը լեռներ, ձորեր կոխորտելով անցան Վարագ:

Վանի ժողովուրդի ոգևորությունը և քաջության այդ անօրինակ պայքարը օսմանյան մարզված զինվորների, հազարավոր քրդական աշիրեքների դեմ, մաքառումը [մնան ծանր պայմաններում], մեծ հիացմունք առաջացրեց ամբողջ տաճկահայության շրջանակներում:

Վանի ժողովրդի հերոսական պայքարը օրինակ թող լինի այն ողջ մնացած տաճկահայերին, որոնք ձեռքը ծալած, վիզը երկարացրին օսմանյան անգութ յաթաղանին՝ առանց տարական պայքարի, առանց տարրական դիմադրության և կոտորվեցին առանց մի փոքր արիություն ցուցաբերելու¹:

Վանի փառապանծ հերոս ժողովուրդը, առանց պարծենալու, քաջություն, կարգապահություն, աննկուն կամք և համբերություն ցուցադրելով ջախջախեց թուրքական զորությունը, այդ անպարտելի Ջևդեթի սև բանակը, որը սպառնում էր Վանը ավերակի բույն դարձնել. ամոթապարտ և խայտառակ կերպով մի ափ ժողովրդի հարվածի տակ փախուստի դիմեց հապճեպ, անկազմակերպ կերպով և

¹ Հիրավի, Վանի և նահանգի բնակչության զգալի մասը նախընտրում է զենքը ձեռքին մարտնչել թուրք-քրդական ուժերի դեմ: Սակայն չպետք է մոռանալ, որ նրանց փրկությունը նաև արդյունք էր ռուսական բանակի և հայ կամավորական Արարատյան զնդի առաջխաղացման: Դա, սակայն երբեք չի կարող նսեմացնել դիմադրության այն օրինակները, որոնք ցուցաբերեցին հայերը տարբեր բնակավայրերում, ինչպես օրինակ Մուշ-Մասունում, Շապին Գարահիսարում, Ֆրնտը-ճագում, Մուսա լեռան վրա, Ուրֆայում, Տրապիզոնի նահանգում և այլ վայրերում:

թուրք ժողովրդին մատնեց մահվան ու սովի իր չար նպատակի համար, և թուրք ժողովուրդը ցիրուցան [եղած], ինչպես հայ գաղթականությունը ճանապարհներին մեռած, հյուծված դիակներ թողնելով՝ հասան թուրքական վայրեր, որտեղ ապաստան գտան:

Բացվեց Վասպուրականի արշալույսը 1915 թվի ապրիլի 28-ին¹: Թուրքերի հանկարծահաս փախուստը վասպուրականցիի ազատագրումը թուրքական բռնավորներից, մեծ ոգևորություն առաջ բերին Վասպուրականի ժողովրդի [շրջանում]: [Բնակչությունը] դուրս թափվեց իր կառչած դիրքերից [մայիսի 3-ի լույս 4-ի գիշերը], ազատություն տվեց իր վրեժ լուծելուն, այդ դարերով տանջող, անարգ թշնամի օսմանյան ժողովրդից [կառավարությունից], որին հայն էր կերակրում իր ճակատի թափած քրտինքով առանց վնաս հասցնելու այդ մոլեռանդ, երախտամոռ ժողովրդին՝ այրելով նրանց շենքեր, տները և հայ ժողովրդին հասցրած ավերը՝ արյունն ու կոտորածի թույնը թափեցին հակառակորդի գլխին, իբրև փոխադարձություն հայերի կորստի:

Վասպուրականի ժողովրդի վառված սրտերը, այլևս մոռանալով քրիստոնեական ներողամտությունը, անսանձ կերպով վառեցին, քանդեցին ինչ որ ձեռքն ընկավ, սակայն չհովացավ այդ վրիժառությանը:

Ժողովուրդը վրեժով լցված՝ այրեց Հաջի Բեքրի արյունոտ գինանոցը², Ջըմգըմ բերդի ամրությունը քարուքանդ անելով, գրավելով սարսափ ազդող թնդանոթները, և այն ամենը, ինչ որ ատելի էր: Քաղաքամեջի պաշարված ժողովուրդը նկատելով Այգեստանի թուրքական բների հրկիզումը, «ոտա» կանչելով դուրս ցատկեցին և ներխուժեցին պետական շենքերը. կրակի մատնեցին հեռագրատունը, զորանոցները և հայկական դրոշակը բարձրացրին բերդի աշտարակից՝ որպես հայկական հաղթական դրոշ:

¹ Այդ օրը ստացվում են առաջին տեղեկությունները թուրքական զորքի և բնակչության մահանջի մասին:

² Ձորանոց:

Այգեստանի ժողովուրդը՝ խուռն բազմությամբ դիմեց Քաղաքա-
մեջի բնակչությանը շնորհավորելու և գրկախառնվելու՝ մի ամսվա
կարոտն առնելու իրենց սիրեցյալներից:

Վասպուրականցիների ոգևորությունն իր գագաթնակետին հա-
սավ, երբ երկու օր հետո կամավորական և ռուսական բանակները¹
Վան ժամանեցին և ի նշան բարի գալստյան՝ բերդից թնդանոթների
համազարկով ողջունեցին:

Այգեստանի ժողովուրդը հազարերանգ գույնզգույն ծաղիկնե-
րով, կովոդները շարքի կանգնած, «տտա» գոռալով դիմավորեցին
ռուսական բանակայիններին որպես հայի ազատարարների:

Բայց Վասպուրականի ժողովրդի բաղձանքը, ուրախությունը,
ոգևորությունը շատ կարճ տևեց: Ուրախությանը փոխարինեց սուգն
ու շիվանը, երբ սկսվեց վասպուրականցու ողբերգական վիճակը
երեք ամիս հետո²:

Վանի ժողովուրդը կշտացած, հագեցած երկարատև խրախ-
ճանքներից, գործնականի անցավ իր ազատությունն ապահովելու
ցանկությամբ, դարեր ի վեր կորցրած իր ազատությունը, իր իշխա-
նությունն ու պետականությունը [վերականգնելով], օգտավորվեց նպաս-
տավոր պայմաններից [փորձում էր] պետական, վարչական հիմք
կառուցել, պետական կազմ ստեղծելու, նոր պետական կազմ և վար-
չություն ստեղծելու, քայքայված երկիրը կենդանացնելու հույսով՝
Վանում ռուսական պետության հովանու տակ:

Արամ Մանուկյանը որպես Վանի դաշնակցության վարիչ,
ընտրվեց վարչապետ³, պետական կազմի նախաձեռնող [կազմա-

¹ 1915 թ. մայիսի 5-ի երեկոյան Խեչոյի 150 հոգիանոց հեծելավաշտը հասնում է
Վան: Նրանց դիմավորում է Արամը: Մայիսի 6-ին, առավոտյան ժամը 6-ին,
քաղաք են մտնում II, իսկ ժամը 12-ին՝ IV խմբերը, ապա ռուսական Բայազետի
ջոկատի հիմնական ուժերը գեներալ Ալեքսեյ Նիկոլսկի հրամանատարությամբ:

² Նկատի ունի 1915 թ. հուլիսյան նահանջը Վասպուրականից:

³ 1915 թ. մայիսի 7-ին Ա. Մանուկյանը նշանակվեց Վանի և ազատագրված
գավառների ժամանակավոր կառավարիչ՝ նահանգապետ, քանի որ վայելում էր
Վասպուրականի բնակչության վստահությունը: Նա հանդիսացել էր ապրիլ-
մայիսյան ինքնապաշտպանության փաստացի ղեկավարը:

կերպող] համդիսացավ: Նախ վարչապետն իր օգնականներով հիմնավորվեցին [նշանակվեցին], որոնց մեջ պաշտոն գտան մաս ուրիշ կուսակցությունների աչքի ընկնող ղեկավարները¹, որոնց անունները մեկ առ մեկ թվելն ավելորդ են համարում, որովհետև անփառունակ եղավ նրանց կազմած կառավարությունն ու փոխանակ հայությանը օգտակար լինելու՝ դժբախտության դուռը բացեց [հայի հետագա ճակատագրի առաջ]²:

Չինվորական վարիչներ, դատարան, ֆինանսական վարիչներ, միլիցիական խմբեր, հսկիչ մարմիններ և այլն և այլն: Այդ կառավարական անվանական ինքնիշխանությունը երեք ամիս կյանք ունեցավ, և ահա սկսվեց աղետաբեր, մեկը մյուսից ավելի դաժան օրերը:

Ռուսական և կամավորական հաղթական բանակներն անարգել առաջ խաղացին և գրավելով թուրքական քաղաքներն ու ամրությունները, անցան Բիթլիս³, գրավելով Մշո ընդհարձակ հովիտը⁴, սա-

¹ Որպես պետական գործիչ, Արամը վարում էր ապակուսակցական քաղաքականություն: Նրա համար կարևորը ոչ թե տվյալ պաշտոնյայի կուսակցական պատկանելիությունն էր, այլ այս կամ այն պաշտոնը վարելու ունակությունը: Այդ իսկ պատճառով մահանգապետության կազմում ընդգրկվում են ազգային երեք կուսակցությունների անդամներ և տարբեր դասեր ու խավեր ներկայացնող քաղաքացիներ: Արամին հաջողվում է կազմել ազգային միասնության իշխանություն:

² Ե. Բուրանյանի մման պնդումը չի համապատասխանում իրականությանը: Արամը և նրա համախոհները, որոնք ներկայացնում էին տարբեր կուսակցություններ և անկուսակցականներ, ամեն ջանք և ճիգ գործադրել են 1915 թ. հուլիսյան մահաճշի ժամանակ օժանդակելու, օգնելու և պաշտպանելու փախստական վասպուրականցիներին: Վարդանը հետևյալն է վկայում. «Խեղճ Արամը ամբողջ ժամանակ ձին քշում էր այս ու այն կողմը: Շատերը կային և՛ ջահել և՛ առողջ, ձիով էին գնում կամ մի ուրիշ գրաստի վրա նստած և շատ ծերունիներ, պառավներ ու իռզնածներ կային, որոնք չէին կարողանում գնալ: Արամը առողջներին, ջահելներին իջեցնում և իռզնածներին, պառավներին էր նստեցնում», տես Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 402, ց. 2, գ. 11, թ. 8:

³ Հեղինակը սխալվում է: Ռուսները Բաղեշը գրավել են 1916 թ. փետրվարին:

⁴ Հեղինակը շփոթում է 1916 թ. իրադարձությունների հետ: 1915 թ. հուլիսին ստեղծվել էր մման հնարավորություն: Կազմվել էր գեներալ Տրուխինի ջոկատը, որի մեջ մտնում էր Արարատյան գունդը և Անդրամիկի I խումբը: Սակայն հուլիսի 11-ին Կովկասյան IV բանակային կորպուսի անսպասելի մահաճշը հնարավորություն չի տալիս իրականացնել մտադրությունը:

կայն այլևս չառաջացան, չնայած որ ոչ մի արգելքի չհամոզվեցին և օգոստոս ամսին¹ հանկարծահաս նահանջեցին, իրենց գրաված քաղաքները ձգելով և տաճկահայությանը թողեցին հուսահատության մեջ, մեծ լքում և հուսահատություն պատեց տաճկահայությանը, երբ լսեց ռուսական բանակի հանկարծահաս նահանջը, մինչդեռ Անդրանիկի բանակը հասե հաս [ուր որ է] հասնում էր Սասուն՝ Սասունի քաջերին ու ժողովրդին օգնության հասնելու։ Ռուսական բանակի նահանջը ստիպեց նաև կամավորական բանակներին նահանջել, ի ցավ հայության։

Քրդական հորդանները² տեսնելով ռուսական և կամավորական բանակների նահանջը, ոգի առան և հազարավոր քրդական բանդաներ շրջապատեցին Սասունի բնակչությանը, անխնա. սոսկալի կերպով, անլուր գազանությամբ կոտորեցին հայոց կանանց, երեխաներին, ևս մի անգամ [հայի] արյունով ներկեցին Սասնա լեռներն ու դաշտերը, Մշո ամբողջ դաշտի ժողովուրդը գլխովին ջարդվեց, ամայացավ այդ ծաղկուն հովիտն իր աշխատավոր ժողովրդից։

Ահա տաճկահայերի երազած տենչը՝ ռուսական հովանավորություն, ազատագրում, տաճկական բռնակալության դաժան լծից։ Մեր հույսերն ի դերև ելան ռուս ցարական ռեժիմից, չնայած հայերի՝ Ռուսաստանի [նկատմամբ ունեցած] համակրանքին, նվիրվածաբար ծառայելուն, ինչպես անցյալում, այնպես էլ ներկայում ցուցաբերած ծառայությամբ։ Բայց ապարդյուն անցավ մեր ջանքն ու հավատարմությունը և վարձատրությունը եղավ հայերի [բնա]ջնջումը, Հայաստանն առանց հայերի լողունգով։

1915 թ. օգոստոս³ ամսին նոր դարաշրջան սկսվեց տաճկահայության ողբերգական կյանքում. տաճկահայությունը արյունաքամ [եղած], տաճկական թուրքական յաթաղանից մազապուրծ [լինելով]

¹ Նահանջը սկսում է հուլիսի 11-ին։

² Լեռնականների ինքնապաշտպանության ճնշվում է գլխավորապես օսմանյան կանոնավոր բանակի ստորաբաժանումների կողմից, որոնք գիմված էին գնդացիներով և հրետանիով։

³ Նահանջը սկսում է 1915 թ. հուլիսի 11-ին և ծավալվում է հետագա օրերին։

մեկ անգամ ևս ճաշակեց այն դառնության բաժակը, երբ ռուսական բանակը սկսեց Տաճկաստանից նահանջել, իր հետ բարձր տալով հարյուր հազարավոր հյուժված տաճկահայ ժողովուրդը դեպի Կովկաս: Միթե՞ իմ գրիչը կարող է նկարագրել այն ահռելի սարսափը, որ տիրեց տաճկահայ ժողովրդին, երբ լսեց ռուսական բանակի հանկարծական [հանկարծակի] նահանջ բառը:

Տասնինը գավառների հարյուր հազարավոր ողջ մնացած գյուղացիներ սարսափահար թողած իրենց կայքը, որը շալակով, որը գրաստին բարձած իր աղքատիկ ունեցվածքը, կանայք իրենց փոքր երեխաներին շալակած, լաց ու կոծով, սուգ ու շիվանով, խառնված իր փոքրաքանակ նախրի հետ, ոմանք ոտաբորիկ, ոմանք հերարձակ, քարավանը-քարավանի հետևից, հետևում են ռուսական նահանջող բանակին: Մոված, ծարավ, ամառվա կիզիչ արևի տակ հապճեպ [պետք է] անցնեին Աբաղայի հովտով, [հետո] անցկենային Բենդի մահու կամրջով դեպի ռուսական սահման՝ Օրգով, որովհետև քուրդ երոսակները Բենդի մահու կամուրջը կարող էին գրաված լինել ու քանդած: Եվ այդ սարսափի տակ ժողովուրդը խուճապի մատնված, ժամ առաջ աշխատում էր անվնաս անցկենալ [] կամուրջը՝ չնայած ռուսական բանակի երթ[ին]: Ռուսական բանակը խուճապի մատնված, ամբողջ ժողովրդին շտապեցնում էր կամուրջն անցնել՝ քրդական հարձակումներից խուսափելու [համար], իսկ բանակն անտարբեր էր դեպի ժողովրդի խուճապահար փախուստին և ոչ մի պաշտպանական միջոցառումների չէր դիմում¹:

¹ Ռուսական մի շարք զորամասեր, ինչպես օրինակ Կորդկովի սահմանապահ զորամասը, կազակները, շարքային զինվորները և հատկապես հայ կամավորներն իրականացրել են գաղթող հայերի պաշտպանությունը, որը սակայն խիստ անբավարար էր: Բանն այն է, որ ռուսական իրամանատարության կողմից նահանջը կատարվում է չափազանց հապշտուս և անկազմակերպ: Այն նման չէր 1914 թ. դեկտեմբերյան նահանջին, երբ ռուսական զորքերը հիմնականում կարողանում են ապահովել հայ և ասորի բնակչության նահանջը: Կովկասյան II հրաձգային բրիգադի իրամանատար, գեներալ Ֆ. Նազարբեկովն անհիմն և հանցավոր է համարում նահանջը: Նրա համոզմամբ քաղաքին որևէ վտանգ չէր սպառնում, տես Սահակեան Ռ., Վանի նահանգապետության պատմությունից (Յունիս 14-Յուլիս 7-Յուլիս 25, 1915), Հայկազեան Հայագիտական Հանդես,

Եվ ահա կատարվեց այն սարսափելին, ինչ ժողովուրդը սպասում էր քրդերից: Ավագակ քրդերը տեսնելով անպաշտպան գաղթականությանը, հանկարծակի սկսեց հարձակումը՝ շատերը գնդակահար եղան:

Կանայք և երեխաները հորդառատ գետն անցնելով զոհ եղան կատաղի հորձանքին: Մայրերն իրենց ծծկեր երեխաներին զոհեցին ջրի ալիքներին իրենց անձը փրկելու համար¹: Անասունները խառնիխառն կորցրեցին իրենց տերերին և անհետացան: Ինչպես ժողովուրդն էր ասում՝ «ներ-մանուկ ուրացած»՝ փախչում ու փախչում է առանց ետև նայելու. հազարավոր անթաղ դիակներ թողնելով ճանապարհների², քարերի տակին³, հարյուր հազարավոր սովատանջ, հյուծված ճանապարհների քարքարոտներից, ճահիճների հոտած ջրերից սնվելով, համաճարակ հիվանդություններով վարակված հազարավոր դիակներ թողնելով ճանապարհներին, ժողովուրդը սպալեն գտավ Իզդիրում, Երևանում, Էջմիածնում, պատերի տակ թափ-

Պեյրոք, քիւ 32, 2012, էջ 407–430: Վանեցիները պատրաստ էին դիմագրավել հակառակորդին: Սակայն զենքերալ Ա. Նիկոլանը հրաժարվում է բավարարել հայերի խնդրանքը՝ տրամադրել զենք և զինամթերք՝ քաղաքը պաշտպանելու համար: Ավելի մանրամասն տես՝ Հարությունյան Ա. Հ., Վան-Վասպուրականի ազգաբնակչության 1915 թ. հուլիսյան զաղթը, ՀՀ ԳԱԱ Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, N 2, 2002, էջ 46–58: Հայտնի է նաև մահանջի մասին Անդրանիկի գնահատականը: Նա գտնում է, որ «Այս մահանջը կատարեալ կեղծիք մըն է, դուք (ռուսական իշխանությունները – Ռ. Գ., Ռ. Ս.) կ'ուզէք որ Հայաստանը առանց Հայու մնայ, ահա ձեր մտապատկերը»: Անդրանիկի համոզմամբ, կարելի էր օգտագործել շրջակա լեռները, որոնք հնարավորություն են տալիս հաջողությամբ դիմագրավել հակառակորդին, տես՝ Զօրավար Անդրանիկի Կովկասեան ճակատի պատմական օրագրութիւնը 1914–1917. Օրագրուած գօրավարին թիկնապահ զինուորէն, Պոսթոն, 1924, էջ 35:

¹ Ամերիկացի միսիոներ Զ. Աշըրի վկայությամբ. «Հայրերը և մայրերը սպանում էին իրենց երեխաներին, որպեսզի նրանց փրկեն թուրքերից»: Հարյուրավոր հայեր իրենց նետում էին գետը՝ փրկվելու քրդերի զազանություններից, տես՝ Ussher C. D., Knapp G.H., An American Physician in Turkey. A Narratives of Adventures in Peace and War, New York, Boston, 1917, p. 311.

² Սպանվում են մոտ տասն հազար հայեր: Ամերիկացի միսիոներները մեկ տարի անց լինելով Բերկրիի կիրճում, հաշվել էին մոտ յոթ հազար մարդկային կմախքներ, տես՝ Ussher Clarence. D., Knapp Grace H., op. cit., p. 311.

³ Այդպես է բնագրում:

ված անտերունչ, սպասելով կովկասահայերի ողորմածությանը, արհամարհված, լքված իր սև օրը ողբալով, միթե՞ ողբերգությունը սրանից առավել կարող է լինել, ու՞ր մնացին այն պոռոտախոս հայ գործիչները, հեղափոխականները, խմբապետները, որոնք տաճկահայերի ազատության համար գլուխ էին ջարդում: Մենք՝ տեսանք նրանց ցույց տված պաշտպանությունը, օգնությունը¹ Բերկրի կամուրջի շրջանում խուճապի մատնված իրենց կյանքը փրկելով փախչում էին գլխիկոր, որ ժողովուրդը իրենց չտեսնի և տարրական օգնություն չխնդրի գոնե երեխաներին օգնելու: Փախչում էին հապճեպ՝ գաղթականությանը թողած գույքը շալակներին առած որպես իրենց քաջագործության ավար՝ խեղճ, թշվառ հայ ժողովրդին:

Բարեբախտաբար տաճկահայ ժողովուրդը որպես կոփված աշխատավոր, արհեստավոր ժողովուրդ պահպանեց իր գոյությունը, մեր համար ոչ հարազատ երկրում, կոփեց իր համար նոր կյանք իր հյուծված ընտանիքներին շունչ տալով, ահա տաճկահայերի անփառունակ կյանքը: Մենք ձգտում էինք երջանիկ կյանքի քաղաքակիրթ Եվրոպայում, ու լի ու լի ստացանք: Մեր դիպլոմատ ինտելիգենտները, որոնք ներկայումս արտասահմանում են, եվրոպական դահլիճներում ճռճռան ճառեր են ասում՝ հանում հայ ժողովրդի բարօրության, ազատագրության, կենդանության:

¹ Հայ կամավորական երկու խմբերը՝ III-ը և IV-ը նահանջում են գեներալ Տրուխինի ջոկատի կազմում Պարսկաստանի ողողությամբ և ի վիճակի չէին պաշտպանել ռուսական սահման շարժվող գաղթականներին: Անդրանիկի խմբի մարտիկների մոտ 80%-ը հեռացել էր, որպեսզի կարողանան օգնել հարազատներին: Միակ հայկական խումբը, որը շարունակում էր պահպանել իր մարտունակությունը՝ Դրոյի հրամանատարության ներքո գտնվող II խումբն էր: Սակայն մարտիկների թվի պակասը հնարավորություն չի տալիս ամբողջությամբ ապահովել հայ գաղթականների անվտանգությունը: Գաղթականներին զգալի օգնություն են ցույց տալիս նաև ռուս զինվորները, կազակները և սահմանապահները:

ՀԵՐՈՍ ՎԱՆ ԶԱՂԱՔԻ ԷՎԱԿՈՒՑԻԱՆ

1915 թվի օգոստոսի 10-ին¹ [տրվեց] ռուսական բանակի հրամանատարության հրամանը Վան քաղաքի չարագուշակ էվակուացիայի [վերաբերյալ]: Թե ինչ հանգամանքների առիթ էր [նահանջը], դա մեր համար շատ մութ, անլուծելի խնդիր եղավ: Թուրքական ոչ մի գործություն և առաջխաղացում, ոչ մի վտանգի սպառնալիք [չկար], ապա ինչն էր պատճառը: Ռուս հրամանատարությունը պարտադրեց քաղաքն ամայացնել, ստիպել ժողովրդին գաղթել Ռուսաստան, սովի տանջանքի մատնելով հարյուր հազարավոր ընտանիքներին, որոնք իրենց ապահով էին զգում իրենց հայրենիքում՝ թեկուզ ավերված ու քայքայված²:

Վասպուրականի ժողովուրդը մի ամիս մահվան և կյանքի անհավասար [պայքար մղելով] թուրքական հզոր բանակի դեմ և հաղթանակ ձեռք բերելով՝ հանկարծակի կախարդական գավազանի

¹ Հեղինակը շփոթում է: Նահանջը սկսվում է 1915 թ. հուլիսի 11-ին, իսկ Վանը վերջնականապես լքվում է բնակիչների կողմից հուլիսի 27-ին:

² Գեներալ Ֆ. Նազարբեկովն իր հուշերում կարևոր փաստ է հաղորդում այդ «գերակշիռ» ուժերի մասին: Նա գրում է. «Ջոկատի շտաբ կապի համար գործուվել էր Լաբինսկյան կազ (ակային – Ռ. Գ., Ռ. Ս.) գնդի խորունժի (ազգանունը չեմ հիշում): Նա հետագայում իմ շտաբի սպաներին պատմել է, երբ Մուշի դաշտից (1915 թ. – Ռ. Գ., Ռ. Ս.) հուլիսի 9-ին Լաբինսկյան գնդի հրամանատարն ինձ համար զեկուցագիր էր պատրաստում՝ դիմեց սպաներին և ասաց, որ պետք է հարկադրել գեներալ Նազարբեկովին նահանջել: Հարցրեց, թե որքան թոշուն կա ծառի վրա: Ինչ որ մեկը հաշվեց և ասաց՝ 12: Դե այդպես էլ զեկուցեք, որ Մշո դաշտից հարձակվում են 12 թաքուրներ (գումարտակներ – Ռ. Գ., Ռ. Ս.):» Օսմանյան զորքի այս թվաքանակն առ այսօր օգտագործվում է ռուսական պատմագրության մեջ՝ որպես արդարացում 1915 թ. հուլիսի 11-ի անիմաստ և հանցավոր նահանջի, տես՝ ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 3, թ. 48 շրջ. 49: Կարծում ենք, որ նահանջը կարող է ունենալ երկու պատճառ. դրդել հակառակորդին խորանալ արդեն իր իսկ կողմից ավերված, պարենից և անասնակերից գրեթե զուրկ շրջանը և ապա անակնկալ հարձակումով ջախջախել նրան, և երկրորդ՝ վերջ տալ Վանում օրըստօրե ամրապնդվող և քափ առնող հայկական ինքնավարությանը, որն առաջացնում էր ռուսական հետադեմ շրջանների ոչ թե դժգոհությունը, այլ բացահայտ ատելությունը:

ուժով պարտադրվեց թողնել իր հայրենի քաղաքը, տուն ու տեղը, կայք ու կարողությունը և հետևել ռուսական բանակի խուճապահար փախուստին, որն իր դիմաց չուներ ոչ թուրքական բանակ, ոչ էլ մի զորություն, որը կստիպեր բանակներին թողնել ռազմական հսկայական ռազմամթերքներ թուրքերին, որոնք արդեն ջախջախված հեռացել էին երկրից [Վանից] առանց ետ դարձի ճանապարհի:

Սակայն, ռուսական հզոր կարծված բանակները, առանց բանավոր [հիմնավոր] պատճառի լքեցին իրենց գրաված քաղաքները, որոնք մեծ զոհերի գնով էին գրավել, և առանց հիմնական պատճառի նահանջեցին և պարտադրեցին տեղի բնակիչներին հետևել իրենց: Ինչու՞ Վասպուրականի ժողովրդին տեղահանելուց մի քանի օր հետո¹ ռուսական բանակներն անարգելք վերադարձան այն տերիտորիան, որոնք մի քանի օր առաջ լքել էին և ահա հարց է առաջանում, եթե չկար թուրքական ուժ, որը կստիպեր ռուսներին թողնել այդ գրաված քաղաքները, ապա ինչու՞ ռուսական բանակը հայերին տեղահան անելուց հետո վերադարձան Թուրքիա [Վան] և պատճառ դարձան հայերի բնաջնջմանը:

Մեզ արդեն հասկանալի է ռուսական ցարական ռեժիմի մի շարք մինիստրների հայտարարությունը, որոնք ցանկանում էին Հայաստանն առանց հայերի: Հայ դժբախտ ժողովուրդը զոհ է դարձել ոչ միայն գերմանական վիլհելմներին, հիտլերներին, այլ նաև եվրոպական քաղաքակիրթ ազգերին և նաև ռուսական ցարերի ինտրիգներին և ատելությանը: Վանի ժողովուրդը հերոսական պայքար մղելուց հետո, հլու հնազանդ ռուսական հրամանատարության հրամանին, կամա թե ակամա թողեց իր սիրած հայրենիքը, իր ձեռքով այրեց իր տունը՝ ձգելով իր կայք ու կարողություն, ցուպը ձեռքին հետևեց ռուսական նահանջող բանակին հուլիսի 19-ին՝ խիստ [կիզիչ] արևի տակ, սոված և ծարավ:

Մոսկավի օր էր այն առավոտը, երբ հնչեց գաղթի սև բոթը: Վանի ժողովուրդը՝ Վանի այր ու կին խելակորույս, չմտածված ու անկազ-

¹ Օգոստոսի 1-ին:

մակերայ, խուճապի մատնված, որը ձեռքի սայլերով, որն ունեցած գրաստներով, որն իր օրվա պարենը շալակելով, գտնվեցին այն բախտավորները [որոնք] սայլերով ու ձիերով հապճեպ ճանապարհվեցին՝ չիմանալով ճանապարհի երկարությունն ու դժվարությունը: Միմիայն փրկության հույսով հարյուր-հազարավոր ընտանիքներ¹ հնարավորություն չունենալով գաղթին մասնակցելու, մնացին և զոհ գնացին քաղաք մուտք գործող քրդական և թուրքական բանդաներին: Գյուղերից, ավաններից խուճապահար գյուղացիներն իրենց անասուններով, քարավան-քարավանի հետևից շարան-շարան ահ ու սարսափի տակ հետևեցին քաղաքի գաղթականությանը՝ անիծելով իրենց սև օրը, ճանապարհներին թողնելով անթիվ անթաղ դիակներ, առաջ շարժվեցին դեպի Քանանի երկիր՝ Ռուսաստան, որ իրենց դիակներով լցնեն փողոցները, փոսերը, Էջմիածնի, Իգդիրի, Երևանի անհայտ գերեզմանոցները՝ տհաճություն պատճառելով տեղի բնակչությանը, որը զգվանքով էր նայում այդ հյուծված, տառապյալ ժողովրդին, որ ճանապարհի ջերմ արևի տակ սևացած, վառված դեմքերով, ճահիճներից խմած ջրերով հիվանդացած՝ առաջանում էին դեպի հայկական շեներ՝ օգնություն աղերսում:

Ի՞նչ օգնություն կարող էր փրկել այդ հազարավոր տառապյալ ժողովրդին: Թեև Եղբայրական օգնությունը² հնարավորինս օժանդակում էր, բայց այդ ծով կարիքներին մի կաթիլ ջուրը չէր կարող դարձան անել: Այդ հոծ բազմությանը կարող էր մահվան ճիրաններից ազատել միայն Տաճկահայաստանի [Արևմտյան Հայաստանի] արգավանդ երկիրը, որի կլիման, օդը, ջուրը կարող էր նպաստել, ոչ

¹ Վանում մնացած և զոհվածների թվաքանակը չափազանցված է:

² 1914 թ. դեկտեմբերին կազմակերպվում է «Էջմիածնի Եղբայրական օգնության կոմիտե» Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ V-ի նախագահությամբ: Կոմիտեն 1914-1918 թթ. կազմակերպել է հայ գաղթականության օգնությունը, հիմնելով ապաստարաններ, որբանոցներ, հիվանդանոցներ, անվճար ճաշարաններ և այլն: Պատերազմի տարիներին գաղթականությանը զգալի օժանդակություն է կազմակերպել Կովկասի հայոց բարեգործական ընկերությունը, ռուսական, ինչպես նաև ամերիկյան կառավարական և ոչ կառավարական կազմակերպությունները:

թե Ռուսաստանի բժիշկները, սանիտարներն իրենց դեղերով ու օգնությամբ:

Եվ տաճկահայ ժողովուրդն աշնան տերևի նման հարյուրավորներով՝ այր, կին ու երեխա, մեռնում էին Էջմիածնի պատերի տակ, առունների ափերին, Երևանի այգիներում, որտեղ՝ որպես օգնություն խնամք էին գտել, սակայն այդ մեռած դիակներին փոխադրելու սայլերը, ֆուրգոնները չէին կարող բավարարել առավոտից երեկո:

Ահա տաճկահայության ողբերգական տեսարանը 1915 թվին Հայաստանում՝ Երևանում: Հայոց պատմության մեջ մի էջ հայոց նոր սերնդի համար հետաքրքիր պատմություն, որ գուցե նրանց համար համարվի վեպ, որովհետև տաճկահայության կյանքում եղել են կոտորածներ, ավերածություններ, բայց երբեք չէր կատարվել հայության համար անհավատալի տեղահանություն իր հայրենի երկրից, որը տևել է երկար ամիսներ, տարիներ, բայց հայ ժողովուրդը տոկացել է ու մնացել կրկին, բույն դրել իր հայրենիքում, թեև բռնակալության լծի տակ: Հայ ժողովուրդն ընտրել է փուշը, քան վարդը՝ ինչպես Խրիմյան Հայրիկի անվան համար հորինված երգը, որն այստեղ հիշատակում են.

Հայրի՛կ, հայրի՛կ, քո հայրենիք
Վասպուրական մեր աշխարհ,
Վարդի փոխան քեզ փուշ բերավ,
Ցավերն ըրավ մեկ հազար:

Հայրիկն ասաց. Իմ հայրենյաց
Փուշն է ինձ քաղցր, քան զվարդ,
Ես այդ փշոց մեջը դարձյալ
Կը որոնեմ սիրուն վարդ:

Ինչքան դաժան պայմանների մեջ որ ապրում էր հայ ժողովուրդը, դարձյալ իր հայրենիքին, իր ծննդավայրին ոչինչ չէր կարող փոխարինել: Վասպուրականցու սրտում անմոռաց էին մնում այն հիշա-

տակները, որտեղ անցկացրել էինք մեր մանկությունը: Ո՛չ ներկա Հայաստանի նորակառույց պալատները, ո՛չ ֆաբրիկաները, գործարանները, բարձրագույն հիմնարկ – ձեռնարկությունները չեն կարող փոխարինել մեր սրտերին, մեր հայրենիքի խղճուկ խրճիթներին, բնության պարզևած գեղատեսիլ լեռներին և բուրաստաններին, որոնց այսօր տեր են դարձել անաշխատ, անկուլտուրական քուրք և քուրդ, բռնապետերը, որոնք անընդունակ են այդ դրախտանման երկիրը ծաղկեցնելու և եվրոպական կրթության [մակարդակի] հասցնելու:

Տաճկահայ ժողովուրդը, ինչպես վերհիշեցի, երկարատև տառապանքներից, զրկանքներից հետո ապաստանեց իր նոր հայրենիքում՝ Երևանում [Արևելյան Հայաստան], նոր կյանք ստեղծելու: Մի փոքր ժամանակ [անց] խաղաղ աշխատանքի անցավ, իր վիճակը քիչ չափով բարելավեց, սակայն նոր և նոր արգելքներ ու խժոժություններ առաջացան երկրում: Ժամանակավոր դաշնակցական կառավարություն¹ ստեղծվեց այնպիսի անձերից, որոնք անընդունակ գտնվեցին խաղաղ ճանապարհով կառավարելու հայ ժողովրդի կենսական շահերը: Երկիրը միշտ մնաց խռովությունների թատերաբեմ: Առաջ եկան ավանտյուրիստ, խռովարարներ, թալանչիներ, մաուզերիստներ, որոնք խանգարում էին ժողովրդի անդորր աշխատանքին, կյանքին, մինչև որ հաստատվեցին սովետական կարգերը՝ պաշտպանելով ժողովրդի կենսական շահերը: [Ազատեց] Երկիրը խռովարարներից և ավանտյուրիստներից, որի պատմությունն ակներևաբար հայտնի է սովետահայ հասարակության ներկա դարաշրջանում, որտեղ մենք այսօր խաղաղ ապրում ենք, սովետական պայծառ արևի տակ՝ զերծ բռնություններից և օտար իմպերիալիստներից:

Տաճկահայ տարագրված հայությունը կենդանությունն ստացավ եղբայրական Սովետական Ռուսաստանից՝ կերտելու, ամրապնդելու իր ուժերի, իր տաղանդի ներածի չափով նոր կյանք:

¹ 1918 թ. մայիսի 28-ին Հայաստանը վերականգնում է իր անկախությունը: Հայկական պետականությունը գոյատևում է մինչև 1920 թ. դեկտեմբերի 2-ը: Հայությունն իր անկախությունը կորցնում է քեմալա-բոլշևիկյան դավադրության հետևանքով:

Ձեռքձեռքի տալով երկրի գիտության, ինդուստրացման զարգացման ասպարեզում, դպրոցներ, ֆաբրիկաներ, էլեկտրակայաններ, այլ և այլ ձեռնարկություններ [հիմնելով], որոնք երջանիկ կյանք են բերում ժողովուրդներին լավ ապրելու համար: Երջանիկ է այն ժողովուրդը, որ ազատություն է վայելում, ի գործ է դնում իր ինքնաբուխ տաղանդը, հայրենիքին օգտակար լինելու իր ճարտարապետությամբ, գեղարվեստով, գիտությամբ, նոր տեխնիկայի ստեղծմամբ ծաղկեցնելու երկիրը՝ մարդկությանը երջանկացնելու համար:

Իսկ բռնապետական օսմանյան պետությունն ի՞նչ տվեց մարդկությանը և նույնիսկ իր ժողովրդին, ոչինչ բացի ավերից՝ միայն խավարամտություն, կրոնական մոլեռանդություն:

Մարդկային զոհերից ոչ պակաս միայն վնասվում էին թուրքի վայրագությունից և դասական աշխարհի հիշատակարանները՝ քրիստոնեական քաղաքակրթության արդյունքները և առհասարակ ազգերի ու ցեղերի պատմական հնությունները, որոնք անմիտ վրիժառության առարկա էին դառնում, վկա ձեզ ջարդված կամ այլանդակված գերեզմաններն ու արձանները, ավերված եկեղեցիները, խորտակված խաչարձաններն ու շիրիմները, կրակի մատնված, հարուստ մատենադարանները, հողի տակ թաղված կամ այրերի մեջ փտության դատապարտված մագաղաթները, բռնի մահմեդակամացված ցեղերի ժողովրդական լեզվի ու բանահյուսության եղծումն ու վտարումը, հնախոսական նյութերի, գեղարվեստական առարկաների և առհասարակ, ձեռագործ կերտվածքների անխնա սպառումն ու ոչնչացումը միով բանիլ, նախնի կենսական արդարության ամեն մի հիշատակի ջնջումն ու սպականությունը: Եվ այս ամենն ինչի՞ համար, որպեսզի մեռնի քաղաքակրթության ոգին և թագավորի մոռյլ մոլեռանդության ծայրահեղ խտրականությունը հպատակ ազգերի մեջ:

Եվ այս ամենը կատարվեց Թուրքահայաստանում՝ քաղաքակրթյալ պետությունների աչքի առաջ, իսկ Եվրոպան աչքն անգամ չթարթեց տեսնելու համար օսմանյան զազանաբարո պետության ավերիչ արարքները, և դեռ հանդուրժում են հովանավորել և բարե-

կամական դաշն կնքել [Թուրքիայի հետ] առաջին հերթին Ամերիկան և Գերմանիան՝ սուլթան Համիդի համհարզը:

Եվ մենք՝ մասնավորապես արևմտահայերս, որ չարաչար տուժել ենք այդ բռնավորից, և մենք հայերս՝ ցատմով անհիծում ենք քաղաքակիրթ Եվրոպային: Ի՞նչ կլինեն հայության վերջը, եթե սովետական կարգերը ազատություն և ապահովություն չընենին: Թեև հայ ժողովուրդը իր հույսն էր կապել Ռուսաստանի հետ դարեր առաջ, սակայն ցարական Ռուսաստանը չպիտի տար այն ազատությունը, ինչ որ Սովետական Ռուսաստանի կարգերը, ինչպես Հայաստանին, այնպես էլ ճնշված փոքր ազգերին՝ Ռումինիային, Բուլղարիային, Ալբանիային, Չեխոսլովակիային, Լեհաստանին և մյուս փոքր պետություններին¹: Գերմանական թուրքամու պետության զավթողական կարգերից թող հավերժ անսանձ մնա սովետական անշահախնդիր հզոր պետությունը:

Ի լրացումն իմ պատմության, որպես լուսաբանություն հարգելի ընթերցողներին, քե ինչու մենք՝ արևմտահայերս, բնավեր եղանք, մեջբերում ենք անցյալի կյանքից այն իրողությունները, որոնք փաստացի կերպով գալիս, հաստատում են ճշմարտացիորեն, առանց ճշմարտություններն աղավաղելու, որովհետև գտնվել են այնպիսի անձինք՝ ազնիվ զգացումների տեր մարդիկ, որոնք անշեղորեն ծանոթ են եղել անցյալի անցողաբժին: Չնայած դժբախտաբար ներկայումս չկան այդ անձնավորությունները և հիշատակված չեն նրանց անունները մեր քաղաք գրքից:

¹ Հուլագրի նման գնահատակները հասկանալի են: Նա ապրել է ստալինյան բռնապետության ժամանակաշրջանում և դեռևս «Փարս» էին այդ տարիներին կատարված անօրինականությունները՝ զանգվածային ձերբակալությունները և գնդակահարությունները, ժողովուրդների աքսորը և այլն: Ինքնին հասկանալի է, որ խորհրդային կարգերին նման գնահատական տալով և պախարակելով Հայաստանի Հանրապետությունը Ե. Բուրանյանը ցանկանում էր իրեն և ընտանիքին ապահովել հնարավոր անախորժություններից:

ԿԱՍԱՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Վերջին երկու դարերի՝ առանձնապես 19-րդ դարի ընթացքում հայ ժողովրդի բախտը կապված է եղել ռուսական զենքի հաջողության հետ Կովկասի սահմաններում: Որքան այդ զենքը հաջողություն է ունեցել, այնքան հայ ժողովրդի դրությունը լավ ընթացք է ստացել ու ապահովություն գտել:

Պարսկական և տաճկական լծերի տակ հեծող հայ ժողովուրդը դեռ ևս 17-րդ դարի սկզբից իր հայացքը դարձրեց Ռուսաստանի վրա, արագ առաջադիմող այդ դրացի քրստոնյա պետությունը, որ հետզհետե ընդարձակվելով ընթանում՝ էր դեպի ասիական հետամնաց այդ երկու պետությունները նվաճելու:

Դեռևս հին դարերից կուլտուրայի ձգտող հայ ժողովուրդն իր բնածին հակումները զարգացնելու ասպարեզը չէր գտնում այդ պետությունների մեջ, նա ձգտում էր մի նոր հովանավորող ձեռքի, որի պաշտպանության տակ կկարողանար առաջ գնալ ու զարգանալ: Այդպիսի հովանավորող ձեռքն էր հանդիսանում Ռուսաստանը, և որքան որ առաջխաղացումը դեպի Առաջավոր Ասիան պահանջում էր ռուս պետության շահը, նույնքան ավելին այդ առաջխաղացումը պահանջում էր հայ ժողովրդի գոյության խնդիրը:

Սրանով էլ պիտի բացատրել այն երևույթը, թե ինչպես հայ ժողովուրդը հանձին իր աշխարհական և հոգևոր ներկայացուցիչների դեռևս Պետրոս Մեծի օրերից սկսած անդադար դիմումներ էր անում Ռուսաստանին՝ խնդրելով շարժվել առաջ, քշել պարսիկներին ու տաճիկներին, ազատել հային նրանց լծից՝ խոստանալով իր աջակցությունը բոլոր պարագաներում:

Մրան ապացույց են Իսրայել Օրոլ¹, Հովսեփ արքեպիսկոպոս Արղուրյանի², Ներսես Աշտարակեցու³ և ուրիշների դիմումները ռուսական արքունիքին: Նրանց մատուցել էր ազատել պարսիկների տիրապետությունից Սյունիքը, Արարատյան երկիրը և Ռուսաստանի հովանու տակ հաստատել հայկական մի իշխանություն:

18-րդ դարի ընթացքում ռուսները առաջ խաղաղով գրավեցին Կասպից ծովի հյուսիսային և արևմտյան ափերը՝ մինչև Բաքու, ուր դնելով Անդրկովկասի սահմանները, 19-րդ դարի սկզբին գրավում են Սյունիքը⁴, Վրաստանը, իսկ հետագայում 1827⁵, 1856⁶, և 1877⁷ թվերին գրավում են Երևանի, Նախիջևանի խանությունները, Ալեքսանդրապոլի ու Կարսի շրջանները և Սև ծովի հարավ-արևելյան ափերը:

Ամեն անգամ, երբ ծագում էր ռուս-պարսկական պատերազմը, հայերն իրենց բոլոր [հնարավոր] աջակցությունն էին տրամադրում ռուսներին, ոչ միայն ճանապարհները ցույց տալով, ռուսական բա-

¹ Իսրայել Օրի (1659–1711 թթ.), ազգային-ազատագրական շարժման գործիչ: Նա առաջինն էր, որ սկզբնավորեց հայության ազատագրական պայքարի ռուսական կողմնորոշումը:

² Արղուրյան Հովսեփ արքեպիսկոպոս (1743–1801 թթ.), Ամենայն հայոց կաթողիկոս (1800 թ.), ազատագրական շարժման գործիչ: Հայոց պետականությունը վերականգնելու մատակցելով 1783 թ. կազմել և ռուսական արքունիքին է ներկայացրել մախազիծ: 1800 թ. ընտրվել է Ամենայն հայոց կաթողիկոս, սակայն Էջմիածին չհասած, Թիֆլիսում վախճանվել է:

³ Ներսես Ե Աշտարակեցի (1770–1857 թթ.), Ամենայն հայոց կաթողիկոս (1843–1857 թթ.), ազատագրական գործիչ, հոգևորական: 1814 թ. Վրաստանի հայոց քեմի առաջնորդ: 1824 թ. հիմնադրել է Ներսիսյան դպրոցը: 1826–1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի ժամանակ մախաձեռնել է հայ կամավորական ստորաբաժանումների կազմակերպումը: Նշանակալից դեր է կատարել Պարսկաստանից հայերի ներգաղթը կազմակերպելու գործում: 1828 թ. հեռացվել է Անդրկովկասից, քանի որ ձգտել է հիմնել Ռուսաստանի հովանավորության ներքո գտնվող հայկական ինքնավարություն:

⁴ Սկստի ունի 1804–1813 թթ. ռուս-պարսկական պատերազմը, երբ Գյուլիստանի հաշտության պայմանագրով (1813 թ. հոկտեմբերի 24) ռուսներին է անցնում Դաղստանը, Վրաստանը, Բաքվի, Ղարաբաղի, Գանձակի և այլ խանությունները, Լոռու, Ղազախի, Շամշադինի, Իջևանի, Շիրակի և Ջանգեզուրի շրջանները:

⁵ Սկստի ունի 1826–1828 թթ. ռուս-պարսկական պատերազմը:

⁶ Սկստի ունի 1853–1856 թթ. Ղրիմի կամ Արևելյան պատերազմը:

⁷ Սկստի ունի 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը:

նակին խաչ-խաչվառով դիմավորելով, հաճախ նրանց համար պաշար հայթայթելով, այլև կամավորական խմբեր կազմելով և ռուսական զորքի առաջապահ շարքերը գրավելով. այսպես էին վարվում հայերը. այս էր պահանջում նրանց շահը: Ռուս բանակին աջակից հայ կամավորական խմբերն անցյալում կազմվել էին մի քանի անգամ և բայց [կամավորներն] առանձնապես աչքի ընկավ, Սյունիքը և Արարատյան երկիրը գրավելու ժամանակ:

1827 թվի [ռուս-պարսկական] պատերազմի ժամանակ, երբ Ներսես Աշտարակեցին դեռևս Թիֆլիսի թեմի [հոգևոր] առաջնորդ էր, ձգեց ամեն մի հոգևոր գործ և նետվեց փոթորկոտ ասպարեզ և հայ ժողովրդին խրախույս կարդալով՝ ինքն անցավ կամավորական շարժման գլուխը: 1827 թվին կամավորական շարժումը սկսվեց Թիֆլիսում, բազմաթիվ հայեր թե՛ քաղաքներից, թե՛ գավառներից եկան ցուցակագրվեցին և մտան կամավորական զնդի մեջ:

Մարտի 30-ին Ղաթախ կոչված հրապարակում՝ այժմյան Ալեքսանդրյան այգու տեղում կայացավ կամավորականների զորախաղ, որին ներկա գտնվեց Ներսես Աշտարակեցին՝ ձիու վրա բազմած և քաջալերական խոսք ուղղեց կամավորներին, իսկ մայիսի 15-ին վանքի մայր եկեղեցում մեծ հանդեսով տեղի ունեցավ հայ կամավորների երդումը և զնդի դրոշակի օծումը, որը որքան գիտենք մինչև այժմ պահպանվում է էջմիածինի քանդաքարանում:

Հայ կամավորականների գունդն ուներ պետական զենք, իր հատուկ համազգեստը, ստանում էր զանձարանից սնունդ, կամավորի ընտանիքն ազատվում էր բոլոր տեսակի տուրքերից. զինվորական կազմը նշանակված էր հայերից, որոնք ստանում էին համապատասխան ռոճիկ զանձարանից:

Ներսես Աշտարակեցին, անցնելով կամավորական շարժման գլուխ, իր կողմից այդ առիթով կոչ է ուղղում հայ ժողովրդին՝ ունենալ ակնկալություններ: Նա ոչ միայն սպասում էր հայ ժողովրդի ազատությունը պարսիկների լծից, այլև ակնկալում էր Արարատյան երկրի, կամ հայկական նահանգի ավտոնոմիայի իրականացում: Այս էր մտմտում Ներսես Աշտարակեցին, որովհետև նրան խոստացել

էին, որը սակայն իրականություն չդարձավ: Այսպիսով ներկա պատերազմի սկզբում կամավորական շարժման ծագման երևույթը նոր չէր Կովկասի հայության համար, երևույթը նույնն էր, սակայն պայմանները նույնը չէին մնացել հայության համար:

Նախկին պատերազմների ժամանակ, թե՛ Պարսկաստանը, թե՛ Տաճկաստանը հանդիսանում էին ավատական բռնապետական երկրներ և հայերը ենթակա էին անօրինակ ճնշումների ու քնահաճույքների, ներկա պատերազմի օրոք Տաճկաստանը սահմանադրական երկիր էր և հայ ժողովուրդը անհամեմատ ավելի լավ վիճակ ուներ, քան առաջ¹:

Մյուս կողմից հայ ժողովուրդը անցյալում միշտ ռուս կառավարության փայփայանքն ու խրախուսանքն է գտել, մինչդեռ վերջին՝ երկու, երեք տասնամյակների ընթացքում այդ նույն կառավարությունը՝ կովկասյան վարչության վերաբերմունքը հայերի նկատմամբ ավելի փոխեց և փոխվեց միանգամից, այդ շրջանում Կովկասի հայերը ապրեցին Գոլիցինյան² ռեժիմի խստությունները, որոնք չափն ու սահմանը անցան՝ ականատես եղան [հայկական] դպրոցների փակման և եկեղեցական կալվածքների գրավման ակտերին, կալվածքներ, որոնց եկամտով պահվում էին ծխական դպրոցները, ճաշակե-

¹ Երիտթուրքերը միայն առերևույթ հռչակում են կայսրությունում բնակվող ազգերի հավասարություն: Նրանք շարունակում են սուլթանների որդեգրած քաղաքականությունը, որի առաջին օրինակն է հանդիսանում 1909 թ. Ադամաշի կոտորածները:

² Գոլիցին Գրիգորի (1838–1907 թթ.), ռուսական պետական և ռազմական գործիչ, իշխան: 1896 թ. ղեկոնդրեցին նշանակվել է Կովկասի քաղաքացիական մասի կառավարիչ և ռազմական օկրուգի իրամանատար: Նրա կառավարման տարիները հայտնի են «գոլիցինյան ռեժիմ» անունով: Լինելով մոլի միապետական և հետադեմ գործիչ, լայն պայքար ծավալեց հեղափոխական և ազգային-ազատագրական շարժումների դեմ: Գ. Գոլիցինի իրամանով հալածում են հայ նշակույթի գործիչները: Նրա համառ պնդումներից հետո 1903 թ. հունիսի 12-ին բռնագրավվեց Հայ առաքելական եկեղեցու գույքը: 1903 թ. հոկտեմբերի 14-ին հնչակյանները մահափորձ կատարեցին և ծանր վիրավորեցին կառավարչատեղում, տե՛ս Ալեքսանյան Կարինե, Պետրոս Մոճռյանի հոգեբեր Կովկասի կառավարչապետ Գրիգորի Գոլիցինին ահաբեկելու մասին Բանբեր Հայաստանի արխիվների, Երևան, N 1, 2010, էջ 121–128, Հովհաննիսյան Գ., Հնչակյան կոտակցության պատմություն (1887–1915 թթ.), Երևան, 2012, էջ 145–146:

ցին հայ-թուրքական ընդհարումների¹ դառնությունները և վերջապես տեսան 1909 թվի հալածանքները, երբ Կովկասի բոլոր վայրերում մեծ քանակով ինտելիգենտ մարդիկ մեղադրվելով Դաշնակցության կուսակցությանը պատկանելուն²՝ ձգվեցին բանտերը, աքսորվեցին, նույնիսկ տաժանակիր աշխատանքների դատապարտվեցին, իսկ շատերն էլ խուսափելով դատից [ձերբակալությունից] անցան սահմանի մյուս կողմը և նրանցից մի որոշ թիվ իրեն համար գործունեության ասպարեզ ընտրեցին Տաճկաստանը, որտեղ նրանք ոչ միայն չէին հալածվում տաճիկ կառավարության կողմից, այլ սիրաշահվում էին:

Ահա այսպես էր երկրի դրությունը Կովկասում 1912 թվի կեսերին, երբ մեկ էլ ռուսական դեսպանատունը Տաճկաստանում սկսեց հետաքրքրվել հայ ժողովրդի վիճակով³, իսկ 1913 թվի կեսերին ռուս կառավարությունը եվրոպական պետություններին ներկայացրեց հայկական ռեֆորմների ծրագիրը և դրանից հետո վերաբերմունքը հայերի նկատմամբ փոխվեց:

Ռուս կառավարությունը հրապարակ հանեց հայկական ռեֆորմների ծրագիրն այն ժամանակ, երբ քայքայվել էր Բալկանյան պետությունների միությունը տաճիկների դեմ, և երեկվա դաշնակիցները՝ Բուլղարիան, Սերբիան, Չեռնոգորիան և Հունաստանը տաճիկներին հաղթելուց հետո իրենց զենքը շրջել էին միմյանց դեմ⁴:

¹ Նկատի ունի 1905–1906 թթ. հայ-թաթարական ընդհարումները:

² Նկատի ունի այսպես կոչված «Դաշնակցության գործը», որը հորինվել էր ցարական իշխանությունների կողմից՝ հայ մտավորականության հետ հաշվեհարդար տեսնելու համար: Դատավարությունները շարունակվում են ընդհուպ մինչև 1916 թ.:

³ Նշված հիմնահարցի՝ Արևմտյան Հայաստանում բարենորոգումների նախաձեռնողը ոչ թե ռուսական դեսպանատունն էր, այլ ռուսական կառավարությունը, ինչպես նաև Սեմ Բրիտանիան և Ֆրանսիան:

⁴ Բալկանյան I պատերազմը (1912 թ. հոկտեմբերի 9-ից մինչև 1913 թ. մայիսի 30-ը) տեղի է ունեցել Բալկանյան միության՝ Բուլղարիա, Հունաստան, Սերբիա և Չեռնոգորիա, ընդդեմ Օսմանյան կայսրության: Վերջինս պարտություն է կրում: Լոնդոնում կնքված հաշտության պայմանագրի համաձայն, Օսմանյան կայսրությունը կորցնում է եվրոպական բոլոր տիրույթները, բացառությամբ Կ. Պոլսի և Արևելյան Թրակիայի փոքր մասի: Բալկանյան II պատերազմը (1913 թ. հունիսի 29-ից մինչև օգոստոսի 10-ը) տեղի է ունենում մի կողմից Բուլղարիայի և մյուս

Այժմ տեսնենք ինչեր կատարվեցին դրանից հետո: Կովկասի հայ մտավորականությունը և հայ մամուլը վերջին երկու տարիների ընթացքում եռուն կյանքով էր ապրում՝ զբաղեցնող խնդիրը Հայկական հարցն էր: Մասնավոր ժողովներում, մամուլում շարունակ քննվում էր այդ հարցը: Նույն հարցը հետաքրքրում էր նաև պաշտոնական ու անպաշտոն մարմիններին: Թվում էր, թե ամեն ոք կլանված էր այդ խնդրով:

Հայկական հարցը նորից դրվել էր դիպլոմատիայի առաջ. մեծ պետությունների դեսպանատները Պոլսում այդ հարցով էին զբաղված: Պոլսի ռուսական դեսպանը¹ հայկական ռեֆորմների ծրագիրն էր պաշտպանում, իսկ արտաքին գործերի նախարարը² առիթը չէր կորցնում նույն ծրագրի մասին խոսել՝ արտահայտվելով նույնիսկ Պետական դումայի ամբիոնից: Սի խոսքով տրամադրությունը հայերի նկատմամբ Պետրոգրադի³ բարձր շրջաններում միանգամայն փոխվել էր՝ այն շրջաններում, որտեղից երեք տարի առաջ թելադրում էին հետապնդել դաշնակցության գործիչներին: Այս մեկ: Երկրորդ՝ այդ ժամանակ Կովկասը կառավարում էր մի խելացի դիպլոմատ, ռուս բյուրոկրատիայի լավագույն ներկայացուցիչներից մեկը, որը ճանաչված էր Ռուսաստանում որպես ազատամիտ մարդ: Դա Վորոնցով-Դաշկովն⁴ էր:

կողմից Սերբիայի ու Հունաստանի միջև: Վերջիններիս միանում են Օսմանյան կայսրությունը և Չեռնոգորիան: Պատերազմն ավարտվում է Բուլղարիայի պարտությամբ: Բուխարեստում կնքված պայմանագրի համաձայն Բուլղարիան Ռումինիային է զիջում Հարավային Դորբուջան, իսկ Օսմանյան կայսրությանը՝ Հարավային Մակեդոնիան և Արևմտյան Թրակիայի մի մասը: Սերբիային է անցնում Հյուսիսային Մակեդոնիան:

¹ Գիրս Սիխայիլ (1856–1932 թթ.), ռուս դիվանագետ, 1911–1914 թթ. Կ. Պոլսում և 1915–1917 թթ. Հռոմում Ռուսաստանի դեսպան: Եղել է գեներալ Պյոտր Վանզելի ներկայացուցիչը Անտանտի երկրների հրամանատարությունում:

² Սազոնով Սերգեյ (1860–1927 թթ.), ռուս քաղաքական գործիչ, 1911–1916 թթ. Ռուսաստանի արտաքին գործերի նախարար: 1917 թ. հունվարի 17-ից Սեմ Բրիտանիայում Ռուսաստանի դեսպան: Սպիտակ շարժման մասնակից:

³ 1914 թ. օգոստոսի 18-ին Ս. Պետերբուրգը վերանվանվում է Պետրոգրադի:

⁴ Վորոնցով-Դաշկով Իլարիոն (1837–1916 թթ.), ռուս պետական և ռազմական գործիչ: 1905–1915 թթ.՝ Կովկասի փոխարքա: Ինչպես նկատել է ակադեմիկոս

Կովկասի նախկին փոխարքաներից և վարչապետներից ոչ մեկը այնպես մոտիկից չի կարողացել ճանաչել Կովկասը և ըմբռնել ռուսական շահը Կովկասում, ինչպես Վորոնցով-Դաշկովը:

Վորոնցով-Դաշկովը չի դիմել մտրակի ուժին և ոչ էլ բռնի միջոցների, նա մեղմ, բարի կառավարիչ էր և բացի այդ, նա չի եղել այլացեղ ժողովուրդներին ճնշող և ռուսականությանը կոպիտ ճանապարհով առաջ մղող, այլ նա եղել է խաղաղ կառավարիչ, խաղաղ նվաճող, և այս ուղղությամբ Վորոնցով-Դաշկովը Կովկասում մեծ գործ է արել հատկապես Ռուսաստանի համար:

Եթե մի կողմ դնենք նրա բոլոր արածները և հիշենք մի միայն հայ ժողովրդի նկատմամբ կատարած մի գործ՝ եկեղեցական կալվածքները ետ տալը և հայոց ծխական դպրոցների վերականգնումը, ապա դրա կողքին դնենք այն տրամադրությունը, որ այսօր տիրում է հայ ժողովրդի մեջ Ռուսաստանի հանդեպ, հասկանալի կլինի, թե ինչպիսի նուրբ հեռատեսությամբ էր օժտված այդ պետական մարդը՝ Վորոնցով-Դաշկովը, իբրև ռուս պետական մարդ¹:

Գերազանց արտահայտվել է [նրա տեսակետը] ընդարձակ գեկուցման մեջ, որ նա Կովկաս գալուց հետո ներկայացրեց կայսրին՝ Կովկասի և մասնավորապես հայերի մասին:

Հրաչիկ Սիմոնյանը. «Ավելի լավ ըմբռնելով Ռուսաստանի պետական շահերը, քան իր մտազար մախորդը (Կովկասի նախկին կառավարչապետ Գ. Գոլիցինը – Ռ. Գ., Ռ. Ս.), նրա (Ի. Վորոնցով-Դաշկովի – Ռ. Գ., Ռ. Ս.) օրոք զգալիորեն փոխվեց հայերի նկատմամբ ռուսական պետության քաղաքականությունը: Իսկ 1912–1914 թթ. այդ քաղաքականությունը բացահայտորեն հայամետ դարձավ», տես Սիմոնյան Հր., Անդրանիկի ժամանակը, երկու գրքով, գիրք Ա, Երևան, 1996, էջ 364: Ավելին, 1914 թ. հունվարի 4-ին փոխարքան թույլատրում է ստանալ Կ. Պոլսում հրատարակվող և ՀՅԴ պարբերական հանդիսացող «Ազատամարտ» թերթը, որը մինչ այդ արգելված էր գրաքննությամբ, տես ՀԱԱ, ֆ. 122, ց. 1, գ. 15, թ. 86:

¹ Հարկ ենք համարում նշել, որ Ի. Վորոնցով-Դաշկովը հանդիսացել է ընդհատակում գործող «Սրբազան դրոժինա» միապետական կազմակերպության նախաձեռնողը, որը պետք է պայքարեր ահաբեկչության դեմ և պաշտպաներ ռուսական կայսրին հնարավոր վտանգներից: Կազմակերպությունը գործել է 1881 թ. զարմանից և պաշտոնապես դադարեցրել է իր գործունեությունը 1883 թ. հունվարի 1-ին: Այնպես որ չի կարելի փոխարքային համարել ազատամիտ պետական գործիչ: Նրա օրոք մեծ թափ են ստանում հայ-թաթարական ընդհարումները:

Թե Վորոնցով-Գաշկովի գործունեությունը որքան անկեղծ է եղել դեպի հայ ժողովրդի իսկական շահերը, իբրև ուրույն ցեղի, դժվար է այժմ այդ հարցը լուսաբանել ճշգրիտ: Խնդիրը վիճելի է, ժամանակի կարոտ, սակայն անհերքելի է, որ կոմսն անձնապես դեպի հայ աչքի ընկնող և մանավանդ դեպի բարձր հոգևորականությունն, ուներ վերին աստիճանի բարյացական վերաբերմունք:

Եվ ահա մի կողմից Պետրոգրադի բարձր շրջաններում առաջացած լավ տրամադրությունը հայերի նկատմամբ, մյուս կողմից՝ Վորոնցով-Գաշկովի նման խելացի պետական մարդու ներկայությունը Կովկասում, զարկ տվին հայ ժողովրդի ծանր օրերին, ձեռնաքափ եղած և մի կողմ քաշված հայ առաջավոր դասին և հայ հոգևորականությանը, ու այդ օրից Կովկասի մեր ազգային գործերի գլխին բազմած ենք տեսնում հայ առաջավոր, հարուստ դասակարգին և հոգևորականությանը:

Թիֆլիսում կազմվում է ազգային մի մարմին, որը հետո կոչվեց «Ազգային բյուրո»¹: Նման մարմիններ կազմվում էին նաև հայաշատ քաղաքներում, կապ հաստատելով Թիֆլիսի մարմնի հետ: Հաճախ Թիֆլիսում տեղի էին ունենում ժողովներ և զավառներից հրավիրվում էին ներկայացուցիչները. ժողովին մտահոգող գլխավոր էական հարցը հայկական ռեֆորմների հարցն էր և քննում էին այդ թեման տարբեր տեսակետներով և տարբեր պարագաներում: Թիֆլիսի մարմինը կապ էր պահպանում Էջմիածինի հետ. կապ կար նաև Մոսկվայի, Պետրոգրադի հայ գաղութների հետ և Եվրոպայի մի քանի նշանավոր հայերի ու հայասերների հետ: Թիֆլիսի ղեկավար մարմինը, որը

¹ Հայոց ազգային բյուրոն (Ազգային բյուրո, Թիֆլիսի ազգային կենտրոնական բյուրո) ստեղծվել է 1912 թ. սեպտեմբերի 19-ին՝ ռուսական կայսրության հայաշատ կենտրոնների ներկայացուցիչների համագումար-խորհրդակցությունում: Բյուրոյի կազմում ընդգրկված էին կուսակցական և անկուսակցական ներկայացուցիչները: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, ռուսական իշխանությունների թույլտվությամբ կազմակերպել և ղեկավարել է հայ կամավորական շարժումը և արևմտահայ փախստականների և զաղթականների փրկության գործը, տես Բաբայան Մ., Հայոց ազգային բյուրոյի ստեղծման հարցի շուրջը, Բանբեր Հայաստանի արխիվների, N 1, էջ 289–291:

հանդիսանում էր գլխավոր դեկավար մարմինը, լեզավ հիմնարկություն չէր, բայց նրա գոյությունը ոչ միայն հայտնի էր կառավարությանը, այլև վերջինս իրազեկ էր, թե ինչ է կատարվում այդ մարմնի մեջ:

Մարմինը գնալով քաղաքացիություն էր ստանում շնորհիվ նրա, որ կառավարությունը արգելք չէր դնում, ուստի այդ մարմնի մեջ ինտելիգենտ մարդկանց հետ կողք-կողքի տեղ են բռնում և՛ հարուստ վաճառականներ և՛ հոգևորականները: Պետք է հիշել նաև այն, որ կառավարության կողմից հայերի նկատմամբ այնքան նպաստավոր տրամադրություն է ստեղծվում, որ նույնիսկ միջնորդություն է հարուցվում բարձր կառավարության մոտ ներման արժանացնել դատապարտված ու աքսորված, ինչպես նաև դատարանից խուսափած արտասահմաններում գտնվող դաշնակցականներին:

Ահա այս պայմանների մեջ պայթում է համաեվրոպական պատերազմը: Գերմանիան ձեռնոց է շարտում Ռուսաստանին և պատերազմի մեջ նետվելու ախորժակ է ցույց տալիս նաև Տաճկաստանը: Մի րոպեում հայ ժողովրդի կատարած դերն անցյալ պատերազմների ժամանակ ցցվում է մեջտեղ, նրան սիրաշահելու խնդիրը դառնում է հերթական, և Թիֆլիսի ազգային մարմինը փայփայվում է և Կովկասից տարագրված մի շարք դաշնակցական գործիչներ հնարավորություն են ստանում վերադառնալ Կովկաս:

Համաեվրոպական պատերազմի հետ նոր պայմաններ են ստեղծվում Հայ դատի շուրջը, նրա վերջնական լուծումն ավելի քան հավանական է դառնում. հայ ժողովրդի երազանքների իրականացումը պայմանավորվում է Ռուսաստանի, Ֆրանսիայի, Անգլիայի հաղթանակի հետ, հաղթանակ, որը երկար սպասեցնել չպիտի տար: Հայ ժողովրդի դատի լուծումն այնքան ավելի նպաստավոր է լինելու, որքան նույն հայ ժողովուրդն իր մասնակցությամբ, իր զոհաբերություններով ուժ տված կլինի մոտալուտ հաղթանակին:

Շահերի գուգորդությունը և մի շարք հավաստիացումներ. ահա այն դրդիչները, որոնք եկան սկիզբ դնելու կամավորական շարժանը Կովկասում:

Ավելի մանրամասն քննել կամավորական շարժման պարագաները և զնահատումներ տալ առայժմ վաղաժամ է, մենք բավարարվում ենք փաստը արձանագրելով:

Եվ ահա Կովկասի հայ իրականության մեջ հրապարակ են գալիս կալվածական ցույցերի հայ-թուրքական ընդհարումների¹, Պարսկաստանի շարժումների² հերոսները հայտնի իրենց անցյալով և նրանք հրապարակ են գալիս ռուս իշխանությունների թույլատվությամբ՝ իբրև կամավորական վաշտերի ղեկավարներ, որոնց անունները վերը հիշատակել ենք:

Եվ հայի վճռական ժամը հասել է՝ հայ ժողովուրդը ցույց պիտի տա իր արիությունը: Այդ արիությունից է կախված Հայկական հարցի վերջնական լուծումը, ու իսկապես որ Հայկական հարցի լուծումը վերջնականապես լուծվեց 1915 թվին՝ տաճկահայերի բնաջնջումն ու ներգաղթը, Տաճկաստանի [Օսմանյան կայսրության] մաքրումը անհարազատ հայ տարրերից, էլ ի՞նչ գլխացավանք Հայկական հարցի, ռեֆորմների մասին, և ազգային մարմինը՝ հանձինս ռուսահայ ինտելիգենտ վաճառականների, դաշնակցական ղեկավարների, որ այսօր վայելում է արևմտահայ ժողովուրդը³, Թիֆլիսի ազգային բյուրոյի ղիպլոմատ ավանտյուրիստներից, այն վերանորոգումները՝ ռեֆորմները, որին մեծ հավատով սպասում էր Թիֆլիսում հայկական ազգային բյուրոն, թե ի՞նչ չափով իր երազանքին հասավ, դա մեզ համար արդեն պարզ է:

Մենք այսօր պարզ տեսնում ենք, թե որքան հայի համար ցավակցում էին ազնվորեն այն բարձր պաշտոնյաները՝ ազնիվ վորոնցով-դաշկովները, հայի բարեկեցության համար, հանուն իրենց պետական շահերի, մենք տեսանք Վորոնցով-Դաշկովի՝ ռուս խելոք ղիպլոմատի ցույց տված համակրանքը, մեծաշուք կապիտալիստներ-

¹ Նկատի ունի 1905–1906 թթ. հայ-թաթարական ընդհարումները, որոնք հրահրվել էին ցարական իշխանությունների կողմից:

² Նկատի ունի 1905–1911 թթ. պարսկական հեղափոխությանը մասնակցած հայ գործիչներին:

³ Նկատի ունի սփյուռքահայությանը:

րին և հոգևորականությանը, հանուն ռուսական պետական շահերի, հյուրասիրելով հայ ազգայիններին, գրավելով նրանց հավատը դեպի ռուսական կայսրությունը և հայերից սպասեց հավատարիմ ծառայություն մինչև հասնի հատուցման պահը:

Մենք տեսել էինք և նորից տեսանք և՛ զգացինք մեր կաշվի վրա, թե որքան բարյացակամ գտնվեցին հայ գաղթի նկատմամբ ռուս դիպլոմատ փորձնուկ-դաշկովները և ռուս բարձրագույն պաշտոնյաները, իսկ Դաշնակցությունը մի քանի հեղափոխականների ազատության համար, զոհաբերեցին ամբողջ արևմտահայ ժողովրդին, հանուն հայի ազատության, ռուս դիպլոմատների ծուղակն ընկնելով, ահա մենք տեսնում ենք անցյալի ողբերգական վիճակը, հանձին ռուսահայ ազգայնականների անհեռատես սխալ քայլին¹:

Որքան էլ քննադատենք, որքան էլ պարսավենք արդեն ուշ է: Եղածը եղավ և արևմտահայը բնավեր եղավ իր հայրենիքից և իր պապերի ծննդավայրից. աշնան տերևի նման ցիր ու ցան [եղավ] օտար երկրներ, միայն մի զանգված կարողացավ ապահով վայր գտնել Սովետական Հայաստանում, իսկ մեծ մասը գտնվում են օտար, անհյուրընկալ երկրներում անջատված Սովետական Հայաստանից, մնաց կարոտ իր հայրենիքին՝ սպասելով այն հույսով, որ կբացվի մի օր հայերի առավոտյան փրկության արշալույսը. թող հուսան ու սպասեն:

Վերջ պատմության

Եղիշե Մ. Բուրանյան

¹ Ե. Բուրանյանի նման հետևությունը չի համապատասխանում իրականությանը: ՀՅԴ-ը իր ստեղծման օրից պայքարել է արևմտահայության ազատագրության համար և շատ դեպքերում նրա բազմաթիվ գործիչներ իրենց կյանքն են զոհել հանուն արևմտահայության ազատագրության: Բացի այդ, հուշագրի, ինչպես նաև Արևելյան Հայաստանում բնակվող արևմտահայերի մի մասի մոտ պահպանվել էր արևելահայ և արևմտահայ «հակասությունը», որը զգացվում է Ե. Բուրանյանի այն մեղադրանքներից, որոնք ուղղված են «ռուսահայ» դաշնակցության հասցեին: Պետք է նկատել, որ նա ձեռնպահ է մնում քննադատելու ՀՅԴ արևմտահայ անդամներին: Սա կրկին հաստատում է մեր վերը նշված դիտարկումը:

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԻ ԿԵՆՑԱՂԸ

Վանի ժողովուրդը մասնավորապես քաղաքի բնակչության մեծամասնությունը, արհեստավորությունն էր կազմում, զարգացած մշակույթով: Արհեստներից են ոսկերչությունը, մարանգոգությունը, որի արհեստի արդյունքների գրեթե մեծ մասը արտահանվում է զանազան քաղաքներ և նույնիսկ արտասահման: Օրինակ՝ Վանի արծաթագործների արծաթյա ծխատուփերը, ձեռքի զավագանների գլխի գեղարվեստական գործերը արտահանվում էր Մարսիլիա¹, Եգիպտոս, Պոլիս և այլ զանազան քաղաքներ: Վանի ոսկերիչների գործերը՝ որպես ձեռքի աշխատանք բարձր զին ունեին արտասահմանում: Վանի ոսկերիչների թիվը երկուսից երեք հարյուր արհեստավորների [էր հասնում] հռչակավոր վարպետներ էին կայումիջի² Բաշյան Գևորգը, Բոռոզանջյանը, Ավագյան Տիգրանը, Թուրշյանը, Բերբերբաշյանները, Շալջյանը կանանց քեների³ լավ մասնագետ և ուրիշ շատ աչքի ընկնող վարպետներ, որոնք իրենց ձեռքի տակ ունեին հինգից-յոթ աշակերտներ:

Կային նաև հռչակավոր փորագրողներ. կելենքեր Խաչիկն էր Տեր-Արիստակեսյանը և շատ ուրիշներ, որոնք իրենց ճարտարապետական փորվածքներով փայլ են տալիս, գեղեցկացնում արծաթյա շինվածքներին, մանավանդ սևատլի գույներին, և ոսկեզօծ անոթներին, որոնք թանկարժեք գեղարվեստական գործեր էին՝ գնահատված գեղարվեստի թանգարանների արվեստագետների կողմից:

Շատերի կողմից գնահատված էր նաև Վանի մարանգոգությունը, տնային կահ-կարասկներ, քուրուկից⁴ պատրաստված շիֆաներկաներ⁵, սեղաններ, աթոռներ, նարդիներ և զանազան իրեր, որի

¹ Մարսել:

² Ոսկերիչ:

³ Գոտի:

⁴ Փայտի տեսակ:

⁵ Պահարաններ:

հռչակավոր վարպետներն էին Շատախցյան Նազարեթը, Տ. Գրիգորյանը, Ղարասեֆարյան Եղիան և շատ ուրիշ լավ վարպետներ, որոնք իրենց հետ տարան իրենց գեղարվեստը, չթողնելով լավ արհեստավոր հետևորդներ իրենց մահից հետո:

Ինչպես ասեցի, Վանի լրմակչության¹ մեծամասնությունն արհեստավորներ էին, զարգացած էր նաև պղնձագործությունը, դերձակությունը, կոշկակարությունը, ջուլհակությունը, շալագործությունը, կտավագործությունը և այլ զանազան արհեստներ և այս ամբողջ արհեստավորությունը բաղկացած էր զուտ հայերից, մի փոքր սոկոս էին կազմում վաճառականները և փոքր առևտրականները որոնք նույն պես բաղկացած էին հայերից, ոչ մի օտարազգի առևտրական կամ արհեստավոր գոյություն չուներ մասնավորապես՝ Վանում:

Վանի մահմեդական ժողովրդի մեծամասնությունը կամ պետական պաշտոնյա էր, կամ՝ հասարակ ժողովուրդ, որոնք զբաղվում էին բախչա-բոստանով, կամ դասարությամբ¹, կամ էլ մանրածախ մթերավաճառությամբ:

Այս հանգամանքն [պատճառ] է, որ հայ ժողովուրդը հալածվում է թուրք օսմանյան պետության և խավար ժողովրդից, որոնք անընդունակ են հայ կուլտուրական ժողովրդի հետ մրցել, և աշխատում են խժոժություններ ստեղծել հայի արդար աշխատանքը յուրացնելու զիզզազ² ճանապարհներով, հետևաբար Օսմանյան պետությունը [ընդունակ] է ոչ միայն իր անիրավացի հարկերով ճնշելու, այլև կոտորածներով, սպանություններով:

Իսկ հայ գյուղացին զբաղվում է զուտ երկրագործությամբ և այգեգործությամբ. քիչ թվով նաև անասնաբուծությամբ և ոչխարաբուծությամբ, որովհետև հայ գյուղացու լավ արոտատեղիները բոնության միջոցով անցան քուրդ ավազակների ձեռքը, իսկ հայ գյուղացին ստիպված [միայն] իր ձեռքին եղած փոքր հողամասերով բավարարվել, իր ընտանիքի ապրուստը հայթաթել բնության պարզևած լեռնային զանազան բանջարեղեններով, որոնցով հայ չքավոր ընտանիք-

¹ Դասարություն՝ մասվաճառություն:

² Անօրինական:

ները կերակրում էին իրենց զավակներին. վերցնենք օրինակ լեռնային բարիքներից խավրժիլ, մանդակ, կանգառ, սունկ և զանազան տեսակի ինքնաբույս կանաչեղեններ՝ սիվտկուկ, բանջար, էրեժենկ¹, սոխուկ, եղոճա, բողիկ և զանազան այլ կանաչեղեն, որ գյուղացի հայ տանտիրուհին ճարտարությամբ աղի ջրով պատրաստում, համեմունք և այդ միջոցով բավարարում էր իր գերդաստանի ամբողջ ընտանիքին, եթե նա գուրկ էր յուր ու մեղրից: Հայ կինը աշխատունակ է և ստեղծագործող, իր ընտանիքը կերակրելու և նեղ վիճակից փրկելու:

Հայ գյուղացին բացի ցորենի մշակությունից ցանում է ամենաարդյունավետ և սննդարար գյուղատնտեսական ուրիշ շատ բանջարեղեն. գետնախնձոր (կարտոֆիլ), բակլա, գուգուգ, ոսպ, կենջրեկ, որի կաթը օգտագործում է իբրև կերակրի յուղ, կտավատ, որից պատրաստում են ձեթ, կնջուք, կանեփ, որոնց ցողուններից հանում են թելեր կանեփ կոչվող, որ ի գործ են ածում պարկեր պատրաստելու, իսկ կանեփից յուղ հանում, ստեպղին (զազար), շաղգամ, ճակնդեղ և շատ զանազան օգտավետ բույսեր, որոնք փոխարինում են հացին ու մսեղենին:

Տաճկահայաստանը հարուստ է բնական բուսական հարստություններով առանց արհեստականությունների. Մշո աշխարհը օժտված է զանազան բնական հարստություններով, ինչպես ասում են՝ «երկնքից մանանա է իջնում»: Կան այնպիսի անտառներ, որի ծառերի տերևների վրայից գյուղացիները մեղրի նման հյութ են հավաքում, որ կոչվում է կազալի. հավաքում և հալում են մեծ քանակությամբ, որպես մեղր կամ մուրաբա, որպես պատրաստի կերակուր. ընկույզի յուղը հանում են անտառում բուսած վայրի ընկուզենիներից, լեռնային ծործորներից հավաքում են ճերմակ, վայրենի մեղր, առանց արհեստական մշակության:

Շերվանն ունի ընդհարձակ խաղողի այգիներ, խաղողից պատրաստում են դռաբ և պաստիլ, սուջուխ և ընտիր չամիչ, որ կոչվում է գերմիյեն: Նշանավոր է մոկաց տանձը, որ հասնում է մայիս ամսին,

¹ Էրինջիկ (յոնջա):

մորի, մկնալուչ, թթի չորացուկ և այլ զանազան անտառային մրգեր, որոնք փոխադրվում են Վան քաղաք և զանազան վայրեր: Վանի շրջանի գյուղերից Արտամետ, Ծվստան, Զևիկի հարուստ են մրգատու այգիներով: Արտամետը կարմիր և հոտավետ խնձորով, իսկ Ծվստանի խոշոր ընկույզով, սալորով ու բալով, Շահպաղի գյուղի հռչակված էր խաղողը, գինիով և դեղձով, Վարագը խավրժիով և սարերի հազարավոր գույնզգույն ծաղիկներով, շուշանով, զներպուկով, կակաչով և զանազան գույներով ծաղիկներով, որոնք ծածկում են Վարագի բարձրաբեր լեռներն ու փոսերը: Այս երկնային բարիքներից է առանձնապես սնվում և մեծ ապրուստի աղբյուր է ստեղծում Վանի ժողովուրդը, բացի գյուղատնտեսական վարուցանքից:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՇԱՀ ԱՔԱՍԻ ՍԱՍԻՆ. ՈՍԿԵ ՃԱՇ

1603 թվականին Պարսկաստանի Շահ-Աքաս արքան գրավեց Հայաստանի մի քանի շրջաններ և եկավ նստեց Ջուղա քաղաքում: Բռնակալի սիրտը շահելու համար ջուղայեցի խոջա Խաչիկը շքեղաշուք խնջույք սարքեց նրա պատվին:

Ճաշասեղանները պայթում էին առատությունից: Շահ-Աքասին ուտելիքներ ու ըմպելիքներ էր մատուցում ինքը՝ խոջա Խաչիկը: Ահա նա շահի առջև դրեց մի մատուցարան, որի վրա եղած ամեն ինչ ոսկուց էր: Այստեղ կար և՛ եղջերվի խորոված ազդր, և՛ սև կաքավի միս: Ամեն ինչ այնքան բնական էր, որ արքային թվաց, թե դրանք իսկական են: Նա ձեռքը տարավ որևէ բան ուտելու և հասկացավ, որ մատուցարանի վրա եղած ամեն բան ոսկուց է: Ապշեց, ժպտաց ու Խոջա Խաչիկին ասաց.

- Դու ավելի հարուստ ես, քան՝ ես:

- Սա ընծայում եմ քեզ, արքա,- հաճոյացավ խոջան և ամբարտավանալով՝ ավելացրեց,- դու առաջինն ես հին ու նոր բոլոր արքաների մեջ, որին Հայաստանը ոսկե ճաշ է մատուցում:

Դա վերջին ճաշկերույթն էր Ջուղայում: Խոջա Խաչիկի սրտաբաց հյուրընկալությունը Շահ-Աքաս արքային առիթ տվեց մտաեղանալու մի մեծ ոճրագործություն: «Ինչո՞ւ թողնել, որ այսքան հարուստ ու ճարտարվեստ մարդիկ մնան Հայաստանում,- մտածեց արքան,- թող գնան և ծաղկեցնեն Պարսկաստանը»:

Եվ արքան Ջուղայի ու շրջակա վայրերի երեք հարյուր հազար հայերի բռնագաղթեցրեց Պարսկաստանի խորքերը:

Շեն ու քարգավաճ Ջուղան, որ դարձել էր Հայաստանի երկ-
րորդ Անին, ամայացավ:

Հե՛յ, խոջա Խաչիկ, տեսա՞ր, թե ոսկե ճաշն ինչ խաղ խաղաց
քո հայրենիքի գլխին:

Գրքի բոլոր տվյալները բնագրից են տպագրվել՝ առանց
փոփոխությունների:

Տպագրեց և վերականգնեց Արմեն Բուրանյանը:

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Աբաջյան Տիգրան 62
 Աբրուլ Համիդ II 15, 22, 40, 43, 54
 Աբրուլ Մեջիդ 43
 Աբդուտահման բեկ 22
 Ադամյան Գևորգ 14
 Ալի բեկ 22
 Ալի Իսսան փաշա 50
 Ալիշան, տե՛ս Ալիշան Ղևոնդ
 Ալիշան Ղևոնդ 20
 Ալիշանյան Զերովբե,
 Պետրոս, տե՛ս Ալիշան Ղևոնդ
 Ակնունի, տե՛ս Մալումյան
 Խաչատուր
 Ահարոնյան, տե՛ս
 Ահարոնյան Ավետիս
 Ահարոնյան Ավետիս 30
 Ահմեդ Ջեմալ փաշա 41
 Ամիրյան-Գևորգյան
 Խաչատուր 60
 Այիբխան բեկ 24
 Անայան Մ. 21
 Անդրանիկ, տե՛ս Օզանյան
 Անդրանիկ
 Աշղդ 75
 Աշղդ Քլարենս 25
 Ավագյան Տիգրան 103
 Ավդուահման բեկ, տե՛ս
 Աբդուտահման բեկ

Ավետիսյան Մկրտիչ, տե՛ս
 Թերլեմեզյան Մկրտիչ 24
 Արամ, տե՛ս Մանուկյան Արամ
 Արարքցյան Միհրան 38
 Արիստակեսյան Խաչիկ 108
 Արդուբյան Հովսեփ
 (արքեպիսկոպոս) 93
 Արդուբյան Հովսեփ (Իշխան)
 60
 Արմեն, տե՛ս Բուրանյան
 Արմեն
 Արտաշես, տե՛ս Բուրանյան
 Արտաշես
 Արսեն (վանահայր) 18
 Բաշյան Գևորգ 103
 Բեդրխան բեկ 22
 Բեհաեդդին Շաքիր բեյ 45
 Բեյխուդի Ռուբեն 65
 Բշարե Չաքո 53, 54
 Բերբերբաշյաններ 103
 Բոռոզանջյան 103
 Բրայիմ, տե՛ս Իբրահիմ
 (ցեղապետ)
 Բուլղարացի Գրիգոր, տե՛ս
 Քյոզյան Գրիգոր
 Բուրանյան Արմեն 6
 Բուրանյան Արտաշես 3
 Բուրանյան Եղիշե 3, 4, 5, 6,
 31, 55-58, 80, 91, 102
 Բուրանյան Ենոք 3

Բուրանյան Կառլեն 4
 Բուրանյան Քնարիկ 4
 Բուրանյան Օհան 11
 Բուրիանեղին (Խազարապետ) 45-48, 51, 64, 65
 Գագիկ Արծրունի 18
 Գալիկյան Հրանտ 63-64
 Գալճյան Լևոն 74
 Գասպարյան Ռուբեն 6
 Գավաֆյան Արշակ 57, 59
 Գարասեֆերյան Սկրտիչ 63
 Գիրս Միխայիլ 97
 Գոլիցին Գրիգորի 95, 98
 Գորոդեցկի Սերգեյ 10
 Գրիգորյան Ս. 104
 Գևորգ V 87
 Գևորգ Չաուշ, տե՛ս Աղամյան
 Գևորգ
 Գևորգյան Արտաշես 41
 Դավթյան Եփրեմ խան 59
 Դանիել (վարդապետ) 25
 Դավիթ, տե՛ս Դավո
 Դավո 5, 32-37
 Դեղտորիկյան Թևոս 38
 Դերձակյան Օնիկ 30, 45, 55, 58, 62
 Դրո, տե՛ս Կանայան
 Դրաստամատ
 Եկարյան, տե՛ս Եկարյան
 Արմենակ
 Եկարյան Արմենակ 62, 70

Եղիա, տե՛ս Նախշունյան
 Եղիա
 Եղիազարյան Շիրին 76
 Ենոք, տե՛ս Բուրանյան Ենոք
 Ջավարյան Միմոն 30
 Ջարյան Նաիրի 75
 Ջեքի փաշա 15, 16
 Ջոհրապ, տե՛ս Ջոհրապ
 Գրիգոր
 Ջոհրապ Գրիգոր 57, 59, 60
 Ջորյան Ստեփան (Ռոստոմ) 30, 45
 Էնվեր, տե՛ս Իսմայիլ Էնվեր
 փաշա
 Թալեաթ փաշա, տե՛ս Մեհմեդ
 Թալեաթ (Թալաաթ) փաշա
 Թահսին փաշա 40, 64
 Թեիլերյան Սողոմոն 41
 Թեմուչին, տե՛ս Չինգիզ խան
 Թերլեմեզյան, տե՛ս
 Թերլեմեզյան Սկրտիչ
 Թերլեմեզյան Սկրտիչ 24, 29
 Թերլեմեզյան Տաճատ 36, 38
 Թերլեմեզյան Փանոս 62, 70
 Թոխմախյան Ա. 21
 Թորոմանյան Միհրան 74
 Թորշյան 103
 Իբրահիմ (ցեղապետ) 67
 Իսսան փաշա, տե՛ս Ալի
 Իսսան փաշա
 Իշխան, տե՛ս Պողոսյան
 Նիկոլ (Նիկողայոս)

Իսմայիլ Էնվեր փաշա 41, 47,
 49, 51, 64
 Իսրայել Օրի 93
 Լեզգի բեյ 67
 Լենկ Թեմուր 17
 Լինչ Հենրի 7
 Խալիլ բեյ 54, 71
 Խանազատ Ռ. 29
 Խանջյան Աղասի 63
 Խանջյան Ղևոնդ 63
 Խառակոնիսցի Շիրին, տե՛ս
 Եղիազարյան Շիրին
 Խեչո, տե՛ս Ամիրյան-
 Գևորգյան Խաչատուր
 Խժ-խժ 34
 Խոջա Խաչիկ 107
 Խռանյան Վահան 67
 Խրիմյան Հայրիկ, տե՛ս Խրիմ-
 յան Մկրտիչ
 Խրիմյան Մկրտիչ 5, 20, 21, 88
 Ծաղիկյան Ստեփան 41
 Կալի փաշա 23
 Կայծակ Առաքել, տե՛ս Աբաջ-
 յան Տիգրան
 Կանայան Դրաստամատ
 (Դրո) 59, 60, 84
 Կառլեն, տե՛ս Բուրանյան
 Կառլեն
 Կարմիր սուլթան, տե՛ս Աբդուլ
 Համիդ II
 Կաֆայան Արշակ, տե՛ս -
 Գավաֆյան Արշակ

Կաֆյան Գ. 29
 Կոմս, տե՛ս Փափազյան Վա-
 հան
 Կոստյան Հայկակ 74
 Կորթ բեյ 67
 Կուլոյի Մելիքսեթ 75
 Համազասպ Սրվառտյան,
 տե՛ս Սրվանձտյան
 Համազասպ
 Համիդ, տե՛ս Աբդուլ Համիդ II
 Հասան բեյ 67
 Հելմի Բուրհանեդին բեյ 45-48,
 51, 64, 65
 Հիսուս Քրիստոս 28
 Հրայր, տե՛ս Ղազարյան
 Արմենակ
 Հովհաննես (վարդապետ) 7
 Հովհաննիսյան Սարգիս, տե՛ս
 Մանուկյան Արամ
 Հոֆֆ 44
 Հոսեյին բեյ 22
 Ղազարյան, տե՛ս Ղազարյան
 Արմենակ
 Ղազարյան Արմենակ 14, 30
 Ղարասեֆարյան Եղիա 104
 Ճիթեչյան Գալուստ 71
 Ճիթեչյան Գևորգ 38, 68
 Ճոնյան Գրիգոր 63
 Մալուխյան Խաչատուր 30, 45
 Մարտիկ, տե՛ս Մարուխանյան
 Մարտիրոս

Մանուկյան Արամ 5, 32-35, 62,
79

Մարտիկ, տե՛ս Սարուխանյան
Մարտիրոս

Մելիք Մկո 12, 13

Մելիք-Հակոբյան Հ. 21

Մելիքյան Պողոս

(եպիսկոպոս) 19, 21

Մելքումյան Հակոբ 42

Մեհմեդ Թալեաթ (Թալաաթ)

փաշա 41, 59, 60

Մեհրաբյան Արշակ, տե՛ս

Մեհրաբյան Սարգիս 59, 60

Մինասյան, տե՛ս Մինասյան

Միքայել

Մինասյան Միքայել 74

Միրզախանյան Միհրդատ 74

Միքայելյան, տե՛ս

Միքայելյան Քրիստափոր

Միքայելյան Քրիստափոր 30

Մուհամեդ մարգարե 8

Մուստաֆա բեկ 13, 22, 67

Մուստաֆա Զեմալ 41, 42

Մուրադ, տե՛ս Պոյաճյան

Համբարձում

Յարոու Էռնեստ 25

Յուդենիչ Նիկոլայ 56

Նազարբեկ, տե՛ս

Նազարբեկյան Ա.

Նազարբեկյան Ա. 29

Նազարբեկյան Թովմաս 54,

55, 72, 82, 85

Նազարբեկով Ֆոմա, տե՛ս

Նազարբեկյան Թովմաս

Նազըմ բեյ 45

Նազիմ փաշա 21

Նալբանդ Ջևդեթ, տե՛ս Ջևդեթ
բեյ

Նախշունյան Եղիա 69

Նաճի բեյ 45

Ներկարարյան Հարություն

(Հարո) 74

Ներսես Աշտարակեցի 93, 94

Նեփ Ջորջ Փ. 16

Նիկողա Ալեքսեյ 79, 83

Նոգալես Ռ. դե 50

Շալջյան 103

Շահ Աբաս 107

Շահինյան Սարգիս 74

Շամբարով Ե. Վ. 45

Շամիրամ 17

Շատախցյան Նազարեթ 104

Շեքըր աղա 67

Շիրին, տե՛ս Եղիազարյան

Շիրին

Շիրոյան Գաբրիել

(եպիսկոպոս) 19

Շուքրի բեյ 49

Չեռնոգուրով Ֆեոդոր 55

Չինգիզ խան 17

Չոլոյան Հովսեփ 67

Պետո, տե՛ս Պետրոսյան

Ալեքսանդր

Պետրոս 13

Պետրոս Մեծ 92
 Պետրոսյան Ալեքսանդր 24
 Պողոս, տե՛ս Վարդանյան
 Պողոս (եպիսկոպոս)
 Պողոսյան Նիկոլ
 (Նիկողայոս) 67
 Պոյանյան Համբարձում 14
 Պորտուգալյան, տե՛ս
 Փորթուգալյան Սկրտիչ
 Ջելալեդին 12
 Ջեմալ փաշա, տե՛ս Ահմեդ
 Ջեմալ փաշա 41, 42
 Ջուլեթ բեյ 64, 67-69, 71-73, 77
 Ռեյնոլդս 25
 Ռոստոմ, տե՛ս Ջորյան
 Ստեփան
 Սաադեդին փաշա 16, 21,
 Սազոնով Սերգեյ 97
 Սահակյան Ռուբեն 6
 Սայտո բեկ 67
 Սարգսյան Դավիթ 74
 Սարուխանյան Մարտիրոս 24
 Սեդրակ 75
 Սելահետդին փաշա, տե՛ս
 Սաադեդին փաշա
 Մեյիդ Ալի 53
 Մերենկյուլյան Վարդգես 57
 Միմոնյան Հրաչիկ 98
 Ստալին Ի. 5
 Սրվանձության Գ. 21
 Սրվանձության Համազասպ 57,
 60

Սրվաստյան Համազասպ,
 տե՛ս Սրվանձության Համա-
 զասպ
 Սուլթան Մեջլիդ, տե՛ս Աբդուլ
 Մեջլիդ
 Վարդան, տե՛ս Մեհրաբյան
 Սարգիս
 Վարդանյան Մ. 29
 Վարդանյան Պողոս
 (եպիսկոպոս) 19, 21
 Վարդգես, տե՛ս
 Մերենկյուլյան Վարդգես
 Վաֆիկ բեյ 68
 Վեստենենկ 44
 Վորոնցով-Դաշկով Իլարիոն
 97-99, 101
 Վռամյան, տե՛ս Դերձակյան
 Օնիկ
 Վրանգել Պյոտր 97
 Տամատյան Միհրան 14
 Տեր-Մարգարյան Միհրան 67
 Տեր-Պողոսյան Պետրոս 45
 Տիգրան վարժապետ 72
 Տիվիրդյան Հակոբ 69
 Տրուխին 80, 84
 Տեկանց եղբայրներ 21
 Բաֆֆի, տե՛ս Մելիք-
 Հակոբջյան Հ.
 Ուիլյամս (հյուպատոս) 24
 Փափազյան Վահան 25
 Փորթուգալյան Սկրտիչ 29

Քեռի, տե՛ս Գավաֆյան
Արշակ -
Քյոզյան Գրիգոր 72
Քնարիկ, տե՛ս Բուրանյան
Քնարիկ
Քոթոթ Պողոս 67
Քոռ Սեյիդ 22

Քրիստոս տե՛ս Հիսուս Քրիս-
տոս
Օզանյան Անդրանիկ 47, 55,
57, 59, 72, 80, 83, 84, 98
Օհան, տե՛ս Բուրանյան Օհան
Ֆալադ Բրայիմ, տե՛ս
Ֆալադ Իբրահիմ 67

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

- Աբադա 82
 Ադամա 38, 61
 Ադրբեջան տե՛ս Ատրպատա-
 կան
 Աթանանց 77
 Ալաշկերտ 51, 52
 Ալքանիա 91
 Ալեքսանդրապոլ 93
 Ալեքսանդրյան ալգի 94
 Ալջավազ տե՛ս Արծկե
 Ախալցխա 49
 Ախալանք 18
 Աղաջ 76
 Աղբակ 24
 Աղթամար 18
 Ամերիկա տե՛ս Ամերիկայի
 Միացյալ Նահանգներ
 Ամերիկայի Միացյալ
 Նահանգներ 91
 Այգեստան (թաղամաս) 17, 24,
 37, 62-64, 69, 70, 72- 74, 76, 78,
 79
 Այնթափ 61
 Անապատ 19
 Անգլիա, տե՛ս Մեծ
 Բրիտանիա
 Անդրկովկաս 93
 Անի 108
 Առաջավոր Ասիա 92
 Ավանց 19
 Ավերակ 76
 Ատրպատական 55
 Արարատյան գունդ 58, 59, 77,
 80
 Արարատյան երկիր տե՛ս
 Արևելյան Հայաստան
 Արարք (թաղամաս) 73
 Արդահան 49, 50, 51
 Արդանուշ տե՛ս Արդանուշ
 Արդանուշ 50
 Արդվին 49, 50
 Արծկե 20, 54
 Արճակ (գավառ) 20, 74-76
 Արճակ (գյուղ) 3, 4, 7, 9-12, 21,
 46, 74-76
 Արճակ (լիճ) 10
 Արճեշ 54
 Արճիշակ տե՛ս Արճակ լիճ
 Արտամետ (գյուղ) 22, 106
 Արտեր 19
 Արտու 66
 Արևելյան Թրակիա 96
 Արևելյան Հայաստան 3, 7, 8,
 10, 89
 Արևելյան Տիգրիս 66
 Արևմտյան Թրակիա 97
 Արևմտյան Հայաստան 4, 7,
 10, 14, 21, 25, 30, 44, 49, 73, 87,
 96
 Բաթում (նահանգ) 50

Բակրակ 65
 Բաղեշ 16, 53, 80
 Բայազետ 52
 Բաշ Ապարան 60
 Բաշկալե 51, 52, 64
 Բասեն 51
 Բաքու 93
 Բենդի մահու (գետ) 82
 Բեռլին 41
 Բերկրի 53, 83, 84
 Բզնունյաց ծով տե՛ս Վանա
 լիճ
 Բիթլիս, տե՛ս Բաղեշ
 Բողազ 54
 Բոդազ Զեսքնի 75
 Բոշի թաղ 23
 Բուլանլիս 54
 Բուլղարիա 91, 96, 97
 Բուխարա 42
 Բուխարեստ 97
 Բուռնության (ղիրք) 70
 Գանձակ (խանություն) 93
 Գանձակ (նահանգ) 71
 Գավաշ 77
 Գերմանիա 41, 42, 44, 45, 91,
 100
 Գործոթ 54
 Դաբաղ Խերո (ղիրք) 70
 Դադստան 49
 Դարդանեղ (ղիրք) 70
 Դատվան 19, 68
 Դիադին 52

Դիլման 54, 71
 Դիեր 33
 Դուտախ 51, 52
 Եգիպտոս 103
 Եվրոպա 16, 43
 Երզնկա 61
 Երկիր տե՛ս Արևմտյան
 Հայաստան
 Երևան 4, 25, 52, 60, 63, 83, 87-
 89, 93
 Ջանդարութ (գետ) 7
 Ջանգեզուր 93
 Ջեյթուն 4, 61
 Ջըմզըմ 17, 70, 78
 Ջևիկ (գյուղ) 106
 Էջմիածին 83, 87, 88, 93, 99
 Էրզրում տե՛ս Կարին
 Թաղ 67
 Թավրիզ 52
 Թափարիզ 51
 Թիմար 65
 Թիֆլիս 3, 4, 30, 41, 49, 93, 94,
 99, 100, 101
 Թորոմանի թաղ 23
 Թուրքահայաստան, տե՛ս
 Արևմտյան Հայաստան
 Թուրքիա տե՛ս Օսմանյան
 կայսրություն
 Ժնև 29
 Իգդիր 52, 83, 87
 Իջևան 93
 Լեհաստան 91

Լին 19
 Խանասոր 24, 59, 60
 Խաչ փողոց 13, 18, 32
 Խաչ փողոց (ղիբ) 70
 Խառակոնիս (գյուղ) 75, 76
 Խարբերդ 61
 Խոյ 52
 Խորհրդային Հայաստան 102
 Խորհրդային Ռուսաստան 27, 42, 89, 91
 Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն 31
 ԽՍՀՄ տե՛ս Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն
 Ծվատան 106
 Կ. Պոլիս 40, 42, 61, 96-98
 Կաղզվան 52
 Կասալից ծով 93
 Կարին 15, 45, 49, 57, 61
 Կարմրավոր վանք 17, 76
 Կարոյի թաղ 23
 Կարս 93
 Կզլջա 76
 Կիլիկիա 38
 Կլոր դարի թաղ 23
 Կովկաս 45, 49, 52, 53, 70, 82, 92, 95-101
 Կտուց 19
 Հագարե 54, 75
 Հաճըն 38

Համուդ աղայի դիրք 72
 Հայաստան 42, 86, 88, 91, 102, 103
 Հայաստանի Հանրապետություն 42
 Հայկավանք 22
 Հանկոյսներ (ղիբ) 70
 Հաջի Բեքր (գորանոց) 70, 78
 Հասփատան 54, 75
 Հարավային Դորբուջա 97
 Հարավային Մակեդոնիա 97
 Հին Ջուղա 7
 Հիրճ 67
 Հյուսիսային Կովկաս 10
 Հյուսիսային Մակեդոնիա 97
 Հունաստան 96
 Դաբախ, տե՛ս Ալեքսանդրյան ալգի
 Դազախ 93
 Դարաբաղ 93
 Դարաքիլիսա 51, 52
 Դարաքիլիսե տե՛ս Դարաքիլիսա
 Մագրուկ (գյուղ) 13, 22
 Մանագլերտ 53
 Մանդան 75
 Մարաշ 61
 Մարսել 103
 Մարսելիա տե՛ս Մարսել
 Մեծ Բրիտանիա 42, 96, 97, 100
 Միջագետք 51

Միջին Ասիա 41
 Միերի բլուր 17
 Մշո դաշտ 81, 85
 Մոլլա Հասան (գյուղ) 46, 51
 Մոկս 66
 Մոտկան 53
 Մուշ 77
 Մուսա լեռ 77
 Յալգուզ աղաջ 76
 Նաբաթ 76
 Նախիջևան 93
 Ներքին (թաղամաս) 66
 Նոր Բայազետ 60
 Նոր Ջուղա 7, 8
 Նորդուզ 66
 Շահպաղ 106
 Շահպանդար (ղիթթ) 70
 Շամշադին, տե՛ս Տաուշ
 Շապին Գարահիսար 77
 Շատախ 59, 65-67, 77
 Շիրվան 106
 Շիրակ 93
 Շուշանց 69
 Չեխոսլովակիա 91
 Չեռնոգորիա 96
 Պատմոս 53
 Պարսկաստան 7-9, 24, 38, 47, 60, 84, 93, 95, 101, 107
 Պետրոգրադ (1914 թ. օգոստոսից) 97, 99
 Պոլիս տե՛ս Կ. Պոլիս
 Պոլոս-Պետրոս 64

Ջրաղաց (թաղամաս) 66
 Ջուլֆա, տե՛ս Ջուղա
 Ջուղա 52, 108
 Ռումինիա 91, 97
 Ռուսական կայսրություն 3, 42, 45, 81, 85, 87, 91, 99, 101, 102, 107
 Ռուսաստան տե՛ս Ռուսական կայսրություն
 Ռևանդուզ 59
 Ս.Պետերբուրգ (մինչև 1914 թ. օգոստոս) 97
 Սահակ բեյ (թաղամաս) 37, 70
 Սասուն 4, 13-16, 21, 77, 81
 Սարայ 21, 46, 51-54, 64, 74
 Սարիղամիշ 47, 49-51, 54, 55, 59, 71
 Սեբաստիա 61
 Սերբիա 96
 Սիս 38
 Սիվտկնա 66
 Սիրիա 41
 Սիփան 17
 Սյունիք 93
 Սովետական Հայաստան տե՛ս Խորհրդային Հայաստան
 Սովետական Ռուսաստան տե՛ս Խորհրդային Ռուսաստան
 Սպահան 7
 Սուրբ Բարդուղեմիոս 24

Սուրբ Գրիգոր 32, 35
 Սուրբ Խաչ 18
 Սուրբ Հակոբ (թաղ) 23
 Վան (քաղաք) 12, 13, 16-18,
 21, 25, 29, 30-35, 37-39, 41, 43,
 44, 48, 51, 52, 56, 60, 68, 70,
 72-75, 78, 80-84, 86, 92-94
 Վան (նահանգ) 4, 7, 10, 16-20,
 47, 53, 62, 63, 66
 Վանա լիճ 10, 17, 19
 Վանի վիլայեթ, տե՛ս Վանի
 նահանգ
 Վանա ծով, ծովակ տե՛ս Վա-
 նա լիճ
 Վասպուրական 4, 17, 18, 25-
 27, 29, 31, 61-63, 72, 78, 79, 85,
 88, 103
 Վարազ (լեռ) 17, 76, 77, 106
 Վարազ (վանք) 20, 21, 24, 76
 Վենետիկ 20
 Վերին թաղամաս 66
 Վրաստան 93
 Տաղվերան 77
 Տաճկահայաստան տե՛ս
 Արևմտյան Հայաստան

Տաճկաստան, տե՛ս Օսման-
 յան կայսրություն
 Տառչ 99
 Տիգրանակերտ 61
 Տիգրիս 66
 Տրապիզոն (նահանգ) 77
 Տրապիզոն (քաղաք) 61
 Յարական Ռուսաստան տե՛ս
 Ռուսական կայսրություն
 Ուրմիա 51
 Ուրֆա 77
 Փոքր Ձեյթուն, տե՛ս Շատախ
 Քաղաքամեջ 17, 18, 22-24, 64,
 74, 78, 79
 Քանան 87
 Քասան 54
 Քեսքնի 75
 Օլբի 49
 Օսմանյան կայսրություն 7,
 24, 25, 41-44, 96, 97, 101, 105
 Օսմանյան պետություն տե՛ս
 Օսմանյան կայսրություն
 Օրգով 82
 Ֆրնտրճազ 77
 Ֆրանսիա 96, 100

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	3
Հեղինակի առաջաբանը	7
Արճակ գյուղի տեղագրությունը	10
Վան քաղաքն ու իր արվարձանները	17
Վարագա վանք	20
Մի անլուր դավաճանություն	32
Օսմանյան սահմանադրություն	42
Եվրոպական ընդհ[անուր] պատերազմը	45
Վան քաղաքի տազմապը և դիմադրելու պատրաստությունը՝ դիմագրավելու Օսմանյան պետության ոտնձգություններին և ինքնապաշտպանությունը	61
Շատախը և իր տեղագրությունը	66
Ընդհարում Ավոյի դարում	70
Հերոս Վան քաղաքի էվակուացիան	85
Կամավորական շարժումը Կովկասում	92
Վասպուրականի ժողովրդի կենցաղը	103
Տեղեկություններ Շահ Աբասի մասին	107
Անձնանունների ցանկ	109
Տեղանունների ցանկ	115

Եղիշե Բուրանյան

ԻՄԱՆՅՅԱԼԻ ՀՈՒՇԵՐԻՑ.

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ

Егише Буранян

**МОИ ВОСПОМИНАНИЯ О ПРОШЛОМ
ТРАГЕДИЯ ВАСПУРАКАНА**

Համակարգչային ձևավորումը՝ Ն. Աղամյանի
Համակարգչային շարվածքը՝ Արմեն Բուրանյանի
Տպագրիչ՝ Լ. Մուրադյան

Ստորագրված է տպագրության 20.06.2013 թ.:

Տպաքանակը՝ 120 օրինակ:


**ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՎԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ИСТОРИИ НАН РА
INSTITUTE OF HISTORY OF NAS RA**

ՀՀ, 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4

РА, 0019, Ереван, просп. Маршала Баграмяна 24/4

24/4, Marshall Baghramyan Ave., 0019, Yerevan

<http://www.academhistory.am>



[1000pp.]

ԳԱՄ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0269388

[1000yr.]

ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0269388